



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





ՅԱՐԱՒԹԵԼԻ ԵՎԱՅԵԸ

зала

шкафъ

полка №

# ԿՈՐՏԱԿՈՒԾ ՍԵՐ

Ա Ե Պ Ի Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԿՐԵՇ

Թ Բ Ֆ Լ Ի Ս

Կ. Մարտիրոսյանի տպարան || Տից. Կ. Մարտիրօսյան  
Օբելիսկական պող. 1-2.

1902

ОТДЕЛ  
НАЦИОНАЛЬНОЙ ЛИТЕРАТУРЫ

Нарин  
обр. 22

19 NOV 2011

СИРИЯ ФРН 600 зв.

Арм.  
2-1231а

2-1231а

891.99

б-58

# ԿՈՐՏԱՎՈՒՄ ՍԵՐ

Վ Ե Պ Ի Կ

—•••••—

ИНВ. № 18397

Թ Բ Ֆ Լ Խ Ս

Կ. Մարտիրոսյանի տպարան գլ. Կ. Մարտիրոսյանց  
Օբելիանովսկա պլ., հ. № 1-2.

1902



08.04.2013  
100 VOLUME

28612

Дозволено цензурою. Тифлисъ, 2-го апреля 1902



4005-5-67

I.



արնանը, 189. թուականին,  
Արա Գալստեանն աւարտեց  
NN վարժարանը:

Արան՝ մեր գրքի հե-  
րոսը, մի համեստ ընտա-  
նիքի զաւակ էր: Նրա հայ-  
րը վաղուց վախճանուել էր:  
Մայրը՝ տիկին Սրբուհին,

լինելով կրթւած կին, բոլոր զաւակներին էլ տուեց  
ուսումնարաններ: Արան ամենամեծն էր: Նա բաւա-  
կանին ընդունակ և սուլք յիշողութեան տէր էր: Դեռ  
փոքք հասակից նա ձգտում էր դէպի լաւը, հետե-  
ւում էր իրենից մեջերի լաւ գործերին: Ոչ մի դա-  
սարանում չըմնաց շնորհիւ իւր աշխատամիրութեան:

Քանի նա գտնուում էր դպրոցական չորս պա-  
տերի մէջ, նոտած աշակերտական նստարանների  
վրայ, նրա միակ փափազն էր աւարտել դպրոցը: Եւ  
երբ վերջին ամիսները մօտեցան, նրա ձգտումները  
աւելի հեռու գնացին: Երազում էր նա իր աշխատա-

«սուրողենտ» լինելու մասին, մասնաճիւղ էր ընտրում և ծլագրներ կազմում: Բայց, աւաղ, երազը մնաց ելազ, ծրագրները խորտակւեցան և խեղճ լրան մնաց առանց բարձր կրթութիւն ստանալու: Ի՞նչ էր խոչնդու հանդիսանում այդ բանին: Եռանդը, ձգտումը դէպի բարձրը և մտաւոր ընդունակութիւնները վսու էին նորա մէջ: Հապա ինչն էր, ինչը, որ նորան կանգ առնել տուեց: —Այդ խոշնդուը նիթականն էր, որից զուրկ էր Սրա գալրւտեանը: Նա մի քաջ զինուոր էր, կանդնած կոռու դաշտում սուանց զէնքի: Դիռ դպրոցում նա շատ նեղ աշխարհայեցքրվ էր նայում «բարերար» զըտնելու վրայ: Նա լսել էր, որ բարեսիրտ հարուստները յանձն են սունում ուսումնածարաւ երիտասարդներին յագեցում սալ: Բայց չըզիտէր, որ կեղծաւոր բաղդար շատ քչերի երեսին է ժպտում. չըզիտէր, որ մարդիկ հետզետէ փողը աստուածացնում են:

Միայն Սրա Գալստեանը չէր, որ այդ դրութեան մէջ էր. կախն շատ արժանաւոր, բանիքուն երիտասարդներ, որոնք զիշեր ցելեկ այս կամ այն հարուստի դուռն էին բաղխում, բայց բացող չըկար:

Աւարտելոց յետոյ Սրան սկսեց բարերար փընտրել: Ամեն մի ծանօթի, բարեկամի հանդիպելիս, նրա առաջին հարցը լինում էր — «Չըզիտէք, արդիօք, չէք ճանաչում, կամ չէք լսել մի այնպիսի անձնաւորութեան մասին, որ բարերարութիւն է անում, ուսման է ուղարկում»: Ընկերնելից մէկը մատնացոյց արեց

մի հարուստ վաճառականի, որ ըստ նորա, «բարերար» անունն էր վաստակել:

Մի օր Արան վեցրեց առեստառը և դիմեց վերոիշեալ պարոնի տունը: Երկար փնտղելուց յետոյ, վերջապէս դժուաւ: Նա կանգնեց գռան առաջ և երկմըտեց, չէր վստահանում զանգահարել. մերթ ձեռքը տանում էր դէպի զանգը. մերթ յետ քաշում: Ո՞հ, ի՞նչ մտքեր էին անցնում նրա զիլսով: Առաջին անգամն է, որ պէս ոք է արժանանայ մի հարուստի տուն ոտք դնել, խօսել նրա հետ և օդնութիւն խնդրել: Նա լսել էր, որ շատերն ոչ միայն մերժում են, այլև անպատիւ կերպով, վիրաւորելով և հայհոյելով այդ «քաղաքավարի աղքատներին» (ըստ նոյցա) դուրս են վանտում: «Ո՞հ, Տէր իմ Աստուած, տուր ինձ կարողութիւն և լեցու, որ կարողանամ առանց երկընչելու և շփոթուելու խօսեմ. ներշնչիր այս հարստին մարդասիրական զգացմունք...» մտածում էր Գալստեանը կանգնած: Կերջապէս նա զանգահարեց: Դուռը բացուեց և ներսից յայտնուեց ծառան:

— Ո՞ւմ էք կամենում, հարցրեց նա:

— Պարօնը տանն է, դիմեց նրան Գալստեանը:

— Ո՞վ էք, ի՞նչ գործ ունիք, հարցրեց ծառան արհամարհական ոճով:

—Այդ ձեզ չէ վերաբերում, միայն խնդրեմ իմաց տուէք, որ մի երիտասարդ ցանկանում է նրան տեսնել շատ կարևոր գործի համար:

Ծառան ներս մտաւ սենեակ և մի փոքր յետոյ դուրս գալով, ասաց.

— Տանն է, համեցէք վերև, մտէք կարինէտը և սպասեցէք մի փոքր:

Գալստեանն անհամարձակ քայլերով սկսեց բարձրանալ մաքուր, մոժած աստիճաններով։ Դառան բաց արեց ձախ կողմի դուռը և ներս հրաւիրեց այցելուին։ Արան ներս մտաւ մի տեսակ սարսուռ զգալով։ Կարինէտը շքեղ զարդարուած էր։ Պատերի վրայ կախ էին արած զանազան նկարներ, իսկ դռներին և պատուհաններին՝ գունաւոր վարագոյններ։ պատի տակ դրած էր պարոնի գրասեղանը, վրան խառնիխուռն կերպով դարսած զանազան իրեղէններ—թուղթ, թանաք, գրիչ, հաշուէմատեաններ, հաշուի «չոտքը» ծխախոտի արկղիկներ և այլն։ Հենց առաջին հայեացքով սեղանի անկարգ դասաւորութիւնից նկատելի էր, որ այդ պարոնը, չը նայելով նրա գրպանի հարստութեան, հոգւով ու մըտքով աղքատ էր։ Սեղանի մօտ անկիւնում, գրած էր երկաթեալ մեծ պահարան, որի մէջ պահում էր պարոնի կուռքը—փողը։ Գալստեանը չը վստահացաւ նրտել. կարծես, ամեն մի անշունչ իր լեզու ստացած, գուռում էր նրա վրայ։ «Թուրս, դուրս»։ Նա ոտի վրայ կանդնած մնաց և սպասեց պարոնի դուրս դալուն։

**Ահա** միջի դռնից ներս մտաւ մի հաստափորադա: Նա միջահասալ էր, պարարտ, հատափիզ, մեծագլուխ, հետեասկէս հաստառղեղ և հաստախելք։ Նրա գէմքի արտայտութիւնը լիշեցնում էր Պարոնեանի նկարաղբած այն մարդուն, որն ուզում է

փուշտալ, բերանը բաց է արել, պոօշները հաստացըրել, քիթ ու պուռնզը տնկել, բայց չէ կարողանում փուշտալ, ու մնում է այդ դրութեան մէջ։ Արան սարսափեց. նա զղաց իսկ ներս մտնելը։ Աղայի արտաքինը անյաջողութիւն էր գուշակում։ Արան խոնարհ կերպով զլուխ տուեց, ասելով. «Որա Գալստեան»։

— Ի՞նչ, Ալիսինենց Գալստի տղէն խօմ չիս, եղաւ աղայի առաջին հարցը։

— Ոչ, պարոն, ես....

— Լաւ, լաւ, ով որ իս, բարով իս էկի, ի՞նչ իս ուզում, կըլնի գուրձ իս ուզում, վուրթի։

— Ոչ, մհծապատիւ պարոն, ես այլ խնդիր ունեմ ձեզ մօտ, որ յուսով եմ կը կատարէք։

— Ասա, տեսնեմ, ասաց աղան, նստելով իր գրասեղանի մօտ։

— Բարձրապատիւ տէր, ես մի չքաւոր հայ ընտանիքի զաւակ եմ։ Այս տարի աւարտեցի դպրոցը. բայց չեմ բաւականանում ստացածս կրթութեամբ։ Իմ մէջ եղած ուսման խանդը, ծարաւը մղում են առաջ, դէպի համալսարան՝ բարձրագոյն կրթութիւն ստանալու։ Դիբաղլարար, այդ նպատակի համար չունեմ ոչ մի կոտէկ։ Եւակ է օգնութեան ձեռք մեկնում ինձ նման երխտասարդներին, եթէ ոչ դուք և ձեղ նման բարի անձինք։ Ուստի այժմ դիմելով ձեղ խնդրում եմ ի սէր գիտութեան միջոց տուէք ինձ ուսումս շարունակելու, բարերար հանդիսացէք ինձ։

Պարոնի դէմքը հետզհետէ խոժոռանում էր. նկատելի էր, որ այս խնդիրը վատ ազգեցնրա վրայ: Առաւոտ վաղ—վաղ զալ և այդպիսի մի խոշոր գումար հայցել, միթէ իրաւացի է: Նրա կոպէկ-կոպէկ ժողոված, վաճառքի ժամանակ խարած, սուտ երգումներով կեղեքած հազարներից միթէ կարելի է հարիւրներ ծախսել, այն էլ ոչ թէ իր համար, այլ ուսման համար: Դա նշանակում է ըստ նորա անխելքութիւն անել, փողերը ջուրն ածել:

—Որ աւարտել ես հոգեոր շկօլէն, ինչի տէրտէր չի դառնում. էնդանց դուս էկածները դիմտէրտէր պիտի դառնան կամ վարժապետ: Թէ չէ ուսումս որն է, համասարանս ո՞ն է, խօսեց նա:

—Պիտէք, պարոն, մարդիկ բոլորն էլ միւնոյն ձգտումները չեն ունենում, մէկը ձգտում է քահանայութեան, միւսը՝ ուսուցչութեան, ես էլ ձգտում եմ ուսումս շարունակեմ, ստացածս քիչ է:

—Լաւ, քեզ ո՞վ է ասում ազահութիւն անիս, շատ բան իս ուզում, միս իլ շատ բաներ իմ փեքը անում, ամա որ չկայ: Չունիս, հերիք արի նրանով, ինչ որ ունիս. ախր մարդ լինը դեօրա պտի ոտները ձգէ, թէ չէ ու միս ինչ պարտական իմ:

—Բայց, պարոն, ես չեմ ձգտում լաւ ուտել, խմել կամ պալատներ ունենալ, այլ ձգտում եմ դէպի բարոյականը, լաւը, ուզում եմ մարդ դառնամ և գործեմ ընդհանրութեան համար:

Գալստեանի վերջին ճառաբանութիւնը վիրա-

ւորեց աղայի ինքնասիրութիւնը, որ արհամարհական կերպով նայելով նրա վրայ, ասաց.

—Ի՞նչ է, ուսում առնիս, մարդ դառնամս. բաս չիս մարդ չիմ էլի, որ ուսում չունիմ, թէ որ մարդ չիմ, ուր ես էկի ու աղաչանք անում, որ քեզ մարդ դարձնիմ: Հա, հա, հա, ձեր ուսում առածները չին այ, վուր քաղցած թրեւ են գալի. Էս վախտուայ ուսում առածները վագիցը վադ ին. գնում ին պետերբուրխները, մօսկովխները, թրեւ ին գալի, թրեւ գալի ու գալի էստի շառլատանութիւն անում: Զէ, ախակէր, չէ, վուդ չունիմ, գնա ուրիշն խնդրէ:

Նա հետզհետէ տաքացաւ ու զարոյթից կարմրեց: Նրա ձայնը ուժեղացաւ, և, կարծես, հնչում էր մի մեծ դատարկ գինու լարասից:

Արան շփոթուեց աղայի բարկութիւնից: Նրա յայտնած կարծիքները յուղեցին Գալստեանիս, որն իբրև պաշտպան գիտութեան խօսեց համարձակ, քաջ գիտենալով, որ իղուր է այդ պարագիտից «բարերարութիւն» յուսալը:

—Պարոն, մենք ինչ մեղաւոր ենք, որ շատերն ի չարն են գործ գնում բարերարութիւնը: Դոքա բացառութիւն են: Այն, այդպիսիները գայթակղութեան պատճառ են դառնում իրանց վատ ընթացքով: Բայց այդ չէ նշանակում, որ ուսումը վատ բան է: Ընդհակառակն, գիտութիւնը կրթում է մեզ, ազնւացնում մեր զգացնունքները, ծանօթացնում է մեզ ամբողջ աշխարհի հետ: Ուսումը մեր հոգու, մտքի կերակուրն է, և անհրաժեշտ է ամեն մի անհատի:

Պարոնի դէմքը հետղհետէ խոժոռանում էր. նկատելի էր, որ այս խնդիրը վատ ազգեցնրավայ: Առաւոտ վաղ—վաղ գալ և այդպիսի մի խոշոր գումար հայցել, միթէ իրաւացի է: Նրա կոպէկ-կոպէկ ժողոված, վաճառքի ժամանակ խարած, սուտ երդումներով կեղեքած հազարներից միթէ կարելի է հարիւրներ ծախսել, այն էլ ոչ թէ իր համար, այլ ուսման համար: Դա նշանակում է ըստ նորա անխելքութիւն անել, փողերը ջուրն ածել:

—Որ աւարտել ես հոգեոր շկօլէն, ինչի տէրտէր չիս դառնում. էնդանց դուս էկածները դիփտէրտէր պիտի դառնան կամ վարժապետ: Թէ չէ ուսումս որն է, համլասարանս որն է, խօսեց նա:

—Թիտէք, պարոն, մարդկի բոլորն էլ միւլնոյն ձգտումները չեն ունենում, մէկը ձգտում է քահանայութեան, միւսը՝ ուսուցչութեան, ես էլ ձգտում եմ ուսումս շարունակեմ, ստացածս քիչ է:

—Լաւ, քեզ ով է ասում ազահութիւն անիս, շատ բան իս ուզում, իս իլ շատ բաներ իմ փիքը անում, ամա որ չկայ: Չունիս, կերիք արի նրանով, ինչ որ ունիս. ախը մարդ լհերի գեօրա պտի ոտները ձգէ, թէ չէ ու իս ինչ պարտական իմ:

—Բայց, պարոն, ես չեմ ձգտում լաւ ուտել, խմել կամ պալատներ ունենալ, այլ ձգտում եմ դէպի բարոյսկանը, լաւը, ուզում եմ մարդ դառնամ և գործեմ ընդհանրութեան համար:

Պալստեանի վերջին ճառաբանութիւնը վիրա-

ւորեց աղայի ինքնասիրութիւնը, որ արհամարհական կերպով նախելով նրա վրայ, ասաց.

—Ի՞նչ է, ուսում առնիս, մարդ դառնան. բաս չիս մարդ չիմ էլի, որ ուսում չունիմ, թէ որ մարդ չիմ, ուր ես էկի ու աղաչանք անում, որ քեզ մարդ դարձնիմ: Հա, հա, հա, ձեր ուսում առածները չին այ, վուր քաղցած թրե են գալի. Էս վախտուայ ուսում առածները վադիցը վադ ին. գնում ին պետերբուրիները, մօսկովները, թրե ին գալի, թրե գալի ու գալի էստի շառլատանութիւն անում: Զէ, ախակը, չէ, փուղ չունիմ, գնա ուրիշին խնդրէ:

Նա հետղհետէ տաքացաւ ու զարովթից կարմրեց: Նրա ձախնը ուժեղացաւ, և, կարծես, հնչում էր մի մեծ դատարկ զինու կարասից:

Արան շփոթուեց աղայի բարեւութիւնից: Նրա յախտնած կարծիքները յուղեցին Գալստեանին, որն իբրև պաշտպան գիտութեան խօսեց համարձակ, քաջ գիտենալով, որ իդուր է այդ պարագիտից «բարերարութիւն» յուսալլ:

—Պարոն, մենք ինչ մեղաւոր ենք, որ շատերն ի չարն են զործ գնում բարերարութիւնը: Գոքա բացառութիւն են: Այն, այդպիսիները գալթակղութեան պատճառ են դառնում իրանց վատ ընթացքով: Բայց այդ չէ նշանակում, որ ուսումը վատ բան է: Ընդհակառակն, գիտութիւնը կրթում է մեզ, ազնւացնում մեր զդաց մունքները, ծանօթացնում է մեզ ամբողջ աշխարհի հետ: Ուսումը մեր հոգու, մտքի կերակուրն է, և անհրաժեշտ է ամեն մի անհայտի:

Եթէ զիտութիւնը չէ կարողանում իր դրօշմը դնել շատ երխտասարդների վրայ, այդ դէպքում մեղաւոր են անբարեպատեհ հանգամանքները:

— Լաւ, լաւ, վուրթի, տենում իմ, վուր դուռ խելօք տղայ իս, ընդհատեց աղան, արի իմ մաղադինում պրիկաշչիկ կանգնի, քիզ լաւ ուռճիկ կուտամ, արի, արի, վաճառականութին սովրի, մարդ դարձիր, թէ չէ ուսումը քիզ թիքա չի տայ:

— Ոչ, պարոն, ևղարկեցէք ինձ ուսում ստանալու, մի թողէք, որ այդ կայծը հանգչի իմ մէջ, խնդրեց Սրան:

— Դի՛հ, հիմի դուն դիղիս, ասաց աղան կանգնելով, թէ ուղում իս, արի, լաւութին անիմ դուրձ տամ, թէ չէ լիս փուղ չտնիմ, Աստուած քիզ հետ:

Խեղճ Սրա, կեանքում հէնց առաջին քայդ անյաջող: Նա դուրս ելաւ և զլխիկոր, անիծելով իր բաղդը, վերադարձաւ տուն:



## II.

Այս փորձը շատ վատ ազդեց Գալստեանի վըրայ: Նա իր չափով չափելով, իւր զզացմունքները փնտրում էր և հարուստ աղաների մէջ. Բայց իրականութիւնը սկսեց հակառակի ցոյց տալ:

Այնուհետև նա սկսեց ուսուցչութեամբ պարապել: Նա կրթուած՝ և հարուստ ընտանիքներում դասեր ստանձեց: Ամսական բաւականին վերցնում էր և ապահով կերպով ապրում: Բացի այդ նա սկսեց ընթերցանութեան ժամերն աւելացնել: Անընդհատ կարգում էր հայ և ուսւ լեզուներով զրքեր, քննադատութիւններ, և ինքն էլ զրում էր: Նա ըմբռնել էր ինքնակրթութեան և զարգացման մեծ նշանակութիւնը: Միբում էր կարդացածներից արտազրել ընտիր հատուածներ, մտքեր և աֆորիզմներ: Նա բաւականին իդէալիստ էր.—ամեն բանի մէջ փենտրում էր կամ իդէալ, կամ որոշ չափով ազնւութիւն:

Մի օր նա, ըստ իւր սովորութեան, պարապմունքը վերջացնելուց յետոյ, դուրս ելաւ զբանելու: Նրա սիրած զբօսատեղին Բատանիկական այգին էր: Բնութիւնը իւր հրաշալիքներով սիրահար էր դարձըրել Սրային: Առուների խոխոջունը, թռչունների ծլվլոցը, զոյնզգոյն, հոտաւէտ ծաղիկները մի տեսակ առանձին հրճուանք էին պատճառում նրան:

Գնում էր նա լուռ և զլխիկոր: Այդ միջոցին

մէկը բռնեց նրա թւելից, որ և նա - սթափուեց մը-  
տածունքներից: Դա չրաչեան էր, որ պատահաբար  
հանդիպեց նրալին: Նա տեսնելով վերջինիս մտաղըաղ,  
հետաքրքրուեց իմանալու պատճառը:

— Բարեւ, սիրելի Արա, ի՞նչ է պառահել, ան-  
չաշողութիւն եմ գուշակում:

— Ոչինչ, չրաչեայ, ի՞նչ պիտի պատահի, պա-  
տասխանեց նա կեղծ ժպիտով:

— Ո՞ւր ես գնում:

— Այդի, մի փոքր զբօսնելու:

— Գնանք, միասին, ես էլ աղատ եմ:

— Աւելի լաւ, գնանք:

Արդէն նրանք բարձրանում էին սարը: Արեւ  
թեքւել էր գեպի արևմուտը և իր երեկոյեան վար-  
դագոյն ճառաշալթները ուժւել էր Կովկասեան լեռ-  
ների և հովիտների վրայ: Երիտասարդները կանդ  
առան հանգստանալու:

— Նայիր, Այտ, ի՞նչ գեղեցիկ տեսաշան է, տես,  
երեւում են Կովկասեան լեռների ձիւնագատ դաշլթ-  
ները:

— Է՞հ, ի՞նչ արած, որ մարդկանց սրտերը քա-  
րացել են:

— Չասացի, թէ մի բան պատահել է քեզ, էլ  
ինչու ես թագցնում, առա իմանամ:

— Չեմ ցանկանում լիշել այն դւին, որի պատ-  
ճառով և աչքս վախեցաւ:

— Ոչինչ ասա, տեսնեմ, այդ ի՞նչ դւ է:

— Լաւ, կը պատմեմ, դեռ մի փոքր շրջենք,  
ասաց Արան:

Նոքա զբօսնելով մտան այզի, որտեղ կար բա-  
ւականին ժողովուրդ: Նոցա ընկերներից մի քանիսն  
էլ այնտեղ էին ծանօթ օրիորդների հետ:

— Պէհ, սկսիր պատմել, ասաց չրաչեան:

— Ուրիշ ժամանակ կը պատմեմ, այսօր տրա-  
մադիր չեմ:

— Ո՞չ, ո՞չ, շատ եմ հետաքրքրում, հիմայ  
պատմիր:

— Ուրեմն եկ մտնենք ծաղկանոց, այնտեղ կը  
պատմեմ:

Նոքա անցնելով ժողովրդի միջից, հասան ծաղ-  
կանոց: Ծաղկանոցի դռան մօտ կանդնած էին նո-  
ցա ընկեր Վարդանը միջահասակ մի թուխ օրիորդի  
հետ, և Բարսեղը՝ նոյնակս մի օրիորդի հետ:

— Բարեւ ձեզ, պարոնաւք, ինչու էք մենակ,  
ասաց Վարդանը խորհրդաւոր ժպիտով:

— Բարեւ, բարեւ, պատասխանեցին Արան ու  
չրաչեան, հասկանալով Վարդանի միտքը:

— Արա, կարծեմ, դու ծաղկանոցի տոմսակ ու-  
նիս, խնդրեմ մեզ էլ ներս առաջնորդիր, ասաց նա:

Արան հանելով ծոցից տոմսակը և ցոյց տալով  
դոնապան ծառալին, ներս մտան: Վարդանը մօտե-  
ցաւ չրաչիալին և լրացին ու ասաց.

— Տղաւք, եկէք ծանօթացնեմ օրիորդների հետ,  
քէք քէֆներդ բաց ըլի, եկէք:

— Ճորհակաւութիւն, Առողջան, մի ոսժանուի ես

Նոյանից: Դու իս դարդ չունիս, բայի օրիորդներից,  
ասաց Արան:

— Ելի սկսեցիք ճգնաւոր ձևանալ, դուք աւելի  
էք սիրում դէյրաներին, քան ես:

Վարդանը այնպիսի մի ինքնապաշտպանողական  
ձևով արտասանեց վերջին խօսքերը, որ երիտա-  
սարդները ակամայից ծիծաղեցին:

— Բայ ներողութիւն, ցտեսութիւն, ասաց նա:

— Զը նեղանաս, Վարդան, մենք կատալ ա-  
րինք, աւելացրեց չըաչեան:

Ապա Արան սկսեց պատմել, թէ ինչես նա  
ներկայացաւ այն հաստափոր աղային, ինչ ձևով  
խնդրեց, և թէ աղան ինչ մտքեր յայտնեց ու մեր-  
ժեց: Հըաչեան լսելով ամրողը, բարձրաձայն ծի-  
ծաղեց և ասաց.

— Մի ահագին կոմեգիա է տեղի ունեցել, հա, հա:

Արամի ծիծաղն էլ եկաւ:

— Ծիծաղիր, ծիծաղիր, քեզ համար ծիծաղելի  
է, իսկ ինձ համար ոչ:

— Ախը, սիրելիս, միթէ այդպիսիներից պէտք  
է խրտնես, յուսահառուես, գոնէ քելանից չէր  
սպասում. այժմ դիմիր աւելի լուրջ մարդոց:

— Ի՞նչ դիւրին է թւում քեզ այդ բանը, ո-  
րովհետեւ դու կողմանակի անձնաւորութիւն ես. հապա-  
մի գնա, կանդնիր մի այդպիսի մարդու առաջ և  
թող նա իր զարհուրելի հայեացքը ձգէ վրադ, թող  
անպատուէ քեզ, արհամարհէ ուսումը և գիտութիւնը

և ծաղրելով ճանապարհ ձգէ, այն ժամանակ խօսիր:  
— Ո՞վ որ դու ինքդ ասացիր, որ նա տգէտ էր,  
ուրեմն և ինչո՞ւ ես պահանջում տղէտից գիտու-  
թիւն, հասկացողութիւն. նա խօսել է իր դարձաց-  
ման համեմատ: Եւ դա շատ բնական է: Այժմ դի-  
միր ուրիշների:

— Ա՛յ, չըաչեայ, ըրգիտես, թէ ինչեր է ցան-  
կանում ուսումնատենչ երիտասարդը, թէ ինչ իդէա-  
լական աշխարհ է պատկերանում նրան: Եւ յան-  
կարծ հակառակ նրա սպասածի, հէնց առաջին քայ-  
լափոխում դիմագրում են նրան. այդ միւսոյն է,  
թէ ըորբոքուած կրակի վրայ ջուր ածել:

— Գիտեմ, Արա, հասկանում եմ, բայց չէ որ  
ամեն ինչ աստիճանաբար է կատարուած:

Այսպէս խօսելով և վիճաբանելով նրանք զբու-  
նում էին ծաղկանոցում: Արեգակը վաղուց մայր էր  
մտել և օրն սկսում էր մթնել: Փողովուրդն արդէն  
ցրուել էր: Միայն Վարդանն ու Բարսեղը օրիորդ-  
ների հետ առանձնացած՝ նստած նստարանների վր-  
այ, կատակներ էին անում, օրիորդներին զւար-  
ճացնում և ի վարձատրութիւն՝ արժանանում նոցա-  
սիրակին հայեացքներին:

Մեր երիտասարդներն էլ դիմեցին դէպի տուն:  
Նոքա անցան վերովիշեալ տեղով: Վարդանը նկատե-  
լով նսցա, իր խօսակցութեան ձեր փոխեց և աւելի  
լուրջ դիրք բռնեց:

— Տնին էք զնում, հարցրեց նա:

— Այն, պատասխանեց չըաչեան:

— Ինչու էք շտապում, հիմա է լաւ ժամանակը մաքուր ող շնչելու:

— Մենք բաւականանում ենք, որքան որ շընչեցինք:

Ճանապարհին էլ նոքա վիճաբանում էին: Հրաշեան աշխատում էր խրախուսել ընկերոջը: Նա եկաւ նոյց տուն, բաւականին երկար մնաց և թէ խմելոց յիտոյ, գնաց տուն:

Այնուհետև Արա Գալստեանը շատ հարուստ անձանց դիմեց, բայց իզուր: Ոմանք պատճառաբանում էին, որ ունեն ստիպենդեանտներ, միւսները մերժում էին ասելով, թէ ներկայումս դժուար է հաւատ ընծայել երիտասարդներին, ծախսելով նոյց վրայ հարիւրներ: Ջատերն էլ, որոնք «բարեգործ» անունն էին վաստակել, պատուհանից գլուխը դուրս հանելով և Գալստեանին տեսնելով՝ ձեռքին թղթի փաթեթ, նախազդում էին, որ խնդրատու է, հրամայում էին ծառավին ներս չնդռնել, ասելով, որ պարոնը տանը չէ կամ քնած է: Մի խօսքով, կարծես, մարդկանց սրտերը քարացել էին, զգացմունքները բթացել և խղճի ու մտքի ականջները խլացել Արայի դրութիւնը չմըռնելու և նրա խընդիրը չը լսելու համար:

Տեսնելով, որ այլ ևս իզուր է յուսալ ներկայումս ուստումը շարունակելու, նա դադարեց հարուստների դռները բաղիւել և սկսեց ինքնակլիթեամբ պարապել, մինչեւ որ վաղ թէ ուշ կը բացուէր նրա համար համալսարանի դուռը: Հացի

Խնդիրը ստիպեց նրան ունենալ նաև աշակերտները

Յաճախ նրա մօտ հաւաքւում էին ընկերները և անց կացնում ուրախ ժամեր: Նոքա վիճաբանում էին առօրեայ հարցերի մասին, կարդում էին ինք-նուրոյն ուտանաւորներ կամ արձակ զրուածքներ, հակաճառում էին, ապա երդում էին, Արան նւագում էր ջութակի վրայ, պարում էին, այսպիսով օգտում էին թէ մտաւորապէս և թէ ֆիզիքապէս:

Գալստեանը վերին աստիճանի պարզ և ճշմարտախօս երիտասարդ էր: Եւ որքան որ պարզ էր, նոյնքան էլ խորագէտ և խորամանկ, որ է ներկայ պօլիտիկան: Զատերը նրան յարգում էին և սիրում: Բայց մի քանիսներն էլ, որոնց թերութիւնները նա երգիծաբանորէն նկատում էր, լարուած էին նրա դէմ, լցուած նախանձի և դրպարտութեան ոգով: Նրա ամենամեծ թերի կողմն այն էր, որ նա չունէր «կամքի ուժ»: Նա, լինելով չափազանց զգացյուն, ընկճռում էր շատ շուտ, որ իհարկէ բընական է երիտասարդական հասակին և մանաւանդկեանքի շէմքին նոր ոտք դնող մի երիտասարդի, որ գեռ չէ մազուել կեանքի մաղով, չէ ընկել կեանքի ալեխառն հոսանքի մէջ, չէ ենթարկուել փոթորիկների, որոնք աստիճանաբար ներշնչում են մարդուն կամքի ուժ և փորձառութիւն:



III

Անցել էր մի բոլորակ տարի այն օրից, երբ Գալստեանը վիրջին հրաժեշտը տալով գլուխին, աւրաման վլայականը ձեռքին այս ու այն հարստի դուռն էր բաղխում: Տեսանք, որ ոչ մի տեղից նրան օդնող և հովանաւորող չեղաւ, այլ միմիայն դատարկ լուսեր տալով ճանապարհ էին ձգում: Այս ամառ էլ նա շատ աշխատեց, բայց բաղզը, կարծես, ընդմիշտ թեքել էր իր երեսը նրանից: Արքան որ ժամանակը սահում, անցնում էր, այնքան աւելի փողը կապում էր մարդոց սրտերի հետ անքակտելի կապերով: Վմենահարուստ մարդն անդամ, որի հազարները իրենց տոկոսներով տնքում էին բանկերում, մի քանի նոր կոպէկներ աշխատելու համար ամենավատ միջոցներն էր գործ դնում:

Գալստեանը կանոնաւոր կերպով պարապում էր աշակերտների հետ և ընթերցանութեամբ: Բայց մտաւոր անընդհատ լարումը, կարծես, վատ էր աղբում նրա վրայ: Մինչեւանդամ սկզբում փախչում էր զանազան զուարձութեան տեղերից, երեկոյթներից և այլ տօնախմբութիւններից, որպէսզի դոքա ըլ շեղեն նրան իւր ճանապարհից: Բայց յուսահատութիւնը մի կողմից, ընկերների յորդորանքը միւս կողմից նրան առաջ քաշեցին:

Նա հրաշեալի և միւսների հետ սկսեց յաճա-

խել երեկոյթներ, պարահանդէսներ և այլ զուարձութեան տեղեր: Այսուղ զբազում էր գեղեցիկ օրիորդներով, որոնք հետզհետէ մռաւացնել տուին նրան համալսարանը: Բայց և պէտք է ասել, որ նա խորութիւն էր դնում նոցա մէջ: Նա խուսափում էր անպարկեցու օրիորդներից, ինչպէս ինքն անուանում էր «լաբուած» ներից: Նոյնիսկ շատ անդամ նոցա յայտնում էր իր հակակրանքը: Այդ բանն աւելի ցոյց տուեց մի մեծ երեկոյթում, որ կազմակերպել էին «գուրս կանգնած» մի քանի օրիորդներ:

Դիշերուաչ ժամի 11-ն էր, երբ նա ներս մտաւ Հրաշեալի հետ: Սրդէն հիւրերը (մեծ մասամբ երկսեռ մատաղ սերունդ) հաւաքուել էին: Այդտեղ էին և Սոկրատը, Վարդանը և միւս ընկերները: Հայկական երաժշտութիւնը նուագում էր, որի ձայնը միախառնուելով ընդհանուր աղմուկի հետ, դաշլիճը թնդեցնում էր: Ոչ մի կարգ, կանոն չը կար ժողովականների մէջ, գոռում, աղաղակ. նոյնիսկ օրիորդների բարձրաձայն ծիծաղը լսելի էր փողոցում: Յոզը, լցուած ծխախոտի ծխով և փոշիով, ճնշող և ապականիչ էր: Հրաշեան և Արան կամեցան թողնել և վերադառնալ տուն, բայց Սոկրատը խորհուրդ տուեց մնալ, հետաքրքրուելու համար, թէ որպիսի տիպեր կան այնտեղ, և թէ երեկոյթը իրօք ինչի է ծառայում: Մեր երիտասարդներն էլ, լսելով Սոկրատին, նստեցան մի անկիւնում և սկսեցին դիտել: Վարդանը մտերմաբար խօսում էր մի միջահասակ թուիս օրիորդի հետ, որ աչքի էր ընկնում իր գրի-

մատներով և ժպիտներով: Մի փոքր անցած նա մօս բերեց օրիորդին և ծանօթացը մեր երիտասարդների հետ: Ապա թեանց ակ նոյն օրիորդի հետ սկսեցին զրունել գաճիճում, մերժ մի պարոնի մօտենալով, մերժ օրիորդի:

Աղմուկը սաստկացաւ: Երաժշտութիւնը նուագում էր պարեր, իսկ միւսները պարում էին: Ամեն մի երիտասարդ և օրիորդ աշխատում էր ցոյց տալ իր ճարպիկութիւնը: Վարդանն էլ յետ չը մնաց միւսներից, նա պարեց նախ իւր խօսակից օրիորդի հետ, ապա ուրիշ շատերի:

Միւս կողմում միաժամանակ երգում էին կատարները տաքացած երիտասարդները, որոնց անախորժ և անձունի ձայները մարդու ջղերը գրդռում էին: Ուանք էլ բարձրաձայն կատակներ էին անում անվայել խօսքերով:

Մի քանի րոպէից յետոյ վերոլիշեալ օրիորդը մօտեցաւ Գալստեանին, նստեց մօտիկ, հարցնելով.

— Ինչո՞ւ էք այդպէս տխուր և լուս նստել, պարոն, դուք էլ պարեցէք: Միթէ եկել էք միայն վկայ լինելու մեզ:

— Ես զուարձանում եմ միմիայն երաժշտութիւնը լսելով և պարողներին դիտելով, պատահանց Գալստեանը սառնարիւն կերպով:

— Միթէ կարելի է ալդպիսի բան. խօսեց ու ըլորդը սազելի ժպիտով: Մի փոքր լուռթիւնից յետոց դարձեալ խօսեց.

— Տեսնո՞ւմ էք, ինչ ուրախ է անցում, Հա-

մարեա թէ գեռ այսպիսի երեկոյթ չի կախացել: — Այն, կատարեալ քառ է, հեգնեց Գալստեանը: — Ի՞նչպէս, հարցը օրիորդը, ըստ երեսոյթին չը հասկանալով նրան:

— Այսուեղ հաւաքուած են երեկոյթի հերոսները և հերոսուհիները, այդ պատճառով էլ աւելի խորհրդաւոր է դառնում:

— Գիտէք, օրիորդ, պարզն ասած, որքան որ անհամակրելի է այս երեկոյթը, բայց և նոյնքան տիպիկական է իւր մշտական այցելու մատաղ սերբնդով:

— Ասէք, ինդըմ, ի՞նչ է պակաս այսուհետ: Օրիորդ, երիտառարդ, երաժշտութիւն. ըռտէտը հիանալի սարքած:

— Ամենամեծ բանը պակաս է. ընդհատեց Գալստեան, դոքա երկորդական են:

— Այսինքն:

— Այսինքն չեմ ուզում անունը տալ, դուցէ սուր կերպարանք ստանալ մեր խօսակցութիւնը, ասաց Արան:

Օրիորդը չէր հասկացնում ոչինչ, այլ միայն ապշած աչքերով նայում էր խօսակցի երեսին: Եթէ նա իմանար, որ Արայի ասած բանը — պարկեշտութիւնն և բարյականութիւնն է, դուցէ սկսէր լուրջ կերպով, կեղծ ինքնասիրութիւնից և պատուասիրութիւնից դրդուած, բանակուիւ:

— Այսքանը կարող եմ ասել, խօսեց Գալստեանը, որ երեկոյթը կորցը է իւր նշանակութիւնը:

Յրեկոյթը մի տեղ է, որտեղ մատաղ սերունդը սիրաբանութիւններով է զբագլում և այդպիսով...

Դեռ խօսքը ըլ վերջացրած, անսպասելի կերպով մօտեցաւ մի օրիորդ պարելով, և զլուխ տալով Գալստեանին հրաւիրեց պարելու։ Սա մերժեց։ Օրիորդը երկրորդ պտուտը զորձելով դարձեալ զլուխ տուեց։ Արան դարձեալ մերժեց։ Վարդանը, որ ծափ էր տալիս, մօտեցաւ նրան, թեկից բռնեց և սուիպեց պարել։

— Ես քեզ ինչպում եմ, Վարդան, ինձ չստիպէք պարելու, տրամադիր չեմ, օրիորդ, ինչը իմ փոխարէն Վարդանի հետ պարէք։

Վարդանը տեսնելով ընկերոջ լուրջ արտայատութիւնը այլ ևս ոչինչ չասաց։ Օրիորդը կաքաւելով մօտեցաւ Վարդանին և մի քանի բովէ նրա զիմացը պարելուց լիսույ, զլուխ տուեց։ Վարդանը անմիջապէս սկսեց պարել տարօրինակ ձեւականութեամբ և շարժումներով։

Գալստեանը շարունակեց խօսել օրիորդի հետ, որի ընկերուհիներից մի քանիսներն էլ մօտեցան և մօտ նստելով սկսեցին լուռ ունկնդիր լինել։

Հրաչեան, որ մինչ այդ միւս սենեակում զրոյց էր անում պարանսերի հետ, մօտեցաւ Սրալին։ Վիճաբանող օրիորդն անմիջապէս դարձաւ Հրաչեան։

— Երեւի դուք էլ համամիտ էք ձեր ընկերոջ, պարոն։

— Ի՞նչ բանով, Հարցրեց Հրաչեան։

— Որ երեկոյթներում վշանում ենք մենք։

Միւս օրիորդները, որ լուռ լսում էին, յանկարծ ծիծաղեցին միմիանց երեսի նայելով։ Նոյն իսկ այդպիսի կարծիքը նոցա կեղծ պատուածիրութիւնն էլ ըլ վիրաւորեց։

— Ճիշտ կարծիքը խխտ խօսքելով է արտայալու ընկերու, որին համամիտ եմ և ես, անվճարկան կերպով ասաց Հրաչեալ Սարգսեանը։

— Հստ ձեր, ուրեմն, այսեղ պէտք է տիրենք, լաց լինենք, չէ, զլուխը շարժելով ասաց օրիորդը։

— Ի՞նչ է, Վակա, ասում են որ չըպիտի ուրախանանք, պարենք, մէջ ընկաւ օրիորդներից մէկը։

— Չէ, աղջի, ոչ այս, ոչ այն, երեւ նոքացնկանում են որ նստենք, զիրք կարգանք ալսոտեղ, աւելացրեց միւսը։

— Այն, այդ էլ անհրաժեշտ է, օրիորդ, ասաց Հրաչեան։

— Հա, ուրեմն գուք զաղափարական պարոններ էք, որ ամեն տեղ գիրք, ստանաւոր, ճառ էք փնտրում, ասաց առաջին օրիորդը հեղնօրէն։

— Ինչու էք հեղնում, օրիորդ, միթէ Հակառակ էք, որ այսեղ ուրախութեան հետ միասին խօսեն, կարդան, նոյն իսկ ակնարկեն, որ օրիորդները մէկի փոխարէն տասնեակ երկրպագուներ ըլպահեն, խօսեց Սրան, վրզուած ձախոս։

Հրաչեան ծածուկ Արայի թեկին զարկելով, հասկացնել կամեցաւ, որ խխտ ըլխոսէ։

— Ներողութիւն, պարոնայք, կարդալու և զրելու

տեղը ուսումնարանն է, որ մենք աւարտել ենք, ասաց երրորդ օրիորդը:

Մեր երիտասարդները յանկարծ բարձրաձայն ծիծաղեցին, օրիսրդի ասածի վրայ:

— Թողնենք այդ խօսակցութիւնը, այստեղ անշարժար է, գուցէ ուրիշ ժամանակ կը հանդիպենք և կը շարունակենք, ասաց Հրաչեան շուրջը նայելով, տեսէք շատերի ուշադրութիւնը մեզ մօտ է:

— Ժամանակ է, ժամանակ, արտասանեց Արան և լուեց:

Օրիորդները վեր կացան և միմեանց թևանցուկ սկսեցին շրջել քրքջալով ու բարձրաձայն ծիծաղելով:

Նոյն բոպէին Սոկրատը և Վարդանը մօտ եկան:

— Ի՞նչ էիք խօսում, հարցըց Սոկրատը:

— Ճատ հետաքրքիր էր մեր խօսակցութիւնը, երանի թէ գու ել մասնակցէիր, Սոկրատ, պատասխանեց Արան:

— Չըլինի, թէ սիրահարուեցիք միմեանց հետ և խօսովանեցիք արդէն ձեր սէրը, կատակ արեց Սոկրատը:

— Հա, հա, հա, բարձրաձայն ծիծաղեցին Հրաչեան և Արան:

— Այդ էր պակաս, ասաց Արան:

Գահիմի օդը հետղհետէ ապականւում էր աւելի և մարգու շունչը կտրում: Նոյն իսկ ճրագների լոյսը հաղիւ էր թափանցում օդի միջով և աղօտ զոյն էր ստացել: Սոկրատ, Գնունին, Գալստեանը և

Սարգսեանը արդէն ձանձրացան: Նոքա թռնելով Վարդանին և միւսներին, որոնք ըցանկացան տուն երթալ, դուրս ելան դահլիճից: Եղանակը հանդարտ էր, երկինքն անամպ, որի անհուն տարածութեան վրայ պեծին էին տալիս հաղարաւոր և բիւրաւոր աստղերը: Լուսնի եղջիւրի ծայրն էր միայն երկում սարի կողքից, որ արդէն վերջին հրաժեշտն էր տալիս գիշերին: Ժամի երկուսն էի: Նոքա արագ քայլերով դիմեցին տուն, ճանապարհին խօսելով իրանց տպաւորութեան մասին: Բաժանւելիս Արան խնդրեց նրանց, որ հետեւեալ օրը երեկոյեան գան իւր մօտ, մի փոքր ժամանակ անցկացնելու:



IV

**Ե**րեկոյ է: Արան, պատրաստելով մի համեստ ընթրիք ընկերների համար, սպասում էր նրա: Ճրադները վառելու միջոցին ներս մտան Հրաչեան, Գուրգէն Յոտարեանը և Սոկրատ Գնունին: Հրաչեան ձեռքին ունէր Թումանեանի բանաստեղծութիւնները, նա յայտնեց Գալստեանին, որ զալու է և Գրիգոր Սէթեանը, որին հանդիպել էր զործի գնալու ժամանակ և խնդրել, որ զայ: Գալստեանն աւելի ուրախացաւ լսելով նրա զալու մասին, որովհետև երկար ժամանակ է, որ նրան չէր հանդիպել:

Գրիգոր Սէթեանը զեղեցկադէմ և շիկահեր երիտասարդ էր: Նա ունէր աւելի լաւ յատկութիւններ, քան վատ: Նա սիրահարուած էր մի ուսանող օքիորդի հետ: Քանի զեռ զալունի էր նոցա սէրը, նոքա յաճախ տեսնուում էին, խօսում և աւելի ամուր կապուում սիրոյ կապերով: Բայց երբ նոքա ժամանակ համարեցին յայտնել իրնց ծնողներին, այն ժամանակից սկսուեցին փոթորիկներ,—որովհետև ծնողները հակառակեցին, բացէիրաց մերժելով սէրը և համարելով այդ փշանալու նշան:

Երիտասարդներն սկսեցին խօսել և վիճաբանել: Նոցա խօսակցութեան առարկան էր ներկայ երիտասարդների զրութիւնը: Միայն Վարդանին չէին հետաքրքրում այսպիսի հարցերը: Նրա հետ խօսէին մէշտ օբյուդների, տիկննոնների, սիրոյ և

այսպիսի բաների մասին, ոոքա են նրան հետաքրքրում: Նա պատրաստ էր ժամերով վիճաբանել առանց ձանձրովթի: Խոկ «ուսում, համալսարան, դադափար, իդէալ» մտքերն երկրորդական բաներ էին նրա համար, և ինչպէս ինքն էլ ասում էր: «Այդպիսի բաները իմ խելքս բան չեն, իմ գաղափարը և իդէալը բոլոր զեղեցիկ աղջիկներն են»:

Հրաչեան ձեռը զլխին զրած մտածում էր: Յանկարծ նա ցածր ձայնով բացականչեց:

— Մարդիկ, մարդիկ, ինչպէս բթացել են ձեր զգացմունքները:

Ապա նա նայելով Գուրգէնին, շարունակեց խօսել միաժամանակ ձեռով շարժումներ գործելով:

— Եղբարյ, տեսնում ես, մի երիտասարդ, յաղթելով շատ խոչնզոտների աւարտում է դպրոցը և ցանկանում է առաջ զնալ. Նլա ուսման ծարաւը մեծ է լինում և առաջ է մղում նրան. զայց այդպիսի բոպէին բոլորը անդգալանում են, չեն օգնում նրան: Ջատերն այնքան հարստութիւն ունեն, որ շախմատի քարերի նման իրենց հազարներն այս բանկից այն բանկն են զլորում, և մեռնելուց յետոյ բոլորը համարեա թէ անհպատակ կորչում է, այն ինչ կենդանութեան ժամանակ զլանում են բարեգործութիւն անել:

— Ճիշտ է, շատ ճիշտ է, շշնչաց տիկին Սըրբուհին:

— Այդպէս է, այս, բայց ինչ կարող ենք անել

այդ բանի դէմ, ոչ էլ գատարանով կարող հնք պահանջել, ասաց Գուրգէնը:

— Ես պէտք է հարուստ լինէի, որ բոլորիդ էլ ուղարկէի համալսարան, մէջ ընկաւ Վարդանը սովորական ծիծաղն երեսին:

— Գոնէ այդ հազարների տոկոսները յատկացնէին խեղճ ուսանողների օգտին, շարունակեց չրաշեան, գոնէ տոկոսների տոկոսները....

— Ներկայումս մեր ունեօր դասակարգի ամենակարևոր հաբցը «ստամոքսային խնդիրն» է, թէ ինչպէս օրէցօր ճոխացնեն սեղանը նորանոր համեղ ուտելեղէններով և խմիչքներով, ու որովայնի տրամադիձը մեծացնեն: Ուտել, խմելն ուր, դիտութիւն ու կրթութիւնն ուր, հակառակ գաղափարներ են, ասաց Արան դառն ժպիտով:

Թէր վերջացնելուց լիտոլ, երիտասարդները դուրս ելան պատշգամբ զովանալու: Երկինքը պարզ էր և լուսինն իր արծաթափայլ ճառագայթները վերից սփռելով խաղաղացած քաղաքի վրայ մեղմ լուսաւորում էր: Այդ միջոցին վերին յարկում խնձուք կար: Երաժշտութիւնը նուագում էր:

Երիտասարդները բաւական երկար պատշգամբում կանգնած լուսմ էին երաժշտութեանը, սպասելով Գրիշային, որ անպատճառ գալու էր:

Վերջապէս ներս մտաւ և Գրիշան ուրախ տըրամադրութեան տակ: Երիտասարդները, տեսնելով նրան, շատ ուրախացան: Սկսուեց կենդանի խօսակ-

յութիւն, բարձրաձայն ծիծաղ, երդ: Վերում նուագին լեզգինկա և Գրիշան սկսեց պարել:

— Այս, ուրախ կենաս, ուրախ, Գրիշա ջան, կոչեց չրաշեան իւր սովորական դարձուածով:

— Գուք էլ ուրախ կենաք, ասաց Գրիշան երեսի քրտինքը սրբելով, ես այսուհետև միշտ ուրախ եմ լինելու:

— Վերջապէս նպատակիդ հասար, Գրիշա, ասաց Սոկրատը:

— Հասայ, սիրելիս, բայց որքան փոթորիկներից յետոյ, ասաց Գրիշան մի թեթև հոգւոց հանելով և գլուխը շարժելով:

— Ոչինչ, Գրիշա, առհասարակ փոթորիկից յետոյ ծագում է պայծառ արևը: Այսուհետև աւելի քաղցր և երջանիկ կը թւայ ձեզ կեանքը, քան թէ առանց խառնակութիւնների և դժուարութիւնների հասնէիր նպատակիդ, վրաբերեց Արան:

— Գէ մի պատմիր մանրամասն, թէ ինչեր տեղի ունեցան վերջերս, կամ ինչ միջոցով համաձայնեցին նրա ծնողները, ասաց Սոկրատը մօտենալով Գրիշային և նստելով աթոռին:

— Սպասիր, մի փոքր հանգստանայ, յետոյ կը պատմէ, խօսեց Գուրգէնը:

— Բայց այսոեղ չի կարելի խօսել այդ մասին. չէ՞ որ մայրդ հակառակէ այդախով բաների, Արա, ասաց Գրիշան:

— Իսկոյն կասեմ, թէ կարելի՞ է՞ խօսել այդ մատին, թէ ոչ, ասաց Արան և մտաւ միւս սենեակը:

Ասացինք, որ այդ գիշեր տաճտիրոջ տանը,  
վերին յարկում՝ կնունք կար: Տիկին սրբուհին հրա-  
ւերուած էր. բայց չէր ուղում գնալ, պատճառաբա-  
նելով այն, որ իրենց տանն էլ հիւրեր կան, որ և  
անքաղաքավարութիւն կըլինի թողնել նոցա և գնալ:

Արան համողեց գնալ, ասելով՝ որ նոքա երի-  
տասարդներ են և չեն նեղանալ այդ բանից, նոքա  
վիճաբանութեամբ կանցկացնեն ժամանակը: Վերջա-  
պէս տիկին Սրբուհին և Արայի քոլը ներողութիւն  
խնդրելով երիտասարդ հիւրերից, գնացին վերև:

—Այժմ կարող էք աղատ խօսել և վիճել, ա-  
սաց Արան նոցա դուրս գնալուց յետոյ:

Նոքա սկսեցին աւելի աղատ խօսել, ծիծաղել և  
պարել: Թզը շոշ էր. բոլոր պատուհանները և դրա-  
ները բաց էին. վերից լսելի էին երաժշտութեան և  
աղջուկի ձայները: Մի փոքր յետոյ Արան սկսեց սե-  
ղանը պատրաստել: Հրաչեան օդնում էր նրան տան  
անդամի նման, ուտելեղէնները դասաւորում և շշերի  
խցանները հանում:

Մինչ այդ ֆուրդէն Օտարեանը թերթում էր  
ֆուրեանի բանաստեղծութիւնները: Վարդանն ու Սոկ-  
րատը պատշգամբում խօսում էին երեկուայ երեկոյ-  
թի տպաւորութիւններից, իսկ Գրիշան ծխելով ականջ  
էր դնում նոցա: Վարդանը պատմեց Սոկրատին, թէ  
ինչպէս Արան իր հակակրանքը պարզ յայտնեց այն  
օրիորդին և որ օրիորդը վիրաւորել է Վարդանի  
«տղէտ» ընկերներից:

—Այժմ հասկացայ, Արա, թէ երէկ ինչ էք խօ-

սում այն օրիորդի հետ. բայց տես, որ նա նեղացել  
է մեզ նման տղէտներից: Միթէ մեղք չըհամարեցիր  
վիրաւորել այդպիսի հասկացող օրիորդի, ասաց Սոկ-  
րատը հեղնական ժամանակով, մօտենալով Արային:

—Ոչ միայն մեղք չըհամարեցի, այլ պարտքու  
համարեցի զգացնել տալ նորան իրանց ինչ լինելը,  
պատասխանեց Արան:

—Բրամո, Արա, բրամո, կոչեց Գրիշան ծափա-  
հարելով:

—Թողէք, պարոնայք, օրիորդների մասին խօ-  
սելը. միթէ նիւթ չըկալ, ասաց Գուրդէնը զիրքը  
ծալելով և մօտ նստելով սեղանին. խօսեցէք Գուր-  
եանի մասին, կարդացէք նրա սքանչելի բանաստեղ-  
ծութիւնները, աշխատեցէք Գուրեան դառնալ, թէ  
չէ ինչ էք շարունակ աղջիկներով գըազուած:

—Գու ամուսնացած ես և չես հետաքրքրուում  
օրիորդներով, հակաճառեց Վարդանը լցնելով գինու  
բաժակները, ախր մենք երիտասարդներ ենք, իհար-  
կէ, միշտ պէտք է նոցանով հետաքրքրուենք, թէ  
չէ էլ ինչու ենք ապրում:

—Ուրեմն ապրում ենք միմիայն օրիորդների  
հետ զուարձանալու համար, հարցեց Գուրդէնը իրո-  
նիս տալով:

—Իհարկէ, շեշտեց Վարդանը:

Բոլորը ծիծաղեցին նրա «իհարկէ»-ի վրայ,  
նոյն իսկ ինքն էլ հետեւելով միւսներին՝ ծիծաղեց  
իւր վրայ: Արան վերջացրեց գործը և բոլորին սե-  
ղանին մօտ հրաւիրելով ինքն էլ նստեց Գուրդէնի

և Գրիշայի մօտ: Սկսուեց ընթրիքը: Նախ բոլոր  
միաձայն Սոկրատին ընտրեցին թամազիա, որովհե-  
տեւ նա աւելի ճարպիկ էր և ընդունակ այդ բա-  
նին:

Ուսում էին, խմում և հետզետէ աւելի ուրախ  
տրամադրուում: Սրան նուազում էր, միւսները ձայ-  
նակցում, երբեմն վերկենալով սեղանից, պարում և  
կրկին նստում:

— Զուր այսքան ծախս ես արել, ասաց Գուր-  
գէնը դառնալով Սրային, ինչ կարիք կար, միթէ  
առանց ընթրիքի չէինք կարող ժամանակ անցնել:

— Աչինչ, սիրելիս, ասաց նա, մի քանի կոպէկ  
ծախսելն իմ ընկերներիս համար ուելորդ չեմ հա-  
մարում, իհարկէ, մի փոքր էլ զինին պէտք է ու-  
րախացնէ մեղ:

— Մասնաւոր խօսակցութիւն չի կարելի, ասաց  
Սոկրատը, դանակի կոթով զարկելով ափսէին, բարձր  
խօսեցէք, բոլորս էլ լսենք:

— Պարոնավք, լաւ կըլինի բոլորս լուենք և թող  
Գրիշան պատմէ իւր նշանուելու մասին, ասաց Հր-  
բաշեան գինու բաժակը գատարկելով:

— Մեծ ուրախութեամբ կըպատմեմ, եթէ միայն  
հետաքրքրուում էք:

— Ինչպէս չէ, ինչպէս չէ, շատ հետաքրքիր  
է, վրա բերեց Սրան, եթէ քո զիստվ անցածը մաս-  
նաւոր հետաքրքրութիւն չըզարթեցնի, դոնէ իբրև  
բոմանտիկ եղելութիւն հետաքրքիր է երիտասարդ-  
ներիս համար:

— Այս, այս, մէջ ընկաւ Վարդանը, շատ հե-  
տաքրքիր է:

— Դէ լսեցէք սիրելիք, ասաց Գրիշան բերանը  
սրբելով:

— Ինչպէս յախոնի է ձեզ, որ երեք տարի ա-  
ռաջ, երբ դեռ Վարդինկէս յաճախում էր ուսումնա-  
րան, ճանապարհին միմեանց տեսնելով սիրահարուե-  
ցինք: Մի կերպ ծանօթացանք միմեանց հետ. և  
այսուհետեւ մեր «էրն աւելի ու աւելի զօրեղանում  
էր: Այս տարի, որ աւարտեց գիմնազիան, ես վճռե-  
ցի այլ ևս ըլթագցնել մեր սէրը ծնողներիցս: Բայց  
տեսէք, որ թէ իմ և թէ մանաւանդ նրա ծնողները  
հին խելքի տէր լինելով, ըլնդունեցին «սէր» կո-  
չուած բանը, և մինչև անգամ մեծ նախատինքներ  
էլ թափեցին մեր գլխին, որ իբր թէ մենք փչա-  
ցնել ենք, լրբութիւն ենք արել սիրահարուելով:  
Մտէք այժմ մեր զրութեան մէջ:

— Տգէտ ծնողներ, բացականչեց չրաչեան:

— Վարինկէս ասել էր իւր ծնողներին, շարու-  
նակեց նա, որ եթէ վերջ ի վերջոյ իրան չամուս-  
նացնեն ինձ հետ, ջուրը կընկնի: Ծնողների սիրտը  
երկիւղ ընկաւ, որ մի գուցէ իրենց մի հատիկ գուստ-  
ը կորչի. մանաւանդ որ այսուհետեւ միշտ լացով էր  
անցկացնում Վարինկէն ամբողջ օրը:

— Դու էլ լաց էիր լինում նրա համար, Գրի-  
շա, հարցրեց Վարդանը պանրի մեծ կտորը բերանը  
տանելով:

Գուրգէնը չը կարողացաւ զսպել իր ծիծաղը ալդ



Հարցի վրայ և սկսեց բարձր ձայնով քըքչալ:

— Մի ընդհատէք, հրամայեց թամադեան:

— Իմ ծնողներս աւելի շուտ համաձայնեցին, այնպէս որ մեր կողմից խոչնոտը վերացաւ. բայց նրա ծնողները գեռ չէին կոտրում: Այնուհետև. երկար ժամանակ չը տեսայ Վարինկիս, որովհետև նրա անգութ ծնողները փակել էին տան մէջ և դուրս չէին թողնում, ենթադրելով, որ այդպիսով Վարինկան կը մոռանայ ինձ և ամեն ինչ կանցնի: Բայց շատ սխալուցան նոքա իրենց հաշվի մէջ: Մի օր էլ լսեցի, որ նոյնիսկ նրան ուզում են նշանել մի ինչ որ հաշուապահի հետ: Արիւնս գլուխս զարկեց, սկսեցի խելագարի նման այս ու այն կողմն ընկնել, հարցուփորձ անել, թէ ուղիղ է այդ լուրը:

— Հա, հա, հա, սէրն ինչ է անել տալիս, ծեծաղեց Վարդանը:

— Վարինկիս վերջին խօսքն եղել է. «Թէ որ ինձ Գրիշալին չէք տալ, հէնց նշանադրութեան օրն ինձ ողջ չէք գտնել»:

— Կեցցէ օրիորդ Վարինկան, ծափահարեց Հրաշեան:

— Վերջապէս նրա ծնողներն էլ համաձայնեցան: Մի օր եկաւ ինձ մօտ նոցա ուղարկած «մօցիկուլը» և յալտնեց, որ Վարինկին տալիս են ինձ: Անցեալ հինգշաբթի գիշեր էլ կատարեցինք նշանատւէքը. և այդպիսով մենք հասանք մեր նպատակին և ցանկամ, որ դուք էլ հասնիք ձեր նպատակին, վերջացրեց Գրիշան:

Ուրեմն այս բաժակը խմենք Գրիշալի և Վարինկալի կենացը. մաղթենք առ Աստուած, որ նոքա մինչև վերջ երջանիկ և ուրախ ապրեն, առաջարկեց թամադեան, բարձրացնելով գինով լի բաժակը:

— Ամէն, ամէն, ուռա, աղաղակեցին երիտասարդները և միաբերան «ճեզ կառլ» կոչելով դատարկեցին բաժակները մինչև վերջին կաթիլը:

Նոյն ըոպէին վերևում երաժշտութիւնն սկսեց լեզգինկա նուագել: Գրիշան պարեց Վարդանի և Սոկրատի հետ, և դեռ միւսների հետ էլ էր ուզում պարել, բայց երաժշտութիւնը լռեց: Արդէն կէս գիշերից անց էր. աքաղաղներն սկսեցին կանչել: Բուրգէնը համօգեց վերջացնելու խնճուքը: Բոլորեւքեանք ուրախ, կատարները տաք, վեր ելան սեղանից և շնորհակալութիւն յալտնելով Արային, դիմեցին տուն:



V

**Վ**ար դավառը մօտենում էր: Ամառալին շոգերն ասենաբարձր աստիճանին էր հասել. քաղաքը համարեա դատարկուել էր.—մեծամասնութիւնը շողից փախել էր կովկասի զով կողմերը: Բայց, ի հարկէ, քաղաքը բոլորվին չէր կորցրել իւր կինդանութիւնը: Մնացողները առաւօտից մինչեւ երեկոյ ժամանակն անց էին կացնում զրօսավայրերում: Մուշտալիղի այզում նուազում էր երաժշտութիւնը: Զբունողների մէջ աչքի էին ընկնում իրենց սանձարձակութեամբ փոքրահասակները: Աշակերտներն ու աշակերտուհիք, ազատ թէ տնալին և թէ ուսումնարանական զբաղմունքներից, սիրային արկածներով էին զբաղուած: Իհարկէ, այս բոլորը կատարուելով դուրսը՝ ծնողների և դատիքարակների աչքից հեռու, նոցա փչացնում և վատ ուղղութիւն էր տալիս: Ամբողջ ինն ամսուալ ընթացքում ստացած բարոյական լրջութիւնը երեք ազատ ամիսների ընթացքում փոխանակում էր լկոտի հանաքներով:

Կիւրակէ, յուլիսի մէկին, Հրաչեալինց տանը հըրաւէր կար: Առհասարակ ամեն մի խնճոյք, թէ Հըրաչեալինց և թէ Արայինց տանը, չէր կատարում առանց մէկի կամ միւսի ներկայ գտնուելուն:

Այժմս էլ Հրաչեան խնդրեց Արային, որ երեկին գայ իրենց տուն: Արան գնաց ուրախ տրամադրութեան տակ: Թահլիճը և սենեակները լուսա-

ւորուած էին ջահերով. հիւրերից եկել էին մի պարոն, մի օրիորդ և երկու տիկին: Սարգսեանները սիրով ընդունեցին Գալստեանին. ասքա ծանօթացրին նրան հիւրերի հետ, ասելով, որ նա Հրաչեալի ամենամօտ ընկերն է և որին իրենք էլ սիրում են որդու չափ: Հրաչեան տանը չէր. նա գնացել էր բարեկամներից մի քանիսին հրաւիրելու:

Արան, խօսակից ըրդտներով, առանձին նստեց բաց պատուհանի մօտ և սկսեց թերթել պատկերների ալքոմը: Եղանակը պարզ էր և հանդարտ: Լրացած լուսինն արևելեան կողմլց ահաղին շրջանակով բարձրանում էր երկնակամարի վրայ: Դրսում կանայք և օրիորդներ զբունում էին թեանցուկ: Արան, վերջացնելով թէյը, դուրս ելաւ պատշդամբ: Մի քանի բոպէից յետոյ եկաւ Հրաչեան մի քանի օրիորդների հետ: Նա տեսնելով Արային պատշգամբում կանգնած, մօտ կանչեց և ծանօթացրեց նորեկների հետ: Մի փոքր յետոյ բոլոր հիւրերը հաւաքուեցին. մեծ մասը կանայք էին, իսկ երեք հողի պարոնայք: Ակառեց բարձրածայն խօսակցութիւն, ընդհանուր ծիծաղ. Հրաչեան նուազում էր դաշնամուրի վրայ, իսկ Արան ջութակով ձայնակցում:

Անցաւ բաւական երկար ժամանակ: Գալստեանը խօսում էր մերթ տիկինների հետ, մերթ օրիորդների. բայց նա չէր նկատում, որ դիմաց նստած մի պատանի օրիորդ մտազբաղ՝ անթարթ աչքերով դիտում էր իրեն: Եթե տիկինները զբաղուեցին լոտոյով և աղմուկը մեղմացաւ, Արան սկսեց դիտել բոլորին:

Յանկարծ նրա հայեացքը մեքենայաբար կանգ առաւ այդ օրիորդի վրայ: Նայելով նրան մի քանի ըսպէ, ամբողջ իւր ուշադրութիւնը կենդրոնացրեց նրա վը- րայ և սկսեց հետաքրքրւել նրանով. նրան թւում էր, թէ օրիորդը շարունակ ժամտում է իր երեսին:

— Գեղեցիկ, անմեղ և պաշտելի արարած, մը- տածեց Արան:

— Ո՞վ է այն օրիորդը, հարցրեց նա Հրաչեա- յին, կանչելով պատշգամբ:

— Մեր բարեկամի աղջիկն է, ասաց Հրաչեան: Անունն և ազգը ի՞նչ է:

— Հուրի Բաբայեան: Տես, ցոյց տուեց Հրաչեան գրսից. այն անկիւնում նստած կինը դորա մալրն է, իսկ հայրը վախճանած է:

— Ո՞րտեղ է սովորում, շարունակեց հարցնել Արան: Ի՞նչու ես այդպէս շատ հետաքրքրում նը- րանով, սիրելիս, երևի հաւանեցիր, ժամտաց Հրաչեան:

— Ո՛չ, Հրաչեայ, դատարկ հետաքրքրութիւն է:

— Դատարկ հետաքրքրութիւնն այդքան ման- րամասն չի լինի, արդէն պարզ է, որ դուք եկաւ քեզ: Անպատճառ նա էլ ակնարկ արած կըլինի քեզ:

Արան ոչինչ չասաց, այլ միայն բռնելով Հրա- չեայի ձեռքը, և նայելով նրա աչքներին խորհրդա- ւոր կերպով ծլծաղեց. նոքա մտան դահլիճ: Հրաչ- եան նստեց դաշնամուրի մօտ, իսկ Արան նրանից մի փոքր հեռու: Ահա այն օրիորդը եկաւ և նստեց Արայի մօտ:

— Ո՞րքան լաւ էք նուագում ջութակի վրայ:

դարձաւ նա Արային նաղելի ժամտով, ո դղակի զգա- ցնում էք լսողին:

— Միթէ այդքան նուագում եմ, ասաց Արան կարմրելով:

— Արա, թող ջութակը և պարիր, միայն ես կածեմ, ասաց Հրաչեան:

— Օրիորդ, դուք կըպարէք ինձ հետ լեզինկա, հարցրեց Արան:

— Ի՞նչու չէ, մեծ ուրախութեամբ:

Ահա սկսեց Հրաչեան նուագել պարերգը: Արան պարեց և կանգնելով հուրի Բաբայեանի դիմաց գը- լուխ տուեց: Նա էլ խոկոյն վեր ցատկեց և սկսեց պարել: Նոքա պարում էին ճարպիկ կերպով. մերժ մօտենալով իրար այնքան մօտիկ, որ կարծես մի- մեանց ականջին շշնջում էին սիրոյ խօսքեր և մերժ Հրաչեացքներ ձգելով, իրար վրայ մի անըմբոնելի զօրութեամբ ցնցւում էին: Արան ուրիշներին էլ խա- ղացնելով վերջապէս յոդնեց և սաստիկ քրտնեց:

Հիւրերը դուրս ելան պատշգամբ. իսկ Արան և Հրաչեան իջան պարտէց: Լուսինն արդէն բաւակա- նին բարձրացել էր հորիզոնի վրայ և խաղաղ լու- սաւորում էր երկիրը:

— Պարզն ասեմ, Հրաչեայ, այդ օրիորդը սառ- տիկ դուրս եկաւ ինձ, խօսեց Արան թաշկինակով ե- րեսը սրբելով:

— Նկատեցի արդէն: Դուք էլ նրան դուրս ես ե- կել, ասաց նա զլուխը շարժելով, բայց ես ուրախ չեմ այդ բանին:

— Ինչու, զարթացաւ Արան, միջէ դադտնիք կայ:

— Բացատրելն աւելորդ է, միայն ասում եմ, որ մի հետաքրքուիր նրանով:

— Խնդրում եմ, Հրաչեալ, պարզիր ասածդ:

— Դու այժմ նրա միայն արտաքինով հրապուրուեցիր: Հապա մի լաւ նայիր նրա գէմքին, նրա հայեացքին, կրտնոնես նրա սիրտը, ասաց Հրաչեան լուրջ եղանակով:

— Նա մի անմեղ, պարկեշտ օրիորդ է թում ինձ:

— Մի խօսքով, սիրելիս, ես խորհուրդ չեմ տալիս քեզ նրանով զբաղուելու: Չընայած, որ նա իմ բարեկամս է, ասում եմ պարզը, որ նա քո եղունգին իսկ արժանի չէ, ասաց Հրաչեան և ընկերոջ թևից բռնելով, բարձրացան վեր:

Քաղցրեղէնի սեղանն արդէն պատրաստ էր. Հիւրերն սկսեցին շարուել սեղանի շուրջը: Արան և Հրաչեան միասին նստեցան սեղանի ծալըին: Նրանց մի կողմը պարոններն էին, միւս կողմը չուրին և մայրը: Արան շարունակ դիտում էր օրիորդին, նրա շարժուածքները, խօսակցութեան ձեզ, կարծես ուզում էր գտնել Հըրաչեալի խօսքերի գաղտնիքը: Հրաչեան, որ կանանց շրջանում լաւ թամադալ էր, կառավարում էր սեղանը, առաջարկելով կենացներ: Իւրաքանչիւր կենացի վրայ երգում էին կամ օրիորդները կամ պարոնները Արայի ջութակի ձայնակցութեամբ: Ահա

Հրաչեան առաջարկեց Արա Գալստեանի կենացը: Սարդսեանները խնդրեցին Արային, որ ինքը երգէ իւր կենացի վրայ, բայց Արան հրաժարուեց բաղաձայն լինելու պատճառով, և իւր կողմից խնդրեց, որ օրիորդներից որևէ մէկը սօլո երգէ ի յարգանս իւր: Հրաչեան հասկացաւ նրա ակնարկը և ցանկացաւ ընկերոջ ցանկութիւնը կատարել: Այդ բոպէին օր, Բաբալեանը դառնալով Արային ասաց.

— Դուք ինչու չէք երգում, պարոն Գալստեան; խնդրեմ ջութակով երգէք:

— Դժբաղգարար բաղաձայն եմ, օրիորդ. բայց դուք եղլէք այնքան բարի, որ երգեցէք իմ փոխարէն, ասաց Արան ցածր ձայնով:

Օրիորդը լոեց և ժպտաց, որ նշան էր համաձայնութեան... Հրաչեան իսկոյն ուռքի կանգնեց և, զառնալով սեղանակիցներին, բարձր ձայնով ասաց.

— Ես Արայի և իմ կողմից խնդրում եմ, որ նրա փոխարէն երգէ օրիորդ չուրին, քանի որ նրա ձայնը յաջող է, իսկ Արան ջութակով կը ձայնակցէ: Դէհ, Հուրի, սկսիր:

Հուրին մի փոքր կեղծ «չեմ ու չում» արեց, և երբ բոլորն էլ խնդրեցին, նա ըշկակառակուեց: Նա երգեց «Դու չես հաւատում» երգը: Ո՞րքան քաղցր էր հնչում Արայի ականջին նրա ձայնը, որ զարկելով սրտի լարերին, զգացնում էր նրան: Նոքա երգելու ժամանակ նայում էին միմեանց և հայեացքներով խօսում: Բոլորը լսում էին լուռ, ուշագրութեամբ: Ոչ ոք չէր նկատում այդ երկու հերոսների

մէջ մի որեւէ բան: Արայն չրաչեան զիտէր, որ  
գլուխը քարշ ձգած լսում էր և միւնոյն ժամա-  
նակ մտածում: Թէ ինչ էր մտածում նա, առայժմս  
դաղտնիք մնաց իւր մէջ: Հուրին վերջացրեց երգը.  
բոլորը սկսեցին ծափահարել: Արան վերցրեց լիմո-  
նադով լցուած բաժակը, ոտքը կանդնեց և մի հա-  
մառօտ ճառ խօսեց: Նիւթը մատաղ սերունդն էր:  
Ապա նա շնորհակալութիւն յայտնելով չիւրին ա-  
ռանձին և հիւրերին դատարկեց բաժակը:

Խնճուքը վերջացաւ: Հիւրերն սկսեցին ցրուիլ:  
Արան հրաժեշտ տալով միւսներին, մօտեցաւ չու-  
րին, բռնեց նրա քնքուշ ձեռքը, և երկուսն էլ  
մոռացած, որ ուրիշների առաջ են կանդնած, եր-  
կար սեղմում էին միմեանց ձեռքը: Արան ցնցուեց,  
կարծես, օրիորդի ձեռքի միջոցով անցաւ իւր մէջ մի  
դաղտնի ոյժ, մի էլէքտրական ուժեղ հոսանք:

Չրաչեան Արայի հետ դուրս ելաւ և ասաց.

— Կրկնում եմ, սիրելիս, աշխատիր մոռանալ  
Հուրին, մի խաբուիր արտաքինով: Յանկամ քեզ  
հանդիստ քուն:

— Կաշխատեմ, չրաչեայ, բայց...

Չըկերջացնելով խօսքը Արան արագ քայլերով  
շտապեց տուն:

## VI

Հուրի Բաբալեանը մի նիշար, դեղնագոյն և  
հիւանդոտ կաղմուածքի տէր օրիորդ էր: Նրա ար-  
տաքինից դժուար չէր գուշակել, որ նա ունէր մի  
ներքին մաշող տկարութիւն: Նրա մայրը, տիկին  
Բաբալեանը ցածրահասակ և պարարտ կին էր: Նրա  
թուի կարմրագոյն դէմքը ցոյց էր տալիս, որ ըն-  
տանիքին պատահած վշտերը չէին ազդել նրա վրայ.  
«Փիփունանքս էլ մեռնելու ենք, դարդին որ տուրը  
տանք, հէնց հըմի պտի մեռնենք Էլի, մեռնողը  
մեռաւ պրծաւ», կրկնում էր նա յաճախ: Նա ներ-  
կայացնում էր մի վերին աստիճանի տղէտ և սնո-  
տիապաշտ կնոջ տիպ: Նա յանցանք էր համարում  
զիմել բժշկի՝ հուրի մատաղ կրծքի մէջ բռն դրած  
կոծող հիւանդութեան դէմ միջոցներ ձեռք առնե-  
լու: Նրա բժիշկները «կիթխաւներն» էին, որոնք  
այդ տկարութիւնը վերագրել էին ուրբ Սարգսին,  
— կարծես թէ ս. Սարգսը բան ու գործ չունենալով  
սաթայէլեան մանգաղով հնձում էր Բաբալեաններին:  
Տիկին Բաբալեանը հակառակ իր համոզման, բայց  
հետևելով շրջապատողներին, իւր գուստուներից եր-  
կուսին մեծին՝ նադեալին և հուրին տուել էր ու-  
սումնարան: Սակայն չէր հետաքրքրուում նոցա կրթու-  
թեան գործով, չէր հետաքրքրուում, թէ արդեօք  
իրենց տան չորս պատերից դուրս իր գուստուները  
ինչ հոսանքի են ենթարկուում, ինչ ազդեցութիւն

Են կրում ելնելով ուսումնաբանի շէմքից: Մի խօսքով նոցա վարքն ու բարքը, առաջընթացութիւնը յանձնել էր նոցա կամայականութեան և ըստ իւր նոցա ճակատագրին:

Պարզ է, որ այդպիսիներից ապագայ յուսալ չի կարելի: Սխալ չի լինի ասել, որ մարդուն ամենամեծ չարիք հասցնողը և ապագայ փչացնողը նրա տգիտ և սնութիապաշտ ծնողներն են, նամանաւանդ մայրերը:

Հուրին 1օ տարեկան էր: Զընայած նրա ներքին տկարութեանը և դեղին դոյնին, այնուամենայնիւ նա գեղեցիկ էր և գրաւիչ: Նրա մանր և փոսը ընկած աչքերը ամեն մի տաքարիւն երիտասարդի ուշագրութիւնը ակամալից գրաւում էին: Նրա բացշագանակագոյն մազերը, թափուելով դեղին ճակատի վրայ, աւելի հաճելի տեսք էին տալիս նրան: Նրա սպիտակագեղնագոյն, նիհար այտերը և բարակ շըրթունքները կանոնաւոր գծագրութիւն էին կրում: Բայց մատաղ կուրծքը, աւաղ, սկսում էր մաշուել: Միայն կուրծքը չէր, որ մաշւում էր, այլ նրա մատաղ մաքուր սիրտն էլ, դժբաղդաբար սկսում էր մաշուել և կեղտոտել: Ահա հրաչեալի խօսքերի գաղտնիքը: Ո՞հ, եթէ մարդուս սիրտը՝ այդ մսի գունդը, որ զգացմունքների կենդրոնն է, նորաբողքոջ հասակում ասլականուի, մարդը կորած է: Եթէ ժամանակին նրան պատուաստող չըլինի, հետևանքը ըլինի բարոյական և ֆիզիքական մահ:

Հուրին, մօր կողմից արգելք չունենալով, օրուայ

մեծ մասը դատարկապորտ աղջիկների և տղաների հետ էր անցկացնում: Բացի այդ նա երեկոյթների հերոսուհիներից մէկն էր: Մեծ քրոջ հետ քոյլը միշտ ներկայ էին լինում արդպիսի տեղերում: Այնտեղ պարկեցտութեան չափ ու սահմանը կորցնելով, զբաղւում էր լիտի խօսակցութիւններով, սիրալին կատակներով պատկերես տղաների հետ, որոնցից շատերն իր մըշտական երկրագուներն էին: Փամի երկուոին, երեքին, նա այդ տղաների հետ թեւանցուկ վերադառնում էր տուն:

Հրաչեան փոքր իշատէ գիտէր այդ մասին և յաճախ խրատում էր նրան, յորդորում, ցոյց էր տալիս ուղիղ ճանապարհը. բայց «ասողին էլ լսող պէտք է».—Հուրին արդէն ունէր իր «Համոզմունքը»:

—Պէտք է ուրախ ու զուարթ անցկացնենք մեր ժամերը. ես խօ կոյս չեմ դառնալու, որ մտնեմ վանք ու հեռանամ մարդկանցից, ասում էր նա:

Հրաչեան, տեսնելով որ Հուրին ընթացքը զգալի կերպով փոխում է զէպի վատը, վճռեց նրա մօրը յայտնել, որպէսզի նա հետեւ իւր աղջիկների վարքին: Բայց հակառակ իւր սպասածին, տիկին Բաբակեանը ոչ միայն շնորհակալութիւն չըյայտնեց հրաչեալին, այլև նեղացաւ նրանից. Համարելով նըրան զրպարտիչ, նախանձ և թշնամի:


—Իմ աղջիկներս մի հատիկ են, ասաց նա, շատ քիչ կը գտնուին նրանց նմաններ: Ի՞նչ ենեմ, որ Աստուած պատժել է նրանց. հիմի ուղում ես, որ մենք էլ պատժենք: Ճէհէլ են, ինչ ուղում են, թող

անեն, ում հետ ուզում են, խօսեն, ծիծաղեն:

— Բայց, մայրիկ, միթէ տկար աղջկան անպատճառ սանձարձակ պէտք է թողնել: Աւելի շուտ տկարին պէտք է հետևել, որ հիւանդութիւնը լայն ծաւալ չստանայ: Վերջապէս որդուց միշտ պէտք է հետևել: Հուրիին, ինչպէս իմ քոյրս, սիրում եմ և ցաւում, որ ծածուկ փշանում է, խօսեց Հրաչեան յուզուած:

— Զէ, Հրաչեայ, դու գեռ ոչինչ չես հասկանում, ասաց տիկին Բաբալիեանը արհամարհանքով, իմ աղջիկներս այնպիսի մօր կաթն են կերել, որ թէկուզ գիշեր ցերեկ դուրսը մնան, չեն լպսուի, չեն փշանայ:

Հրաչեան տեսնելով, որ իդուր է բանակուիւր շարունակելը, թողեց և դուրս ելաւ: Բայց և այնպէս, նա ըրդաղարեց Հուրիին հետևել և խրատել յարմար դէպքերում:



## VII

Փալստեանը վերադառնալով տուն, հանուեց՝ պառկեց պատրաստած անկողնում: Բայց նրա քունը փախաւ, հեռացաւ շատ հեռու: Նրան պաշարեցին մտածունքներ Հուրիի մասին: Որքան նա աշխատում էր յաղթել նոցա, ցրել, բայց չէր կարողանում. նրա աչքերի առաջ կանգնած էր Հուրին՝ քնքոյց հայեացքը յառած իր վրայ:

Անկողնում նա այս ու այն կողմն էր դառնում, վերծակով աչքերը ծածկում, որպէսզի մի կերպ քունը վրայ գայ, բայց իզուր: Ճոգն էլ միւս կողմից էր անհանդատացնում նրան: Ահա նստեց անկողնի մէջ, ձեռները զրեց գլխին և սկսեց մտածել ուրիշ նիւթերի մասին. բայց դարձեալ Հուրին քաղցր ժպիտով կանգնեց նրա առաջ: Յանկարծ նա փիշեց Հրաչեալի խորհրդաւոր խօսքերը և աշխատեց հենց այս առաջին բոպէից մոռանալ նրան:

— «Գուցէ Հրաչեան խաբում է ինձ, մտածեց նա, գուցէ նախանձում է... Բայց ոչ, ոչ, նա չի կարող նախանձել ինձ. Գուցէ այդ արարածը մի ուրիշին է պատկանում... կարող է պատահել...»:

Յանկարծ նա վեր ցատկեց անկողնուց, վաղեց ճրադի մօտ, լոյսն աւելացրեց և վերցնելով սեղանի վրայ դարսած գրքերից մէկը, սկսեց կարդալ, որ գուցէ այդպիսով մտքերը ցրէ:

Կարդաց նա մի քանի թերթ, բայց ոչինչ չը-

Հասկացաւ: Նա մեքենայօրէն էր կարդում: Վայր գրեց գիրքը և անշարժ նստած մնաց, նա դեռ չէր ուզում հաւատալ, որ սէրն անսպասելի կերպով կաշկանդեց իրեն: Եթէ Հրաչեալի նախազգուշացնող խօսքերը չը լսէր, գուցէ համաձայնուէր այդ մտքի հետ: Ն յամբաքայլ սկսեց շրջել սենեակի մէջ. «Երանի թէ ես չըդնալի Հրաւէր, մտածում էր նա»:

Տիկին Սրբուհին յանկարձ զարթնեց և լսելով ոտնաձայն, դլուխը բարձրացրեց և տեսաւ, որ Արան գլխիկոր լիտ ու տռաջ է անում սենեակում:

— Ի՞նչ է պատահել, որդի, ինչո՞ւ ես վերլացել անկողնուց, հարցըց նա:

— Ոչինչ, մայրիկ, մի փոքր զլուխս ցաւում է, անկողնում շոդ է, չեմ հանդստանում, պատախանեց Արան:

— Պառկիր, պառկիր, որդիս, քնիր և կ'անցնից աւը, ասաց մայրը, կարծելով, որ զինի շատ է խըմել և նրա ազգեցութիւնն է:

Պայրն իսկոյն քնեց: Տիրեց խորին լրութիւն: Սրան մօտեցաւ սեղանի վրայ դրած իւր ժամացուցին, և տեսաւ, որ ժամի երեքն անց էր քառորդ, որ շուտով կրլուսանար: Նա պառկեց և ձեռներով աչքերը ծածկեց: Նա ցնորքի մէջ ընկաւ:

Ահա նստած են շքեղազարդ դահլիճում: Հիւրերը զբաղուած են խաղով և խօսակցութեամբ: Հուրին զիմացից իւր դրաւիչ հայեացքը Արալի վրայ ձգած, ժպտում է և աւելի խոր թափանցում իր արձակած սիրոյ նետը: Յանկարձ նա մօտեցաւ նրան, նստեց

մօտը և սկսեց խօսել: Հրաչեան նուազում էր յուղիչ եղանակներ և աւելի դարձ տալիս նոցա բորբոքուած սիրուն:

— Թուրս ելնենք, մի փոքր զովանանք, այստեղ շատ շոդ է, ասաց չուրին ոտքի կանգնելով:

Արան որախացաւ, որ առանձին պէտք է խօսի նրա հետ: Նոքա ելան պարտէզ: Այնուեղ ոչ ոք չըկար: Լուսատու աստղերը մուժ երկնակամարի վրայ փալլիլում էին:

Նոքա նստեցան վարդենու մօտ և, միմեանց ձեռքը բռնելով, սկսեցին բացադրուել: Ապա նոքա յարձակուեցան միմեանց վրայ և զրկելով սկսեցին ջերմ համբոյլներ դրօշմել իրար երեսի վրայ: Սրան սեղմում էր կրծքին իր աննման չուրիին, կարծես, աշխատում էր յագենալ նրանով ընդմիշտ:

Բայց յանկարձ նա սթափուեց, տեսաւ, որ անկողնումն է զտնուում: Նա ձեռները խաչել էր իր կրծքին, կարծես, ուզում էր իրօք զրկել մէկին, բայց անյաջող փորձ է եղել:

— Ո՛հ, ցնորք էր և երաղ, հառաչեց նա հոգւոց հանելով:

Դարձեալ շրջապատեցին նրան մտածմունքները: Նա վերջին ճիգերը թափեց նոցա հեռացնելու՝ մոռանալու չուրիին, բայց իզուր, կայծը զօրեղ էր և բռնկուեց արագութեամբ: «Ես սիրահարուած եմ, վճռեց նա նստելով անկողնում և ձեռը դնելով ճակատին. սէրը կաշկանդեց ինձ. բայց արդեօք այս բոպէիս չուրին էլ մտածում է իմ մասին, նոյն կայ-

ծըն ընկել է նրա սիրտը, հարցրեց նա ինքն իրեն:  
— Այս, չուրին էլ է տանջւում քեզ համար,  
կարծես, մի ձայն շշաց նրա ականջին:

Ամեն ինչ վերջացած էր. սկսուելու է բօմանը:  
Վերջապէս քունը կամաց-կամաց մօտեցաւ նրան, նա  
քնեց մի փոքր հանգիստ առկով բռնկուած դդաց-  
մունքներին:



### VIII

Հետևեալ օրը նա բաւական ուշ արթնացաւ:  
Քիշերը շատ տարօրինակ երազներ տեսաւ, բայց ոչ  
մէկը չըկարողացաւ մտաբերիլ: Զարմանալի էր, որ  
չուրին միայն բացակայ էր երազների այդ քաօսի  
միջից:

Նա վեր ելաւ անկողնից, շորերը հագաւ, լուա-  
ցուեցաւ և նստեց բաց լուսամուտի մօտ: Նա ոչ ոքի  
հետ չը խօսեց և մինչեւ անգամ, երբ մայրը հարցրեց  
նրան, թէ ինչու է տիսուր, նա ոչինչ չը պատաս-  
խանեց: Յանկարծ նա վեր թռաւ տեղից, կարծես,  
մի ինչ որ կարեռը բան մտաբերեց, բայց կրկին  
նստեց իւր տեղը և լինուելով պատուհանին, սկսեց  
մտածել: Առաւտօտեան զեփիւուը զարկելով նրա մը-  
տադբաղ ճակատին, նրա մտքերը սլացրեց հեռու,  
շատ հեռոն...

Ահա դարձեալ նա նոտած է մի կանաչ պար-  
տիգում: Կարմիր վարդերը, բացարած լիտին իրենց  
երեսները, ժպտում են բնուլթեանը: Մուսամբարը ծա-  
ղիկների միջից զլուխը բարձրացրել է, տարածելով  
իւր անուշ հոտը, և կարծես, ուզում է հասնել վար-  
դի բարձրութեանը: Կանաչ, ստուերախիտ ծառերը  
առաւտօտեան զեփիւովի աղդեցութեան տակ մերթ ընդ  
մերթ շշացում են միմեանց ականջին քաղցը եղա-  
նակներ: Վճիտ առուակը, տեղ-տեղ փայլելով արևի  
ճառագայթների տակ, խոխոջալով առաջ է սահում,

խառնելով իր քչքչոցը թռչունների ծլվոցի հետէ

Ահա նա նկատեց մի քնքոյշ էակ, որ յամբ քաղերով մօտենում է իրեն։ Նա ոտքի ելաւ և մեքենալաբար դիմեց այն կողմը, և ում տեսաւ։ Հուրին էր նա։ Նոքա վազեցին առ միմիանս և գրկախառնուեցան։

Քիչ մնաց, որ Արան վայր ընկնէր աթռուի վըրալից, նա սթափուեց և ափսոսաց, որ երևակալութիւն էր այդ։ Նոյն րոպէին ներս էր մտել նրա մայրը, թէլի բաժակը ձեռքին։ Նա տեսաւ Արալին այդ դրութեան մէջ և հասկացաւ, որ փոփոխութիւն է կատարուել երէկ գիշերուանից սկսեալ։ Աստուած վերջը բարի կատարէ, լաւ բան չեմ գուշակում, ասաց նա, թէլը դնելով սեղանի վրայ և դուրս ելնելով։

Արան դարձեալ մենակ մնաց։ «Հարկաւոր է լուրջ մտածել և մի բան վճռել», ասաց նա բաւական լսելի ձայնով։ Թէլը վերջացնելուց յետոյ, ծածկեց գլխարկը և դուրս զալով տանից, դիմեց Հրաշեալի մօտ։ Բարեբաղաբար Հրաշեան տանն էր, նա այդ օրը ծառայութեան չէր դնացել։ Ամբողջ օրը նոքա մնացին այդտեղ. կարդացին, մաղահաթ արին և նուագեցին։ Ճաշելուց յետոյ դուրս ելան և դիմեցին դէպի Մուշտակիդի այգին։

— Հրաշեալ, խօսեց Արան, երէկ գիշերուանից իմ մէջ մի յեղափոխութիւն է կատարւում։

— Ի՞նչ յեղափոխութիւն, միամիտ ձեւացաւ նա։

— Դու արդէն հասկացար, բայց կեղծում ես։

— Դէ լաւ, գիտեմ ինչ ես ասում, պատմիր տեսնեմ։

— Ճիշտն ասիր, Հրաշեալ, Հուրին որպիսի աղջիկ է, ով է նա, ինչ վարքի տէր է, իրար յետելից յարեց նա այսպիսի հարցեր։

— Զգում էի, որ այդ կը լինէր քո հարցը, սաց Հրաշեան գլուխը տարութերելով, բայց դարձեալ դու հետաքրքրում ես նրանով. չէ որ հէնց երէկ գիշեր ասացի քեզ, թէ մոռացիր նրան։

— Ճատ աշխատեցի մոռանալ նրան, չը մտածել նրա մասին, բայց հնար չ'եղաւ, նա շարունակ կանգնած է աչքերիս առաջ։

— Ոչինչ, մի քանի ժամանակից յետոյ կը մոռակաս նրան։

— Չեմ կարծում, Հրաշեալ, միտքս ու Հոգիս այնպէս կաշկանդեց Հուրին, որ ոչ մի խոչնդու չի կարող պալքար լինել դրա դէմ։

— Եթէ այդպէս է, այժմ ասում եմ պարզը, որ նա շատերի խաղայիքն է, և ուզում է քոնն էլ դառնալ, դէ գնա սիրիր, ասաց Հրաշեան վրդովւելով։

Արան սարսափեց. նա լռեց և զլուխը խոնարհեցեց։ Հրաշեան տեսնելով, որ խոցեց ընկերոջ սիրտը, հանդարտ կերպով ասաց.

— Մի խօսքով, սիրելի ընկեր, ես հակառակ եմ դրան, ափսոսալով քեզ և կրթութիւնդ։

— Բայց չէ որ Հուրին դեռ փոքր է, երեխայաժիտ. եթէ նրան հետեւն, կրթեն, նա կուղղուի։

— Պարձեալ չեմ կարող համամիտ լինել, առաջ  
Հրաշեան զբականապէս, չեմ ցանկանում իգուր շըր-  
ջապատողների կողմից թուք և նախատինք կրենք  
թէ ես և թէ դու:

Արան այլեւս ոչինչ չասաց և չը կասկածեց ըն-  
կերոջ անկեղծութեան վրայ:

— Արա, ես խորհուրդ եմ տալիս քեզ միառժա-  
մանակ հեռանալ քաղաքից, հէնց վաղը երեկոյեան:  
Գնա ճանապարհորդիր Անի և ուրիշ կողմեր, գուցէ  
այնտեղի ընութիւնը, օղը թարմացնեն զգացմունք-  
ներդ: Մնա այնտեղ, մինչեւ որ կը մոռանաս հուրիին  
Վարդավառը մօտ է, այն կողմերում մեծ տօնախրմ-  
բութիւններ և հանդէսներ կը լինին: Եթէ ես ազատ  
լինէի, հետդ կը դայի, բայց, դժբաղդաբար, չեմ կա-  
րող:

— Ճատ լաւ, հոգւոց հանեց Արան, առանց  
այդ էլ ամեն ամառ գնում եմ այն կողմերը:

Նոքա անմիջապէս վերադարձան տուն: Արան  
ոկուց պատրաստուիլ մեկնելու համար: Հետևեալ օրը  
երեկոյեան Հրաշեան, Սոկրատը և Գուրգէնը եկան  
Արալին ճանապարհ ձգելու: Մի երկու ժամ առաջ  
գնացին նոքա երկաթուղու կախարան: Այստեղ էլ  
խոսեցին, խորհուրդներ տուին և ուրախ ճանապարհ  
ձգեցին ընկերոջը: Մի քանի ըստէից յետոյ շողե-  
կառքը շարժուց, և սուլելով ու Փշշալմ սլացաւ  
առաջ, տանելով հարիւրաւոր մարդկալին էակների,  
իմիջի այլոց և Արալին...

## IX

10 Յուլիսի 189.

Ի քաղ. Ա...

Սիրելի Հրաշեայ!

Նախ ընդունիր ընկերական կարօտալի բարեւ:  
Խստացայ, որ նախքան գալս, նամակով յայտնեմ  
քեզ իմ մէջ կատարուած փոփոխութիւնը:

Դուրս գալով Տիխիսից, գեռ շողեկառքի մէջ  
մի տեսակ՝ սրտիս ծանրութիւն էի զգում, կար-  
ծես, մի մեծ քար դլուցաւ վրաս և սկսեց ճնշել:  
Մի կերպ հասայ Ա... քաղաքը: Հետևեալ օրը բա-  
րեկամներից մէկի հետ, որ մի ուսանող երիտա-  
սարդ էր, ճանապարհուցայի Անի: Ճաշին հասանք  
այնտեղ, մինչեւ երեկոյ շրջեցինք աւերակների մէջ,  
որոնք զարթեցրին մեր մէջ իրանց անցեալով հայ-  
րենասիրական զգացմունքը և զօրեղ տպաւորութիւն  
արին: Բայց աւելի զօրեղ է եղել սիրոյ զգացմունքը...

Ո՞րքան հրաշալի է Ջիրակալ զաշտի բնութիւ-  
նը: Նա ներկայացնում է մի եղեմական աշխարհ:  
Առաջ զնալով մենք մի փոքր կանգ առանք և ձիա-  
ներին ազատ թողինք արածելու. ընկերս պառկեց—  
քնեց կանաչ խոտի վրայ, իսկ ես սկսեցի հրճուել  
բնութեան հրաշալիքներով: Ահազին տարածութեամբ,  
որքան կտրում է մարդու աչքը, տարածւում է Ջի-

ըակայ արգաւանդ կանաչազարդ դաշտը: Դերունի  
Արագածը վեհապանձ կերպով կանգնած դաշտի մի  
կողմում լուռ դիտում է իր շրջակալքը. չորս կողմը  
սփռուած են արտեր և մարգարիտներ. վերևում, օդի  
մէջ, ճախրում են թռչունները և իրենց դալացիկ-  
ներով ու ծլվլոցով լցնում եթերքը. քաղցրահամ և  
վճիտ առուակները, սառս աղբւրները, խոխոչալով  
ու քչքչալով սահում են մարգարիտների վրայով:  
Նոցա ափերին բուսած նարգիզը, վայրի շուշանը և  
գոյնզգոյն հոտաւէտ ծաղիկները լցնում են օդը ա-  
նուշ բուլմունքով: Չեմ կարող կենդանի կերպով  
նկարազրել, սիրելի ընկեր, «եկ և տես»:

Ահա այս հրապուրիչ բնութեան մէջ յանկարծ  
միտքս ընկաւ չուրին: Որքան աշխատեցի հեռացնել  
նրան, բայց իդուր: Եթէ իմանաս, չըաչեալ, թէ  
ինչպէս է զգացւում ախալիսի տեղերում սիրահար-  
ւած մարդը: Երջանիկ կը լինի կեանքը հեռու մարդ-  
կալին աղմուկներից. ճնշող առօրեայ հոգսերից սի-  
րեցեալ էակի հետ ապրել բնութեան ծոցում: Ո՛հ,  
իմ պաշտելի չուրի, Եկ, առանձնանանք աշխարհի  
այս ծալքը և ապրենք երկուով մինչև վերջ: Եկ,  
սիրելիս, այստեղ ազատ կը գտունք միմեանց, կը-  
փայքայենք, կը գրկենք, և չերմ համբուրներով մեր  
կարօտը կ'առնենք:

Գուցէ, սիրելի չըաչեալ, այս բաղձանքները  
քեզ թռւան էգօխստական ցանկութիւններ: Բայց մար-  
դը քանի որ «մարդ» է և բնութիւնն էլ տուել է  
նրան «սէր» կոչուած զօրեղ զգացմունքը, — այդ այդ-

պէս կը լինի: Ջիրակայ դաշտի բնութեան մէջ ծը-  
նուեցան և մեծացան Սօսն ու Վարդիթերը: Սէրը  
կաշկանդեց նոցա սիրտը, բայց հանգամանքների ան-  
յաջող դասաւորութեան շնորհիւ նոքա չը հասան  
իրենց նպատակին ու եղան «սիրոյ զրիեր»: Օրի-  
նակներ շատ կան: Մի խօսքով, սիրելի ընկեր, չու-  
րին իմս է: Եւ զգում եմ, որ նա էլ իմ մասին է  
մտածում և տանջուում: Գուցէ և յայտնած լինի քեզ  
արդէն իւր սէրն դէպի ինձ: Անհամբեր սպասում եմ  
այն րոպէին, երբ կրկին կը տեսնեմ նորան, կրկին  
անզամ կը սեղմեմ նրա ձեռքը:

Մտագիր էի իշմիածին էլ գնալ, բայց չեմ կա-  
րող, շուտով գալու եմ, սիրտս տեղահան է ուզում  
լինի և թռչի այդտեղ... Վաղեմի դասընկերներիցս  
մէկը, որ մի աղնիւ երիտասարդ է, ամսոյս 16-ին  
ամուսնաւու է, և ինձ խնդրեց, որ լինեմ իւր  
խաչեղբարը: Սիրով ընդունեցի այդ ի սէր ընկերու-  
թեան: Հարսանիքի հետեւեալ օրը կը ճանապարհուեմ:

Վերջացնելով նամակս, խնդրում եմ, հազորդես,  
իմ սիրալի և կարօտալի ողջոյնս չուրիին:

Նոյնպէս ընկերներիս:



X

**Յուլիսի 17-ն էր:** Յրկինքը պալզ էր և անամպ: Առաւօտեան արշալոյին Հրաչեան առանց թէ: Խմելու ճանապարհ ընկաւ դէպի երկաթուղու կայարանք: Եյդ օրը գալու էր Արա Գալստեանը: Գնում էր նա շտապ շտապ և մտքով զբաղուած: Կարծես ընկերոջ գալուստը մի սեսակ շփոթման մէջ էր ձգել նորան: Նա հասաւ կայարան: Քան ըստէլց յետոյ հեռուում լսուեց սուլոց. շոգեկառքը կանգնեց: Հարիւրաւոր ճանապարհորդներ միմեանց հրելով սկսեցին դուրս գալ վագօններից: Հրաշեան մերժ այս կողմն էր վազում, մերժ այն կողմը, ցանկանալով հանդիպել Յրային: Յետին շարքերի ՚՚-րդ կարդի օթեակի դռանը երևեցաւ մի միջահասակ, կարմրաերես երիտասարդ, որ ճանապարհորդական սակագոյեաժը պարանոցին ձգած և ձեռքին մի փոքրիկ չամոդան բռնած ցած իջաւ: Հրաշեան հեռուից նկատելով նորան, ճանաչեց և մօտ վագելով, նոքա գրկախառնուեցան: Հրաշեան նորա ձեռքից վերցրեց չամոդանը և ինքը տանելով, կառք հրաւիրեց: Ճանապարհին նոքա շարունակ հարց ու փորձ էին անում միմեանց այլ և այլ նիւթերի վերաբերմամբ:

Հրաշեան ստիպեց պատմել նրա տպաւութիւններից. որ և Արան սկսեց հէնց կառքի մէջ պատմել: Մի քանի անդամ նա ակնարկելով կամենում էր հարցնել Հուրիի մասին, բայց Հրաշեան

խոյս էր տալիս և խօսքը փոխում, Արան, տեսնելով, որ իզուր է աշխատում ակնարկով տեղեկանալ Հուրիի մասին, բացարձակապէս հարցըց:

— Ի՞նչպէս է Հուրին, ինչ է անում:

Հրաշեան դէմքը խոժոռեց, բայց անհնարին էր ըլ պատասխանել:

— Լաւ է, լաւ, սիրելիս, բայց դու նրան միթէ ըլ կարողացար մոռանալ, հարցըց նա:

— Սիրում եմ նրան, Հրաշեայ, սիրում եմ իմ ամբողջ էութեամբ: Մի նախատիր և մի հակառակիր:

Հրաշեան ոչինչ չասաց: Կառքը կանգնեց Արայինց դռան առաջ: Նոքա իջան և մտան ներս: Տիկին Սրբուհին տանն էր և զբաղուած էր տնացին գործերով: Տեսնելով որդուն, նա շատ որախացաւ:

Հրաշեան այդ օրը գործի չը գնաց, և մնաց այնտեղ: Շաշից յետոյ Արան և Հրաշեան դուրս ելան:

— Դէհ, ասիր, Հրաշեայ, քո վերջին խօսքը, ինձ օգնելու ես, իբրև ընկեր, թէ մենակ ես թողնում, խօսեց Արան:

— Ի՞նչպէս օգնեմ, ինչ բանում, հարցըց Հրաշեան:

— Ես վճռել եմ Հուրիի սանձը և դեկը իմ ձեռքիս առնել և ուղղել:

— Ի՞նչն է ստիպում քեզ, որ անպատճառ դու ուղղես նորան, ընդհատեց Հրաշեան:

— Արդէն գիտես թէ ինչը, աւելորդ է կըկնելը:

Ես նորան ընթերցանութեան գրքեր կը տամ որոշ ծրագրով, կը հասկացնեմ ոսկասկանալին, բարոյական խրատներ կը տամ, մի խօսքով ամեն կերպ նրան կը հետևիմ:

— Իսկ եթէ չուղղուի, և նոյն վարքով մնայ, այս ժամանակ:

— Անկարելի է այդ, նա դեռ թարմ է, նա մի կոկոն է, որ նոր պիտի բացուի, եթէ լաւ ջրես, պարարտ սնունդ տաս, կը բացուի և պտուղ կը տայ:

— Բայց, ցաւօք սրտի, կան այնպիսիները, որոնք դեռ չը բացուած նեխուում են, ասաց Հրաշեան գլուխը քարշ ձգելով:

— Մի հակառակիր, սիրելի Հրաշեայ, նա ուղղելի է, միայն հարկաւոր է կամքի ոյժ և աշխատանք:

— Բայց, դժբախտաբար, Սրա, դու չունիս կամքի ոյժ, վրայ բերեց Հրաշեան:

— Չափազանցութիւն է ասածդ, Հրաշեայ, բայց և ենթադրենք, որ իրօք այլպէս է, ուստի ես էլ խնդրում եմ քո աջակցութիւնը:

— Իսկ մտածում ես, որ նրա հետ գործ ունենալով ամբողջ քաղաքի խօսակցութեան և զըրպարտանքի նիւթը կը դառնանք:

— Եթէ իմանան, որ ես սիրում եմ, իսկոյն կը լուեն:

— Ախր դու ինչ գտար նորա մէջ, ինչ արժանաւորութիւն, կամ գեղեցկութիւն: Սաստիկ յուղում եմ ես: Նա կանացի պարկեշտութեան և ա-

մօթիւածութեան չափ ու սահմանը համարեա կորցրած աղջիկ է: Քանից հանդիպել եմ նորան գիշերները գոն-ժուանների հետ իրենց դռանը: Հենց երէկ չէ առաջի օրը, երբ գիշերը ժամի 12-ին վերադառնում էի Միսակի մօտից, տեսայ նրան համբուրուելիս մի դօն-ժուանի հետ: Ահա, միամիտ իմ Սրա, քեզ հրապուրող չուրին: Նրա մայրը, այդ անզգայ և անպէտք արարածը չէ ուզում տեսնել այդ բանը: Հապա թոքախտը. միթէ կը ցանկանաս, անարատ կեանքդ թունաւորես, սերունդդ էլ նոյնպէս: Ոչ, ոչ, սիրելիս, քաւ և մի լիցի: Զը լինի թէ նրա աննշան գեղեցկութեամբ հրապուրուեցիր: Բայց դիցիր, որ անամօթ կինը գեղեցիկ չի մնայ: Այս, այժմեան քո սէրը շատ բաներ է թելադրում, բայց և ինքը կը խանգարէ նոյց իրականանալուն: Նա ձեզ երկուսիդ ուզում է մօտեցնել, իսկ վերջը խայտառակ կերպով բաժանել:


— Ազնիւ մարդը ամեն տեղ, ամեն հանդամանքի մէջ իր աղնուութիւնը կը պահէ: Վերջ ի վերջոյ բարոյականը, աղնիւը, վսեմը կը յաղթէ հակառակ գաղափարներին, ասաց Սրան շեշտելով իւրաքանչիւր բառը: Այդ գէպքում ենթադրենք, Հրաշեայ, թէ ինձ համար չէ այդ նախապատրաստելը, միթէ վսեմ գաղափար չէ ընկածին բարձրացնելը: Դու ինձ հետ պէտք է բարձրացնես չուրին, որ մի եղէգն է, հեշտութեամբ կը հակուի ամեն կողմ:

Հրաշեան լուեց: Նա ընկաւ մտածմանց մէջ հետղիւտէ նա համաձայնեց, հաշտուեց այդ մտքի

Հետ: Նա գտաւ, որ դա հաւանական և կարելի բան է:

— Տեսնում եմ, սիրելիս, ասաց նա, որ չը կարողացայ քեզ սառեցնել չուրիից: Այժմ աշխատիր նրան ուղղել, ամբողջ հոգեկան աշխալհը մաքրել: Իհարկէ ես էլ իմ կողմից իբրև քո ընկերը և նորա բարեկամը՝ կաշխատեմ: Ի սրտէ ցանկանում եմ, որ նա քեզ հասկանայ:

Նոքա վերադարձան բերկրանքով լի:



## XI

Հետեւեալ օրը Հրաշեան գործից վերադառնալով զնաց Բարալեանների տուն: Ներս մտնելով բակը, մի քանի աստիճան բարձրացաւ և կանգնելով լուսամուտի առաջ նայեց ներս, ցանկանալով եմանալ, թէ ով կայ այստեղ: Ճրագի լոյսի տակ տեսաւ, որ Չուրիի մայրը թէց էր պատրաստում, մեծ քոյրը՝ Նադեան ճրագի մօտ նստած կար էր անում, իսկ Չուրին պատի տակ նստած մի օրիորդի հետ և զրոյց էր անում: Հրաշեան ճանաչեց Արուսեակին: Նա զեռ գանգերի ժամանակ եկել էր նոցա մօտ մի փոքր խօսելու: Վաղուց էր, որ նա ծանօթ էր Բարալեան քոյրերի հետ. զեռ դպրոցում, երբ ինքը վերջին դասարանումն էր, իսկ Բարալեանները ստորին դասարաններում, մտերմացել էին միմեանց հետ, Արուսեակի խորամանկութիւնը և նախանձութիւնը համակրանքի էին արժանացել Բարալեանների կողմից:

Հրաշեան ներս մտաւ, Չուրին, տեսնելով նորան, վեր թռաւ տեղից և վագեց գէպի նա, կարծես, բոպէ առ բոպէ սպասում էր նրան: Հրաշեան ողջունեց բոլորին և նստեց Նադեայի մօտ, հարցնելով.

— Ի՞նչ ես կարում, Նադինկա, չը լինի քեզ համար նոր շորեր ես պատրաստում:

— Ոչ, սա ինձ համար չէ, այլ Չուրիի համար.

տեսնում ես, ինքն անգործ նստած մասլահաթով,  
ծիծաղելով է զբաղուած, իսկ նլա զործն ես եմ կա-  
տարում, պատասխանեց Նադեան քմծիծաղով:

— Փոքրն աւելի ազատ պէտք է լինի, մէջ ըն-  
կաւ չուրին հեռուից, ես դեռ պէտք է խօսիմ, զը-  
ւարձանամ և ուրախ ժամանակ անցկացնեմ:

— Իհարկէ, իհարկէ, վաւերացրեց Արուսեակը:

— Հա, ինչտէս չէ, դու դռանը մինչև կէս գի-  
շեր կաւալէրների հետ քաշ արի, ու ես....

— Միթէ, չուրին այդպիսի բաներով է զբաղ-  
ուած, ընդհատեց Հրաշեան կեղծ զարմանքով նա-  
յելով նորա երեսին, չէ, չէ, Հանաք ես անում,  
Նադեա:

— Ամառ է, որդի, պարապ էք, դաս չունիք,  
գործ չունիք, խօսացէք, ծիծաղեցէք, ման եկէք, ա-  
սաց մլում կերպով նոցա մալլը. բա դու խօմ դու-  
սաղ չես. դու էլ ես լաւ վախտ անցկացնում:

Հրաշեան յուզուեց մօր ասածների վրայ, նա  
լիշեց մի քանի ժամանակ առաջ իր և այդ վերին  
աստիճանի «ազատամիտ» կնոջ մէջ տեղի ունեցած  
խօսակցութիւնը: Կա կարմրեց և լրեց: Արուսեակը  
և չուրին միմեանց ականջին վսփսալով ծիծաղում  
էին բարձրածայն:

Նադեան վայր դնելով ձեռագործը, վազեց միւս  
սենեակ, ճրագը վառեց և նոցա հրաւիրեց այնտեղ:  
Պատուհանները բաց էին և մաքուր օղը ազատ  
շարժում էր սենեակի մէջ: Սենեակն ըստ երեսի-  
թին ներկայացնում էր դահլիճ, որ ոչնչով չէր տար-

բերում խեղճ մարդու սովորական սենեակից: Մի-  
քանի զեղնագոյն աթոռներ և պատի ճեղքած հայե-  
լին կազմում էին սենեակի զարդարանքը: Մի սե-  
ղան դրած էր դռան մօտ և մի հնամաշ գիւան եր-  
կու բազկաթոռներով դարսած էին հայելու տակ,  
պատի մօտ:

Մի փոքր մնալուց յետոյ Արուսեակը դնաց, իսկ  
Հրաշեան մնաց երկար: Նա ուզում էր առանձին  
խօսել չուրիի հետ: Հուրիի փոքր եղբայրն ու քոյլը  
քննցին, մացրը գուրս դնաց հարեւան կանանց հետ  
խօսելու, իսկ Նադեան, ձանձրանալով ներսում նրա-  
տելուց, ըստ ոսվորականի դուրս դնաց: Նրա և Հու-  
րիի երկրպագուները վաղուց դռանը խմբուած սպա-  
սում էին նոցա: Կա մօտեցաւ խմբին և սկսեց սո-  
վորական հաճոյախօսութիւնները:

Հրաշեան շատ ուրախացաւ այդ բանին. Հուրին  
տրամադիր էր խօսելու և լսելու, նա չէր ուզում  
այդ երեկոյ գուրս ելնել սենեակից:

— Հրաշեակ, Արան վերադաբել է, եղաւ Հու-  
րիի առաջին հարցը:

Հրաշեան աշխատեց ինքը լուել Արայի վերա-  
բերմամբ, որպէսզի իմանայ Հուրիի տրամադրու-  
թիւնը դէպի նա:

— Այո, եկել է, երեկ չէ առաջի օրն եկաւ.  
բայց դու ինչո՞ւ ես հետաքրքրում նորանով, հար-  
ցը Հրաշեան:

Հուրին ժպտաց, շարժուելով տեղից գուրմ նա-  
յեց պատուհանից, և կրկին նստեց իր տեղը:

— Այդ հվաքեր են գուանը խմբուած տղաները,  
հարցրեց Հրաչեան մատով ցոյց տալով դէպի բակի  
դուռը. ամեն երեկոյ դոքա այլտեղ խմբում են, և  
շատ անդամ դու և Նադեան հետները կանդնած  
մասլահաթ էք անում:

— Գոքա Փիլիպոսի՝ (իւր եղօր) ընկերներն են,  
մօտ են ապրում և շուտ-շուտ գալիս են նրա մօտ,  
պատասխանեց Հուրին, նայելով Հրաչեալի աչքերին:

— Իսկ դուք ինչ գործ ունիք նոցա հետ, ձեր  
ընկերները խօմ չեն:

— Մեզ հետ էլ ծանօթ են և խօսում ենք,  
ինչ կայ դրանում:

— Ինչ կայ, շարժեց գլուխը Հրաչեան. շատ  
լաւ, ահա այժմ եղբարդ քնած է, ինչու է նա-  
դեան զբաղեցնում նոցա, ինչ գործ ունի նոցա հետ:

— Լաւ, թող այդ, ասաց Հուրին զարկելով Հը-  
րաչեալի ձեռքին, դու այն ասա, թէ Արային երբ  
պէտք է բերես մեր տուն:

— Նա ինչ գործ ունի այստեղ, որ բերեմ:

— Հրաչեալ ջան, մի օր բեր նրան մեր տուն,  
մայրիկս հետ ծանօթացրու, խնդրեց Հուրին:

— Ի՞նչ է, շատ ես համակրում նրան, հարցրեց  
Հրաչեան:

— Օ՛, շատ լաւ տղայ է նա, որքան գեղեցիկ,  
բեր, բեր, Հրաչեալ, խնդրում եմ:

— Նա չի դայ:

— Ինչու, իմ կողմից խնդրիր:

— Բայց դու մինչև անկեղծօրէն չասես, թէ

ինչու ես ցանկանում նրա այստեղ գալը, չեմ բերի,  
ասաց Հրաչեան:

Հուրին ծիծաղեց. նա կարմրեց մինչև ականջ-  
ները: Ուզում էր ասել, «սիրում եմ նորան», բայց  
չէր վստահանում. նա ոչ թէ ամաչում էր, այլ վս-  
խենում Հրաչեալից: Նրա համար սիրելը սրան, նը-  
րան բնաւորութեան գլխաւոր գիծն էր: Բայց այդ-  
պիսի սիրով սիրել մի հրիտասարդի, որ պատրաստ  
է կեանքն անդամ զոհել այդ տեսակ սիրոյ առաջն  
առնելու, շատ դժուար էր թւում նրան:

Հուրին առաջին անդամ տեսնելով Արային, հաւա-  
նեց. նրա մէջ թագնուած խանդաղատանքը շարժուեց.  
բայց նա զգաց դէպի նա իրեն անհասկանալի մի  
զօրեղ զգացմունք և ձգտում: Որքան որ զօրեղ էր  
այդ զգացմունքը, այդ ձգտումը, այնուամենայնիւ  
նա զիտէր, որ չէ դա այն «իդէալական» կոչուած  
սէրը, որին նա հակառակ էր հոգւով և մարմնով:  
Նա ուզում էր Արային էլ միւսների նման իւր ճան-  
կը ձգել և այդ զօրեղ ձգտմանը, որ կիրքն էր, յա-  
գեցնել մի քանի համբոյներով: Նա ուզեց Հրաչեա-  
լին բացազրել այդ բանն իբրև «սէր», բայց չէ  
որ Հրաչեան վազուց զիտէր նրան, նրա սիրոյ էտ-  
թիւնը. ահա այդ պատճառով նա այժմ դժուարա-  
նում էր արտասանել իր ամենօրեալ գործածած խօս-  
քը—«սիրում եմ նրան»:

Հրաչեան նկատեց, որ նա տատանւում է և չէ  
վստահանում պարզն ասել:

— Մի ամաչիր, Հուրի, ասա պարզն և լուսով եղիր:

Հուրին այլ կո չը զսպեց իրեն և ցածր ձայնով ասաց.

— Սիրում եմ նրան:

Արտասանելով «սիրում եմ» բառը, նա սաստիկ կարմրեց և երեսը ծածկեց ձեռքի հովհարով։ Հրաշեան մի բոլէ լռեց, որպէսզի Հուրին հանդարտուի։

— Հուրի, այժմ չի կարելի այդ մասին երկար խօսել, ես միայն կասեմ այսքանը, շատ ուրախ եմ, որ սիրում ես, բայց նա քեզ չի սիրիլ, որովհետեւ նա քեզ նման օրիորդներին երբէք չէ համակրում։

— Միթէ ես վատ աղջիկ եմ, հարցրեց Հուրին ինքնահաւան կերպով։

— Գու ինքդ զիտես, Հուրի, թէ ինչպիսի աղջիկ ես։ Ահա, այս բոլէիս էլ գուանը կանդնած են քո սիրելիներն և սպասում են քեզ. դժբաղդաբար այսօր գու չես արժանանում նոցա տեսութեանը, քո փոխարէն նալեան է զուարձացնում։

— Սիսալ ես, սիսալ, ասաց Հուրին զլուխը թափահարելով։

— Եթէ ուզում ես, որ Գալստեանը համակրէ քեզ և սիրէ, պէտք է թողնես քո բոլոր ծանօթներին, չը խօսես նոցա նման փոլոցալինների հետ, և ինչ որ պատուիրէ քեզ, կատարես, ասաց Հրաշեան։ Հուրին աչքերը բատակին ձգած, լուռ լսում էր.

Հրաշեան տեսնելով, որ իր խօսքերն ազդում են նրա վրայ, շարունակեց.

— Եթէ գու իմանաս, թէ Արան ինչպիսի խելօք և ազնիւ տղայ է. նա իմ ամենասիրելի և ամենամտերիմ ընկերս է. այդ քո բոլոր ծանօթներդ նրա մի եղունգի արժէքն անդամ չունին։

Նա ուզեց խօսել այն ոճով, որ մօտիկ էր Հուրիի զդացմունքին և տրամադրութեանը, և կարող էր աղդել, ուստի ասաց.

— Տեսնում ես, որքան գեղեցիկ և առողջ երիտասարդ է. հաստատ հաւատացած եղիր, որ նորախդեալը կը լինիս միմիայն դու, եթէ թողնես քո ներկայ ընթացքդ։

— Ճատ լաւ, Հրաշեայ, միայն դու ինձ մտերմացըու նրա հետ։

— Զէ, բաւական չէ, որ խօսքով ասում ես, այլ և պէտք է ի սրտէ համոզուիս։ Երդուիր, որ դու նրան կը լսես և կը հետեւ ամեն բանում։ Ես էլ հեռուից քեզ կը զիտեմ, կը հետեւմ։ Եթէ որ խարես նրան, կամ մի որևէ վատ քայլ անես, զիտցած եղիր, որ գու կը տուժես։ Այնուհետեւ ես քո բարեկամը չեմ լինի և գու մեռած կը լինիս ինձ համար ազգականս չես լինի, և կատեմ քեզ ի սրտէ։

Հուրին երդուեց Աստուծոյ, իր ծնողի ու միւսների արևով. ասպա քո ներկայ Հրաշեայի ձեռը, հարցրեց.

— Ուրեմն Երբ կը տեսնեմ նորան։

— Վազը երեկոյեան ժամը 6-ին կը գաս ինձ

մօտ կանտօրաս, էլ ուրիշ ոչինչ: Հա, մոռացայ ա-  
սել, որ ոչ ոքի ոչինչ չը յայտնես, նոյնիսկ Նաղեա-  
լին: Մանաւանդ զգուշացիր այդ խորածանկ Արու-  
սեակից:

Այդ րոպէին ներս վաղեց Նաղեան:

— Ի՞նչ էք այսպիսի մի գիշեր ներսը նստելու  
սազ ու բազ անում, մի դռւրս եկէք, տեսէք, թէ ինչ  
հիանալի եղանակ է:

Նոքա դուրս ելան և սկսեցին զբունել: Դրսում  
դրան առաջ նստած էին կանայք և խօսակցում էին:  
Երիտասարդ պարոների և օրիորդների խմբերը զբու-  
նում էին փողոցոմ, որոնք, տեսնելով մեր երիտասարդ-  
ներին, հեռացան ուրիշ կողմ: Հուրին, Նաղեան և  
Հրաշեան մի ժամու չափ զբունեցին: Հուրին չէր խօ-  
սում, երեսում էր, որ նա մտքով զբաղուած էր, եւ  
միայն երբեմն մեքենայբար ծիծաղում էր, երբ ծի-  
ծաղում էին Հրաշեան և Նաղեան: Խորածանկ Նա-  
ղեան հասկացաւ, որ ներսում Հրաշեան մի բան ա-  
սած էր լինէր, որ և ազդել է Հուրիի վրայ, և այդ  
բոպէից սկսեալ հետևում էր նրան ամեն մի քայլա-  
փոխում:



## XII

Երեկոյ է: Արեք նոր է թեքուել դէնիթից  
և դիմում դէպի հիւսիսարևմուտք: Յդը սաստիկ շոդ-  
է: Ամեն ոք աշխատում է հազնուել բարակ և թե-  
թեւ: Հրաշեան էլ հազել էր սպիտակ զանաւուղեայ  
վերնաշապիկ, կապել մետաքսեայ ասեղնագործ գոտի  
և ծածկել էր սպիտակ աշակերտական գլխարկ. այն-  
պէս որ նրան կարելի էր ընդունել իբրև ուսանողի:  
Ժամի հինգն էր, երբ նա դուրս եկաւ տանից: Գա-  
լով Արայի մօտ, որ պատշգամբում նստած, սպասում  
էր նրան, միասին զիմեցին դէպի կանտօրա: Հրա-  
շեան պատմեց զիշերուայ տեսակցութիւնն ու խօ-  
սակցութիւնը Հուրիի մօտ: Ապա իւր կողմից մի քա-  
նի ծրագրներ և խորհուրդներ էլ տուեց Արային:

— Միայն չը շեղուես բռն նպատակիցդ: Ունե-  
ցիր կամքի ոյժ և չը յափշտակուես Հուրիի սիրային  
հայեացքներով: Բայց և յուսա, որ նա կուղղուի, գեռ-  
թարմ է, գեռ նուրբ են նրա զգացմունքները:

— Յուսով եմ, Հրաշեայ, և հաւատացած: Ոչինչ  
չի ընկճի ինձ. իմ անկեղծ սէրս ողեւորում է ինձ, գըր-  
դում է տիրանալ նրան: Ո՛հ, եթէ նա ինձ հասկա-  
նայ, ես երջանիկ կը լինիմ:

Նոքա հասան կանտօրա: Հրաշեան նստեց իր  
տեղում և սկսեց զբաղուել զործով: Խոկ Արան մտաւ  
ընթերցարան և սկսեց թերթել սեղանի վրայ սըփ-  
ուած ամսագրները: Միքանի բոպէից յետոյ ներս

մտաւ Հուրին: Նա հադնուել էր ուսումնաբանական ու տարագով. զիխարկը՝ սպիտակ դոյնի և արհեստական ծաղիկներով ծածկուած, զրել էր թեք զիրքով, որ աւելի զեղեցկացնում էր նորան: Հրաշեան տեսնելով նորան, վեր ելաւ և սիրով ընդունեց:

—Ո՞ւր է Արան, հարցրեց Հուրին չորս կողմը նայելով:

—Այստեղ է, մի անհանգստանար, ասաց Հրաշեան ուրախացած:

Ապա բռնելով նրա ձեռքից, տարաւ ընթերցարան, որտեղ բացի Արայից ոչ ոք չը կար: Սա տեսնելով Հուրիկն վեր թռաւ տեղից և մօտ գալով բարեկեց, սեղմելով նրա ձեռքը: Ուրախութիւնից սիրուն սկսեց բարախել և ծնկները գողգոզալ:

—Ահա և երկուսդ միասին, խօսեց Հրաշեան. Հուրի, այժմ հէնց Արայի մօտ ասում եմ քեզ իմ առաջին և վերջին ասելիքս. դու զեռ լաւ չես ճանաչում սորան, զեռ ծանօթ չես սրա զաղափարների հետ: Եթէ հետզհետէ լաւ ծանօթանաս սրա հետ, ըմբռնես սորան, աւելի կը լարգես, կը սիրես և կը ձգտիս դէպի սա: Խնդրում եմ քեզ, քո բարոյական ընթացքով, քո պարկեշտութեամբ ապացուցես, որ արժանի ես սորան: Նա կը համոզէ քեզ, կը ցոյց տայ լաւը, ազնիւը: Վերջը երկուսդ էլ միմեանց կը հասկանաք... շեշտեց Հրաշեան:

Վերջացնելով իւր խօսքը, նա գնաց իւր սենեակը: Հուրին իր կրակուտ հայեացքը ձգած Արայի աչքերին, շարունակ նայում էր նորան, որով կար-

ծես, աւելի խոր էր թափանցում սիրոյ նետը նրա մատաղ սիրտը: Մի քանի վայրկեան երկուսն էլ լուսնայում էին միմեանց: Կոցա հազիների մէջ՝ ներքին աշխարհում, տարբեր երեսոյթներ էին տեղի ունենում: Մէկի մէջ խսկական մաքուր սէրը բոցավառւում էր և հետղետէ գրաւում ամբողջ սիրտը, իսկ միւսի՝ մէջ կիրքն և վաւաշոտութիւնը գլուխ էին բարձրացնում աւելի ուժգին կերպով:

Հուրիի շնչառութիւնն արագանում էր: Աչ մէկրն իր «սիրելի»-ներից ալսպիսի զօրեղ տպաւորութիւն չէր արել նրա վրայ. ոչ մէկը իւր զեղեցկութեամբ, արտաքինով չէր զրաւել նրա սիրտը, ինչպէս այժմս Արան: Երբ երբորդ անգամ Արայի հայեացքն ընկաւ նրա հայեացքին, նա ցնցուեց: «Բ’նչ համեղ պատառ է, մտածեց նա, երբ պէտք է արժանանամ զէթ մի համբովին»:

— Ասացէք, խնդրեմ, օրիորդք որտեղ էք սովորում, հաբրեց Արան, ուրիշ հարց չը դտնելով:

NN օրիորդաց կար ու ձեմ դպրոցում, երկրորդ զաւարանից վոխեցի երրորդ, աւելացրեց Հուրին, ցանկանալով աւելի մեծ երկալ Արայի աչքում:

— Ճատ ուրախ եմ: Բնթերցանութեամբ էլ պարապնւմ էք:

Հուրին շփոթուեց և չը գիտէր ինչ պատասխանել: Եթէ ասէր «այտ», այն ժամանակ զուցէ հաբրեր տար զըքերի բովանդակութիւնից, իսկ եթէ ասէր «ոչ», այդ ամօթ է, և զրանով իր վարկը կընկնէր նրա մօտ:

— Ուզում եմ կարդալ, բայց չը դիտեմ, ո՞րտեղից վերցնեմ պատասխանեց նա կօկեուկաբար:

Արան հաւատալով նրա խօսքերին, եղրակացրեց, որ Հուրիի մէջ կայ ընթերցանութեան ցանկութիւն.ուստի և պէտք է գրքեր տալ նրան: Նա մասամբ մեղաղրեց Հրաշեալին, որ նա ուշադրութիւն չէ դարձրել Հուրիի ընթերցանութեան վրայ, որ գոնէ կարող էր իր սեպհական գրքոյներից տալ նրան կարգալու:

— Օրիորդ, անկեղծ ասած, ես մի այնպիսի երիտասարդ եմ, գիւրութեամբ չեմ համակրի ներկայ օրիորդներին: Ճատ գեռահաս օրիորդներ, անձնատուր եղած զանազան անսերելի դուարճութեանց, թողնում են ընթերցանութիւնը, իրենց դասերն, ու չեղով դաստիարակների բարոյական կրթիչ խրատներին, շեղում են ուղիղ ճանապարհից:

Հուրիի դեղնագոյն երեսի վրայ երեան էր գալիս կարմիրը: Նա մի շարժում գործեց և կրկին հանդարտուելով, սկսեց թերթել ամսագրներից մէկը, միաժամանակ լսելով Արալի խօսքերը:

— Եթէ օրիորդը կորցնում է իւր պարկեշտութիւնը, իր օրիորդական համեստութիւնն ու ամօթխածութիւնը, և վաղաժամ անձնատուր լինում սիրային արկածների ամեն մի պատահող տղայի հետ, նա ապականում է, փչացնում իր ապագան: Ընուհետեւ նա չի կարող բարոյական կոչուել: Հասարակութիւնը և շրջապատղները կը նախատեն, կը թքեն նրա երեսին և կը զգուին

նրանից: Վերջը նա չի կարող մայր և կին դառնալր ալ...

Արան տաքացաւ, նա ուզում էր իր սրտին ճնշող վիշտը յայտնել նորան, որը սիրում է իրեն և յօժարակամ նստած լսում է իւր խօսքերը:

— Բայց տեսնենք և հակառակը, այսինքն, երբ օրիորդն իրեն պահում է այնպէս, ինչպէս պահանջում է ազնութիւնը: Երբ նա զգութ ու խուսափում է վատ տղաներից, ու պատրաստում է իր գասերը, կարդում է իրեն համատասխան գրքեր, լսում ուսուցիչների և մեծերի խրատները, այն ժամանակ նրա սիրտը, նրա մատաղ զգացմունքներն աղնուանում են: Իսկ ինչ վերաբերում է ձեզ, Հուրի, այդ արդէն մօտ ապագան կը ցոյց տայ ամեն ինչ: Եթէ դուք ցանկանում էք, որ մենք մօտ բարեկամներ լինենք, պէտք է ինձ լսէք և հետեւէք. պէտք է լինէք իմ առաջ անկեղծ և պարզ:

— Ճատ լաւ, ասաց Հուրին ժպտալի երեսով:

— Ես ձեզ գրքեր կը տամ, որ կը կարդաք ուշադրութեամբ և ինձ կը պատմէք ամեն ինչ. ըլ հասկացածը կը բացակընեմ:

Այդ բոպէին ներս մժաւ մի սպայ: Նոքա գընացին Հրաշեալի մօտ, որ զլուխը քարշ ձգած զըրում էր: Նա դեռ մնալու էր այտեղ մի ժամու չափ ևս, ուստի Հուրին և Արան թողին նրան և դուրս եկան: Նոքա խօսելով դիմեցին տուն:

զով Արայի նորա Հետ մտերմութիւնը, սկսել էին խորթ աչքով նայել նորա վրայ, և ցոյց տալ իրենց հակակրանքը: Եւ երբ մի անգամ Արան Սիրաք Ճշմարտախօսեանցին հարցրեց, թէ ինչո՞ւ են սկսել այդպիսի խորթ աչքով նայել իրենց վրայ, նա ասաց.

— Արա, դու կամ մինչեւ այժմ դիմակաւորուած էիր, քեզ ցոյց տալով իդէալիստ, ժուժկալ և աղնիւ, և կամ անսպասելի կերպով յափշտակուեցար, տարուեցար իբրև մարդ:

— Ինչո՞ւ, եղբայր. խնդրեմ, պարզիր ասածներդ, ասաց Արան:

— Միթէ վայել է քեզ ընկնել չուրի Բարակեանի հետ, միթէ քո պատիւը հաւասարացնում ես նրա պատուին:

Արան երկար նայեց նորա աչքերին և կարճ ասաց.

— Այժմ աւելորդ է պարզել իրականութիւնը. բայց գուցէ ապագայում բոլորին էլ յատնի լինի մեր յարաբերութիւնը:

Մէկ անգամ էլ նոյնիսկ մի ոմն, ըստ երևոյթի չուրի նոր երկրպագուներից մէկը, չրաչեայի հետ դիտմամբ ծանօթանալով, ասել է նորան:

— Միթէ վայել է ձեղ և ձեր ընկերոջը, որի հետ դժբաղդաբար ծանօթ չեմ, խլել սիրուհուն սիրածի ձեռքից:

Չրաչեայի մի ուժգին ապտակն է եղել նրա պատասխանը:

Իսկ օրիորդ Բարաթ եմնը:

Միթէ նրանից ծածուկ կը մնայ այդ: Նա արդէն տեղեկացել էր Կաղեալից ամեն ինչ և շատ բան էլ չուրին ինքն էր պատմել նրան իբրև մօտ ընկերուհու:

Թէև Արան ուրախ էր, որ չուրին փոխում էր և պատրաստում իր ապագայի համար, բայց միտ կողմից իր պատիւն ընկնում էր. և այդպիսով հետզհետէ պատիւ վերականգնելու զգացումն էլ զօրեղանում էր նրա մէջ:

Չրաչեան, տեսնելով, որ շատերի մատի փաթաթան և խօսակցութեան նիւթ է դարձել, որ նոյնիսկ անօնիմ նամակներ էլ ստացաւ իր և Արայի հասցէին վիրաւորական դարձուածնելով, որտեղ նա կոչում էր «մօդնի մօցիկուլ», կամեցաւ թողնել ընկերոջն իր չուրիով և հեռանալ նոցանից: Բայց նրա ընկերութեական զգացմունքը դլուխ բարձրացրեց: Նա վճռեց ուշադրութիւն չը դարձնել զրպարտանքների և բամբասանքների վրայ, մանաւանդ որ, տեսնում էր չուրիի դէպի լաւը դառնալը: Նա բանակուուի մէջ մտաւ շատերի հետ, համոզեց նոցա, որ Արան սիրում է չուրիին սուրբ սիրով, և ինքն էլ երկուսին է սիրում:



XIV

Ոգոստոսի 12-ն է։ Քաղաքը ոտքի է կանգնել։ Նկատում է մի տեսակ շարժում, որ սովորական է մեծ տօներին։ Յըը շաբաթ է, իսկ վաղը կիւրակէ ։ Աստուածածնալ վերափոխման օրը։ Տիխիսում այդ տօնը սկսում է շաբաթ երեկոյին, երբ մեծ ուխտահանդէսներ են լինում Բէթղէհէմի, Խօջիւանքի (զերեզմանոց) և ա. Աստուածածին անունը կրող եկեղեցիներում։

Տիխիսուցիները մեծ անհամբերութեամբ ոպասում են այդպիսի մեծ տօներին։ Այդ օրերը նոքահագնում են իրանց ամենաթանկադին և շքեղ ըզգեստները, ալլոց հետաքրքրելու համար։ Աւելի մեծ ուրախութիւն է օրիորդների համար։ (Նամանաւանդ «պառաւաւծ» օրիորդների), որոնք ժամերով կանգնած հայելու առաջ հագնուում պճնուում են։ Այդ օրն այնքան պուդրա են գործ ածում գեղեցկանալու համար, որ զեղատները հազիւ են ժամանակ գըտնում պահանջաղ մադամին կամ մադլմուաղէլին բաւարարութիւն տալու։

Երեկոյ է, զանդերը հնչեցին և հրաւիրեցին դէպի եկեղեցի ուխտաւորներին ու համբուրողներին։ Զընայելով, որ արել թեքում էր, սակայն սաստիկ շոդ էր։

— Յըա է, օրա, լուում էր չորս կողմից։

Ահա սկսուեց հանդիսականների հոսանքը դէպի

Բէթղէհէմ, Խօջիւանք, Կուկիալի Աստուածածին, Թանդոյինց եկեղեցին և Չուզուրէթի Աստուածածին։

Տիկինները, օրիորդները հագել էին ամառալին թեթև գունաւոր զգեստներ։ Ֆածկել էին ծաղիկներով զարդարուած գլխարկներ։ Հովանոցները բաց արած և ձեռներին բռնած հովհարները, դանդաղ քայլերով, քաղցր մասլահաթով, ուրախ զուարթ դիմում էին «օրա»։

Որան և Հրաշեան գնացին Խօջիւանքի օրան։ Դեռ երեկ երեկոյեան Արան պատուիրել էր Հուրիին, որ գայ այնտեղ։ Արդէն մթնել էր, որ նոքա մտան եկեղեցու բակը։ Որպիսի մեծ բազմութիւն, որպիսի աղմուկ, իրարանցում տիրապետում էր այնտեղ։ Բակը և եկեղեցին այնպէս էին լցուել ժողովրդով, որ շարժուելու տեղ չը կար, ինչպէս ասում են, «ասեղ ձգէիր, վայր չէր ընկնի»։ Մեր երիտասարդները ճեղքելով բազմութիւնը, առաջ անցան և սկսեցին հոսանքի հետ շարժուել, աջ ու ձախ նայելով։ Բակում հանդիպեցին Սոկրատը, Միսակը, Բարսեղը և Վարդանը, որոնք վաղուց եկել էին։ Նոքա բոլորը միասին ներս մտան եկեղեցի, մի կերպ առաջ անցան, համբուրեցին սրբերը և դուրս դալով բակը, սկսեցին միասին շրջել։

Յանկարծ լապտորների լոյսի տակ նկատուեց Հուրին իր ընկերուէիներով։ Նոցա մէջն էր Արուսեակը ու Նադեան։ Հուրին էլ տեսնելով Արալին, մօտ եկաւ և սիրով բարեկելով ասաց։

— Ո՞ւր ես, Արա, վաղուց է սպասում եմ քեզ։

Ապա նա մեր երիտասարդների հետ ծանօթացը լրեց իր ընկերուհիներին:

— Ո՞ւր է մայրդ, հարցը էց չրաշեան չուրիին:

— Մայրս այստեղ էր, բայց գնաց տուն:

— Հապա դուք ինչո՞ւ մնացիք:

— Մենք պէտք է լուսացնենք, մէջ ընկաւ նադեան, չը գիտես, որ ամեն տարի մենք լուսացնում ենք:

— Ինչպէս, օրիորդ, առանց ձեր մօր. միայնակ, զարմացմամբ հարցը Արան, դառնալով նադեալին:

— Գիտես, Արա, մենք շատ բարի մայր ունենք, խօսեց չուրին, նա մեզ թոյլ է տալիս այսպիսի տօներին ուրախ ժամանակ անցկացնել: Ի՞նչ կը պատահի մեզ այստեղ, մենակ իս չենք, որ պէտք է լուսացնենք, տես, այս բոլորն էլ պէտք է լուսացնենք, մատով ցոյց տուեց ժողովրդին:

Սոկրատը, որ լսում էր այդ խօսքերը, ձեռով բօթեց Միսակին և շշնջաց:

— Լսում ես, Միսակ, ի՞նչ է ասում:

— Լսում եմ, լսում, բայց միայն Գալստեանը չի ուզում լսել, պատասխանեց նա:

**Միսակը սխալուեց!** Արան էլ լսեց այդ խօսքերը, որ և սաստիկ ծակեցին նրա ականջները: Մի բոպէ նրա ժտքովն անցան այն բոլոր լուրերը, որ պատմել էին չուրիի մասին, ահա այս բռպէիս էլ ինքը՝ չուրին, հաստատեց այդ: Նա ցոյց տուեց, որ մայրը թողել է նոցա սանձարձակ, որ նոքա— չուրին, նադեան «ուրախ ժամանակ անցկացնեն» բայց

նա, նայելով նրա դեղնագոյն երեսին, նրա վառվըռուն աչքերին, դարձեալ տարուեց նրանով...

Միքանի բոպէից յետոյ չուրին շշնջաց Արայի ականջին.

— Դոքան էլ պէտք է մնան մինչև լոյս:

— Չեմ կարծում, միայն չրաշեան մեզ հետ կը մնայ:

Նոքա սկսեցին շըջել ժողովրդի մէջ: Բակում զարկած էին մի քանի վրաններ: Այդ վրանների առաջ նուագում էին դայրա, նաղարա, ու երիտասարդները և օրիորդները պարում էին: Ժողովուրդը խոնուել էր նոցա շուրջը և մեծ աղմուկով ու բացականչութիւններով ծափահարում էր: Հերթով պարում էին օրիորդները և իւրաքանչիւրը աշխատում էր ցոյց տալ իր ճարպիկութիւնը լեզզինկա պարելում, որ գոնէ իր պարով կարողանալ վեսացու գտնել:

Այն ուխտաւորները, որոնք եկել էին լուսացնելու նպատակով, պատերի տակ շարուել էին: Սովորութիւն է, որ ուխտ են դնում ամբողջ գիշերը չը քնել ու նստել աչքաբաց, որպէսզի Աստուածածինը լոէ նոցա աղօթքը: Ոմանք տակները փռել էին մի փռքիկ զորդ և վերան պառկել, ոմանք կանաչ խոտի վրայ, միքանիսն ծալապատիկ նստած դիտում էին ժողովրդին, աւելի հասակաւորներն էլ թինկ տուած բարձին կամ մութաքալին «տէր ողորմեան» էին չըխչըխկացնում և չաճախ բերանը բաց ու խուփ անում, յօրնջկոտում:

Արդէն ուշ գիշեր էր. ժողովուրդը սկսեց ցը-

ըուել. միայն «կաւալէրները» խումբ-խումբ շրջում էին բաղմութեան մէջ և այս կամ այս գեղեցիկ օրիորդներին սիրոյ խօսքեր շպրտում: Զէլն պատկառում այդ անամօթ մարդիկը. բաւական չէ, որ հեռուից լպիրշ խօսքեր էին շպրտում սրա նրա հասցէն, այլ և դիտմամբ հրում էին օրիորդներին, ձեռներով զարկում նոցա թևերին և իւրաքանչիւրը ցոյց էր տալիս իր լրբութիւնը:

Վի խումբ (փոքր) երիտասարդներ էլ, մօտենալով չուրիին, նայեցին նրան ու նաղեային, ծիծաղեցին ու բարձրաձախն «բարե ձեղ նաղեա, չուրի» ասելով անցան:

Հրաչեան բարկացաւ: Արան, որ խօսում էր Միտակի հետ, յանկարծ լսելով այդ անունները, յետ նայեց, բայց ոչ ոքի չը ճանաչեց:

— Այդ ովքե՞ր էին, նաղեա, հարցրեց նա սառն կերպով:

— Մեր ծանօթները, պատասխանեց նաղեան, նայելով Արուսեակին:

Սովորատը խորհրդաւոր կերպով հապաց և ցտեսութիւն առաց, միւսներն էլ նոյնպէս, և դիմեցին դէպի տուն: Արուսեակը և նոր ծանօթացած օրիորդներից երկուսը նոցա հետ գնացին: Մնացին չըրաչեան, չուրին, նաղեան և մի օրիորդ:

Աղմուկը և իրարանցումը հետզետէ հանգստացան: Լոեցին դիպլիադիտովի և դայրայի ձայները: Ռէխտաւորները, ոմանք պատերի տակ, կանաչ խոտե-

րի վրայ, ոմանք վրաններում, պառկեցին մի փոքր հանգստանալու:

Հետզհետէ տիրեց խորին լրութիւն:

Միայն երբեմն-երբեմն լսելի էր լինում այս ու այն կողմից մատաղցու գառների ձայնը. ու այն երիտասարդների ու օրիորդների փսփսոցը, որոնք անհամբեր սպասում էին այդ գիշերուանը, որպէսզի կարողանան երկար խօսել: Մերոնք նստած էին մի անկիւնում կանաչ խոտի վրայ և մասլահաթ էին անում: Արան պատմում էր զանազան կտորներ պատմութիւնից, երբեմն անենկդուսներ ասում, ու այսպէս հերթով բոլորն էլ մի-մի բան պատմելով իրարուգունը փախցնում էին:

Հուրին լռեց և հետզհետէ սկսեց ընկղմուել մըտածունքների մէջ: Ի՞նչ էր մտածում նա: Արդեօք այդ նրա սովորական անուրցներն էին: Միթէ կարելի է այսպիսի նուիրական գիշերը նա չանցկացնէ իր երկրպագուների խմբի մէջ տեղը նստած: Միթէ զարմանալի չէ, հապա ինչ էր մտածում նա:

Յանկարծ նա փոխուեց, կարծես նրա ուշքն ու միտքը կաշկանդուեցին. նրա արիւնը կանգ առաւ երակների մէջ և նա զգաց իրեն խտերիկական դրութեան մէջ: Մեքենայաբար նա ձեռը մեկնեց դէպի Արան, որ իր մօտն էր նստած, բռնեց նրա ձեռքը և սկսեց սեղմել: Միւսները չը նկատեցին այդ: Յանկարծ նա ցնցուեց և արիւնը սկսեց հոսալ:

— Եկ, Արա, անցնենք ուխտաւորների միջով,

տեսնենք ինչ կայ: Ես զբունել եմ ուզում, դիմեց  
Հուրին նրան:

— Գնանք, ասաց նա վեր թռչելով տեղից. Նա-  
դեա, դուք շարունակեցէք խօսել, մենք ժի փոքր  
շրջենք ու դանք:

— Գնացէք, զբունեցէք, գնացէք, ասաց Հրա-  
չեան:

— Ես էլ կրգամ, ասաց Նադեան, կամենալով  
կանդնել:

— Ոչ, դու նստիր, խօսենք, բռնեց նրա ձեռը  
Հրաչեան, մենք էլ յետոյ կը գնանք:

Հուրին ու Արան միքանի պտոյտ արին բակում,  
եկեղեցու շուրջը:

— Արա, եկ բակից դուրս ելնենք, գնանք  
գերեզմանների վրայով ման գանք, դու խօ չես վա-  
խենում, ասաց Հուրին:

Արան էլ այդ էր ցանկանում. վաղոց նա մը-  
տածում էր այդ, բայց չէր վստահանում ասել:

— Իհարկէ ոչ, գնանք, ասաց Արան հազիւ լը-  
սելի ձայնով:

Կէս գիշեր էր: Նոքա դուրս գալով բակից մըթ-  
նով սկսեցին շրջել գերեզմանները: Նոքա բաւակա-  
նին հեռացան եկեղեցուց և նստեցին մահարձանի  
տակ, որը ներկայացնում էր մի հրեշտակ ձեռով  
խաչակնքելիս իր շուրջը: Երկինքը պարզ էր. բիւ-  
րաւոր աստղերը փայլում էին վերից և ազօտ կեր-  
պով լուսաւորում մութ աշխարհը. չորս կողմում տի-  
րում էր գերեզմանալին լուսթիւն և սանդրամետա-

լին խաւար: Միայն երբեմն լսւում էր ճռուանի ճըռ-  
ոցը, որ բաւականին մեծ արձագանք էր տալիս  
այդ խաւարի և լուսթեան մէջ:

Մի քանի վայրկեան լուռ նստած էին այդ եր-  
կու էակները և դիտում իրենց շուրջը: Նոցա սըր-  
տերը բաբախում էին և ձգուով զէպի միմեանց:

Հուրին ժամանակ համարեց Արային իր ճանկը  
ձգելու: Նա այդքան ժամանակ աշխատեց, ձգտեց,  
ինքն իրեն կաշկանդեց, շատ «քաղցր» ըոպէներ  
բաց թողեց Արայի պատճառով, որ գոնէ հասնի իր  
նպատակին. նրա կիրքը դարձեալ գլուխ բարձրա-  
ցըրեց: Նա աշխատեց շուտով ընկնել նրա բազուկնե-  
րի մէջ և քանի մի համբոյը տալով, առնելով, վեր-  
ջացնէ ամեն ինչ: Բայց տես որ, այդ զգացմունքի  
հետ մի ուրիշ բաւականին զօրեղ զգացմունք էլ ա-  
ռաջացաւ, — որ ոչ թէ մի քանի վայրկեան խարէ  
Արային, այլ աւելի երկար ժամանակ օգտուի նրա-  
նով: Բռպէապէս իր մտքում պատկերացաւ իր ան-  
ցեալը, իր արածները: Նա ցնցուեց, երբ մտածեց,  
որ մի այդպիսի խաղ էլ ուզում է խաղալ այնպիսի  
երիտասարդի հետ, որին ամենից շատ է, հաւանել,  
և որը սիրում է իրեն անկեղծօրէն, իդէալական սի-  
րով: Նրա շփոթուեց: Նա ցանկացաւ ընդ  
միշտ Արայինը լինել, թողնելով բոլոր սիրածներին:  
Բայց չէ որ վերջի վերջոյ Արան կը լսէր ամեն ինչ,  
կը տեղեկանար նրա անցեալով, և զուցէ տեսել է և  
գիտէ, այն ժամանակ... օ, գուցէ երկուսն էլ կոր-  
չին: Հարկաւոր էր նախապատրաստել նրան: Յան-

կարծ նա, կարծես ներքին զրդմամբ, բռնեց Արայի  
ձեռը և մօտ քաշուեց նրան:

— Ա՛խ, մի բան եմ ուզում ասել, սիրելիս, ա-  
սաց նա, բայց...

— Ասիր, չուրի ջան, ասիր, այս այն ժամն է,  
որի համար քեզ պատրաստեցի:

Հուրին նայելով չորս կողմ և համոզուելով, որ  
ոչ ոք չէ լսում իրենց:—

— Ես քեզ սիրում եմ, ասաց նա ու անմիջա-  
պէս ընկաւ նրա կրծքին:

— Գու իմն ես, ասաց Արան, և գրկեց նորան:

Ո՛հ, ինչ ջերմ համբողներ էին քաղում մի-  
մեանցից, կարծես, ցանկանալով ընդմիշտ յագենալ  
իրարով:

— Հուրի, գու ինձ հասկացել ես, հարցրեց Արան:

— Այո, հոգիս, հասկացել եմ, բայց... ասաց  
Հուրին և սկսեց հեկեկալ: Բայց... ես...

— Ինչու ես լալիս, սիրելիս, խօսիր:

— Բայց ես անարժան եմ քեզ, ես... ես մեղա...  
մեղաւոր եմ...

— Հանգստացիր, Հուրի, ամեն ինչ վերջացած է:

Նա հասկացաւ, որ Հուրին ինքնագիտակցութեան  
է եկել, և զգացել իր ինչ լինելլ: Այժմ, նա ի սրտէ  
զգչում է, խոստովանում է իր սիրալը և նուիրում  
միմլայն մէկին, որ նորան սիրել, ընդունել է. որ վատ  
ճանապարհից յետ է դառնում արտասուքով:

Նոքա կրկին փարուեցան միմեանց վղով և ըս-  
կան համբուրւել: Արձանացած հրեշտակը լուռ դի-

տելով այդ եղելութիւնը, ձեռը բարձրացրած օրհ-  
նում և խաչակնքում էր նոցա:

— Ներիր ինձ, հեկեկում էր չուրին:

— Ի՞նչը, չուրը, ինչը ներեմ, այն որ ինձ սի-  
րում ես:

— Վերջ ի վերջոյ շատ բան կիմենաս իմ մա-  
սին ուրիշներից. աւելի լաւ է, ես այժմ ասեմ քեզ:  
Ես շատերի հետ եմ ծանօթ, Արա, ինձ խաբել են,  
ես հի-հիմաց եմ հասկանում իմ սիրալը: Բայց այլևս  
ոչ ոքի հետ չեմ խօ-օսի, ես քո-ոնն եմ, արտասա-  
ռում էր նա հեկեկալով, հազիւ լսելի ձայնով, գլու-  
խը դրած նրա կրծքին:

— Ես վաղուց եմ լսել այդ բայց ոչինչ, եթէ  
ի սրտէ զդում ես արածներդ. Մի լար, ուրախացիր,  
որ մենք հասանք մեր նպատակին:

— Ա՛խ, սիրելիս, կեանքս... շշնջում էր չուրին:

— Բայց դու լաւ ես ըմբռնել ինձ, իմ վաղա-  
փարները, բնաւորութիւնս, արդեօք զիտակցօրէն ես  
սիրում ինձ, թէ... ասաց Արան:

— Ասուուծ վկայ է, որ ես հասկացել եմ քեզ.  
ասաց Հուրին, թաշկինամկով սրբելավ աչքերը:

— Ուրեմն, Հուրի, մենք յափտեանս միմեանց  
ենք պատկանում, ոչինչ չի բաժանիլ մեզ բացի մա-  
հից, խօսեց Արան մի փոքր լուռութիւնից յետոյ:

— Այո, սիրելիս: Ես քոնն եմ, գու իմը: Ոչ ոք  
չի բաժանիլ մեզ:

— Երգուիր, Հուրի:  
— Երդում եմ Աստուծոյ անունով, այս սուրբ

եկեղիցիով, սուրբ Աստուածածնի անունով, որ են  
քեզ սիրում եմ անչափ, և մինչեւ մահս քոնը կը  
լինիմ: Մայրս, քոյրս մահանան, թէ ես ուրիշի մա-  
սին մտածելիս լինեմ:

— Թող մահանան այդպիսի մայրն ու քոյրը,  
որոնց շնորհիւ դու վարկդ ձոռում էիր, ասաց իւր  
մտքում Արան:

— Դու էլ, երգուիր, Արա, որ հաւատամ, թէ  
դու էլ ինձ ես սիրում:

— Թող վկայ լինին երկինքն ու երկիրը, այս  
անքիծ, պայծառ աստղերը, թող վկայ լինին իմ մէջ  
եղած աղնւութիւնը, ու բարոյականութիւնը, որ ես  
քեզ սիրում եմ և կը սիրեմ մինչեւ դերեզման:

Նոքա կրկին փաթաթուեցան և լուռ միմեանց  
կրծքին յենուած, համբոյրներ էին դրօշմում մի-  
մեանց այտերին: Այդ վայրկեանին մի մեծ աստղ ըն-  
կաւ, թողնելով իր յետևից երկար լուսաւոր շաւիդ:  
Արան նայեց այդ շաւդին. բայց յանկարծ ահա երկ-  
րորդն ընկաւ: Նոյնպէս շաւիդ թողնելով, ապա միւս  
կողմում երլորդը, միմեանց յետևից թօթափեցան:

— Ինչու փախան աստղերը, մտածեց Արան, և  
վայրկենապէս վատ գուշակութիւն արեց:

Այս, միշտ քաղցր են սիրային առաջին համ-  
բոյրները. այդ բոպէին մարդուս մէջ եղած սէրը,  
զգացմունքները, և տուփանքը միախառնուելով, զը-  
լուխ են բարձրացնում և համբոյրն է նոցա բաւա-  
կանութիւն տալիս:

Թշուառ արարածներ: Արդեօք երկուստեք սէրն

է ձեզ այդպիս միաւորում, արդեօք այդ կուսական  
սիրտը, էապէս պարզուած, զտուած է և կամ ար-  
դեօք ընդունակ է սիրել:

Անմիտ Արա, երջանիկ ես զգում քեզ չուրիի  
զրկում, բայց նա միշտ քոնը կը լինի, միայն քոնը  
կը լինի:

— Գնանք այժմ, չուրի, բաւական ժամանակ  
անցաւ. նոքա մեզ կը փնտրեն ու կը տեսնեն, որ  
գուրս ենք եկել բակից:

Նոքա ձեռք-ձեռքի տուած, խոտերը և ծա-  
ղիկները կրիսելով, շտապեցին եկեղեցու բակը: Գնա-  
ցին, տեսան, որ չըաչեան մի ինչ որ բան է պատ-  
մում և նադեան ու միւս օրիորդը հետաքրքրու-  
թեամբ լսում են:

— Ի՞նչ շուտ եկաք, հարցըց չըաչեան, դեռ  
ման կը զայիք, ես չեմ ուզում, որ դուք լսէք պատ-  
մածս:

Մի փոքր յետոյ լոյսը բացուեց: Առաւօտեան  
զով քամին վչեց և զուարթացը թմրած ուխտա-  
ւորներին: Երկինքը շառագունեց, ծիրանագոյն ամ-  
պիկները սկսեցին լողալ օղում: Զանգակները հնչե-  
ցին: Ժողովուրդն իրար անցաւ, մատաղացու գառ-  
ները մորթուեցան: Պատարազը սկսուեց: Պատարա-  
զից յետոյ չըաչեան, նադեան և իւր ընկերուկին  
զիմեցին դէպի տուն: Արան ու չուրին էլ առանձին,  
մասլահաթով հետևեցին նոցա:

XV

**Յ**աճախ առանձնասենեակում նստած Արան մտածում էր Հուրիի մասին: Նրան շփոթեցնում էր այն հանգամանքը, որ մայրը կը հակառակէ այդ բանին, քանի որ նա այն կանոնցից է, որոնք սէր չեն ընդունում, և չեն էլ ուզում ընդունել: Մեծամասնութիւնը գիտէր, որ Արան և Հուրին սիրահարուած են, հետևապէս շուտով կը նկնէր տիկին Սրբուհու ականջը: Այդ պատճառով էլ Արան աշխատեց աստիճանբար նախապատրաստել նրան և ապա յայտնել ամեն ինչ:

Հուրին շարունակում էր ամեն օր յաճախել Արայի մօտ. պատմում էր կարդացած գրքոյկը և լըսում նրա խրատները: Երբեմն այնպէս էր զգացում Արայի աղդեցիկ խօսքերից, որ արտասունքն աչքերին նետում էր նրա զիրկը և փաթաթւում վզովք: Այսպէս նոքա երկար փաղաքշեցին, համբուրուեցան և սիրեցին միմեանց...

Բայց ապակոնուած սիրով զիրեզմանում կը մաքրուի: Օրերն անցնում էին: Սեպտեմբերի վերջերն էր: Բնութիւնը ծանրաբեռնուած էր պտուղներով. Արան էլ յուսով էր, որ իւր սիրոյ և աշխատանքի պտուղն էլ կը քաղէ: Խեղճ երխտասարդ...

Աշնանային զով, պարզ և լրտսնկայ գիշերները, Բաբալեան Հուրիի բարեկամ—ծանօթները—սիրահանրերը դեարձեալ կախարդաբար դուրս հրա-

վիրեցին Հուրիին, որ արդէն կատարելապէս ձանձրացել էր ընթերցանութիւնից: Նա սկսեց միշտ դուրս գալ փողոց և վերսկսել սիրաբանութիւնները: Այս սրա վրայ չէին ազգում Արայի խօսքերը, նա արդէն կշտացել էր նորանից... բայց և միւենոյն ժամանակ նա շարունակում էր տեսալցել Արայի հետ, խաբելով նորան, որ իբր թէ բոլորովին չէ տեսնըւում տղաների հետ և նոյնիսկ զգում է նոցանից:

Արայի ընկերներից շատերը, որոնք գիտէին նրա սէրը, տեսնելով Հուրիի գաւաճանութիւնը, սկսեցին յախնել Արային ամեն ինչ: Սա, իհարկէ, չէր ուզում հաւատալ, բայց տեսնելով, որ բոլորեքեանք պիտում են այդ, նա խօսեց Հուրիի հետ և ասաց. «Ես բռնի կերպով չեմ ուզում քեզ ուզում և չեմ ըստիպում ինձ սիրել, ազատ ես»: Բայց խարզախ աղջկը իր կոկորդիկեան արտասունքներով և շաքարով ծածկուած թռւնաւոր սիրային խօսքերով փարատում էր նրա կասկածը: Սակայն, հետզհետէ Հուրին, ըսկած այդ ժամանակից, կորցնում էր իր նշանակութիւնն Արայի աչքում իբրև սիրոյ առարկայ: Այդ բանին զարկ տուեց մանաւանդ ինտազայ դէպքը:

Մի օր երեկոյեան Միսակը, Գուրգէնը և Սոկրատը եկան Արայի մօտ: Սա միայնակ էր և պատըշգամբում նստած զիրք էր կարգում: Տեսնելով երիտասարդներին, նա ցած իջաւ և ընդունեց նոցա: Նոքա դահլիճում նստեցան, իսկ Արան գնաց թէ պատրաստելու: Միսակը, որ նստած էր զբասեղանի մօտ, յանկարծ նկատեց Գալստեանի օրագիրը, որ

մուայմանը ընկած, մնացել էր սեղանի վրայ: Նա  
մի ընդհանուր հայեացք ձգեց գրածի վրայ. նրա  
աչքին ընկաւ միքանի տեղ «Հուրի» անունը:

—Սոկրատ, ահա նրա օրագիրը, տես, ամբողջը  
Հուրի մասին է: Թարածաւ նա Սոկրատին:

—Ճատ հետաքրքիր է, ասաց Սոկրատը և ա-  
րագութեամբ մօռ վագեց դէպի նա: Նոքա սկսեցին  
անյսլ աչքերով կարդալ: Բայց Գուրգէնը խլեց նոցա  
ձեռքից տետերը և արկղը գրեց, ասելով.

—Դա անազնւութիւն է, պարոնալք, նա կը  
վիրաւորուի:

—Միամիտ Արա, բացականչեց Միսակը, նորա-  
ծիլ բեղերը սրելով:

Այդ ըստէին ներս մտաւ Առան, բերելով թէլով  
իմ բաժակները:

—Արա, Հուրիդ ինչպէս է, հարցրեց՝ Սոկրատը  
կատակի եղանակով:

Գուրգէնն աչքով նշան արեց նրան, ասել ու-  
ղենալով, որ չոսէ այդ մասին, բայց Սոկրատը  
չը նկատեց:

—Ճատ լաւ է, պատասխանեց Արան ժպտալով:

—Լոիր, Արա, մեզ ընդունում ես իբրև ան-  
կեղծ ընկերներ, խօսեց Միսակը դաւնալով նրան:

—Բայց ինչու ես առաջարկում այդ հարցը,  
զարմացաւ նա:

—Դու դեռ պատասխանիր, չետոյ կասեմ:

—Այս, ընդունում եմ:

—Ուրիմն և հաւատացման ես, որ մեր տուած

խորհուրդներն անկեղծ սրտից բղխած կը լինին:

—Այս:

—Իրու սիրում ես Հուրիին, այնպէս չէ:

—Այս, սիրում եմ, պատասխանեց Արան:

—Բայց դու լաւ ճանաչում ես նորան, ըմբո-  
նել ես նրա հոգեբանութիւնը, քննել ես նրա սիրու:

Արան վերջին հարցի վրայ գլխի ընկաւ, թէ  
ինչ է լինելու առաջիկայ խօսակցութեան նիւթը:  
Նա լրեց:

—Չեմ կարծում, որ սառնարիւն կերպով ուշա-  
զրութիւն դարձրած լինի նրա վրայ, վրաբերեց Սոկ-  
րատը:

—Սիրելիս, դարձաւ Գուրգէնը Արային, մի՛ նե-  
ղանար, որ չօրս կողմից լարձակում ենք քեզ վրայ,  
մենք քո լաւն ենք ցանկանում և ցաւում ենք սր-  
խալ քայլիդ վրայ:

Բայց ինչ էք ուզում ասել, հարցըց Արան նա-  
յելով նորա:

—Նա ինչպիսի աղջիկ է, դարձեալ հարցըց  
Միսակը:

—Մի ազնիւ օրիորդ է, ասաց Արան:

—Ազնիւ, հ’ը հ’ը հ’ը, ծիծաղեց նա գլուխը  
շարժելով:

—Մի ծիծաղիր, Միսակ, դրանով ինձ վիրա-  
ւորում ես:

—Խաբուած ես, սիրելիս, խաբուած, ասաց  
Միսակը ձեռքը շարժելով:

—Ի՞նչպէս թէ խաբուած եմ:

— Նա գայլ լինելով հանդերձ գառի կերպարանք է ընդունել քեզ մօտ, մեկնաբանեց Սոկրատը:

— Ճատ սիսալ էք:

— Դու միայն ասում ես «սխալում էք», բայց նոքա փաստեր ունեն, ասաց Գուրզէնը չարանալով:

— Ափսոս դու, ափսոս քո սէրը, որ նրան ես նուիրել, ասաց Սոկրատը, վերցնելով թէյի բաժակը:

— Իսկոյն կը համոզուի, Սոկրատ, մի փոքր էլ սպասենք, ասաց Միսակը ծոյի գրպանը քըքրելով:

— Ախ, սիրելիք, գուք չը գիտէք, թէ նա ինչ հանգամանքներում, ինչ պայմաններում ապրել, մեծացել է, խօսեց Արան մի թեթև հոգւոց հանելով:

Միսակը ծոյից հանեց մի ինչոր նամակ և Սոկրատին ցոյց տալով, կըկին գրպանը զրեց:

— Թէ ասա, տեսնենք, թէ ով է այդ քո չուրիդ. Հարցրեց Գուրզէնը:

— Ես էլ շատ եմ հետաքրքրում, ասաց Սոկրատը:

— Հուրին մի հասարակ ընտանիքի դաւակ է, ասաց Արան, հայրը վախճանուել է նրա չորս տարեկան հասակում: Այսուհետեւ նա մնացել է բաղդի և պատահականութեան կամայականութեան յանձնած: Նրա մայրը, լինելով տղէտ և անհոգ կին, ուշադրութիւն չէ դարձրել իր դուստրների ոչ միայն դաստիարակութեան, գործին, այլ և պարկեշտութեան և բարոյականութեան:

— Ճատ ճիշտ է, վաւերացրեց Միսակը:

— Հուրիի քոյլերն սկսել են սիրաբանութիւն-

ներով մթնեցնել իրենց օրերը: Տկարութիւնը վրայ հասնելով, նոցա իջեցրել է զերեղման: Հուրին էլ, բնականաբար, իբր փոքր, հետևել է նոցա ամեն բանով և ընկել նոցա հոսանքը:

— Հապա ուր են մեր մանկավարժները ու հոգեբանները, ասաց Սոկրատը, որ հետաքրքրութեամբ լսում էր:

— Մի խօսքով, ինչ էլ որ լինի նա, սիրում եմ նորան:

— Նա էլ քեզ սիրում է, հարցրեց Միսակը:

— Այո՞:

— Նա չի կարող սիրել, Արա, հասկանում ես:

— Տեսնում ես, Գուրզէն, ինչպէս փչանում է մատաղ սերունդը, ասաց Սոկրատը:

— Եղբայր, հապա ինչ են անում ուսուցիչները, վերակացուները, հարցրեց Գուրզէնը վրդովւած:

— Ի՞նչ կարող են անել նոքա, ձառեց Միսակը, քանի որ, սանիկը մի քանի ժամ միայն գըպրոցում նոցա ձեռքի տակն է, իսկ օրուայ մնացեալ մեծ մասը տանը նոցա աչքերից հեռու, տղաներով կամ օրիորդներով է զբաղուած: Թէ, ասա, ինդրեմ, դու որ զիտես, թէ հուրին դպրոցից դուրս, իւր ծընողի աչքերի առաջ կամ նոյնիսկ ծածուկ փչանում է, ինչու չես իմաց անում վարչութեանը, որ նա միջոցներ ձեռք առնէ այդ բանի դէմ, կամ թէ միւս անմեղներին զերծ պահէ նրանից. կարծեմ դա մատնութիւն կամ մի պախարակելի քայլ չէ:

— Ի՞ւ ինչ գործն է, ինչու անպատճառ ես դառ-

նամ վատամարգի, ասաց Սոկրատը յետ-յետ քաշուելով:

— Ահա հէնց այդ կեղծ պատուասիրութիւնն է, որ մեղ չի թոյլ տալիս մեր բարոյական պարտքը կատարելու շեշտեց նա: Լաւ, թողնենք այս դատողութիւնները, առ և կարդա, Արա, ասաց նա և հանելով նամակը տուեց նորան:

— Միայն քաջ եղիր, աւելացրեց նա:

Արան նայելով զրին, խսկոյն ճանաչեց չուրիի ձեռագիրը: Միքանի տող կարգալով, նա գունատուեց և շփոթուեց. անմիջապէս շպրտեց նամակն, ասելով.

— Սա կեղծիք է, որով դուք ուզում էք ինձ բաժանել չուրիից:

Սոկրատը կռացաւ, վերցրեց նամակը և սկսեց մտքում կարդալ:

— Բարձր կարդա, Սոկրատ, ասաց Գուրգէնը, որ ապշած նայում էր մերթ որան, մերթ նրան:

Սոկրատն սկսեց կարդալ. —

«Միլելի իմ Ռ...

Դու չես հաւատում, որ քեզ սիրում եմ, երգւում եմ մօրս արեով, որ քեզ էլ շատ եմ սիրում. եթէ ըստ սիրէի, անցեալ օրը չէի դալ քեզ հետ ըրբունելու առաւտոից մինչև ճաշ: Դու ուզում ես, որ Գալստեանին ըստ սիրեմ, բայց ես նըան շատ եմ սիրում. նա չափաղանց սիրում է ինձ: Խնդրում եմ նամակների մէջ համբոլը մասին մի զրիր և մի խօսիր, կարող է պատահել, Արան իմանալ, այն ժամանակի, շատ վատ կը լինի: Ճաբաթ գիշեր եկ:

Հուրի»:

Արան, որ լսում էր, հակառակ իր ցանկութեան վեր ցատկեց տեղից և ասաց. «Գնանք, այսօր շաբաթ է, զնանք ստուգենք ամեն ինչ»: Նրա ծընկերը գողում էին, ատամները իրար զարկւում, կարծես, ձմռան սաստիկ ցրտում լինէր, նա իրան կորցըրել էր:

— Սպասիր, եղբար, մի շտապիր, դեռ վաղ է, մի վոքը յետոյ գնանք, հանդարտեցրեց Միսակը բռնելով նրա ձեռքը:

— Հրէշ է, հրէշ, այդ արարածը, դուրս թռաւ Գուրգէնի բերանից:

— Միսակ, որտեղից է քեզ այս նամակը, հարցրեց Արան:

— Այսօր առաւօտ օրիորդ Արուսեակը բերեց ինձ տուեց և ասաց, որ գտել է, պատասխանեց նա:

Արալին շրջապատեցին զանազան խառնիշփոթմտքեր: Նա գետ ընդունում էր, որ այս բոլորը չարախնդութեան արգասիք է, բայց երբ նայում էր նամակին և տեսնում չուրիի զիրը, նրա արլւնը գլուխն էր զարկում, կատաղեցնում նորան, և այդ վալրկենին պատրաստ էր նա ոչնչացնելու այդ դարշելի արարածին...



XVI

**Ա**ինչ մեր երիտասարդները վիճաբանում էին, սպասելով ժամանակի անցնելուն, Բաբալեանների բնակարանի առաջ մի ուրիշ երևոյթ էր տեղի ունենում:

Դեռ երեկոյեան՝ զանգերից լիտոյ, եկել էր «Թ-ն» իր կրքերին խաղալիք՝ Հուրիի մօտ, և նոքա երկար, շատ երկար առանց ոչ ոքից՝ նոյնիսկ դրացի կանացից, պատկառելու սիրաբանութեամբ և լպիրշ հանաքներով էին զբաղուած: Նադեան էլ մասնակցում էր. իսկ միւս երկրպագուները դիմացում կանգնած՝ նախանձով բորբոքում էին «Թ-ի» դէմ, որին զբաղեցնում էր Հուրին: Բայց սա այնքան բարի էր, որ խօսելով իր հետ կանգնածի հետ, չէր զլանում միւնոյն ժամանակ մերթ-մերթ քաղցր ժըպիտներով և հայեացքներով ուրախացնել նոցա:

Օրը մթնեց: Ժամերն աննկատելի կերպով սահեցան անցան այդ բախտաւորների համար: Նադեան ձանձրացաւ մասլահաթից և ներս մտաւ սենեակ: Բայց Հուրին դեռ տաքանում էր, նրա կրքերի քաօսը բռնկում էր հետզհետէ և այրուող շրթունքները գողգողում: Հուրին տեսնելով, որ միւսները չեռանում իրենց մօտից, դիմեց խորամանկութեան: Նա ճանապարհ ձգեց «Թ-ին» և պատուիրեց քառորդ ժամից յետոյ գալ: Թ-ն հրաժեշտ տալով հեռացաւ, իսկ Հուրին միւսներին «բարի զիշեր» ասե-

լով դուռը փակեց և ներս մտաւ: «Քեզ լոյս բարի, Հոգիս», — «բաս մեզ հետ չես խօսում, սիրելիս», — «դուշկա, դուշկա», լուեց նոցա բերաններից:

Հուրին նստեց ճրագի մօտ և սկսեց կարդալ Արայի տուած գրքոյիկը — «Առողջ հողին առողջ մարմընի մէջ»: Բոլորը քնած էին արդէն: Նա ծալեց գրքոյիկը և շպրտեց մի կողմ: Ապա կամմացուկ դուրս եկաւ, և տեսաւ, որ Թ-ն արդէն կանգնած է այնտեղ: Նոքա նստեցան դռան մօտ շինած նստարանի վրայ և յենուելով իրար շարունակեցին սաղ ու բազը:

— Հուրի ջան, ասաց Թ-ն:

— Հաջան, պատասխանեց Հուրին:

— Դու ինձ սիրում ես:

— Իհարկէ, սիրում եմ, որ չը սիրէի, այս կէն զիշերին քեզ հետ դուրսը չէի լինիլ:

— Բայց մի հարց տամ, միայն ճիշտ պատասխանիր:

— Ասա՞:

— Ի՞նձ ես շատ սիրում, թէ Գալստեանին: Հուրին տատանուեց. Նա զգում էր, որ դէպի Արան աւելի մի զօրեղ զգացմունք է տածում, քան միւսներին և իրան: Նա ժպտաց և սսաց:

— Երկուսիդ էլ շատ եմ սիրում:

— Չէ, չէ, ասա կամ ինձ կամ նրան:

— Քեզ էլ, նրան էլ:

— Չէ, ես հաստատն եմ ուզում իմանալ, ինձ թէ նրան:

— Նա ձեռքը ձգեց Հուրիի մէջքովը, իսկ միւսով բռնեց նրա ձեռքը: Այս բանն աւելի լաւ տրամադրեց Հուրիին:

— Քեզ եմ շատ սիրում, Որ... շշնչաց նա ժըպտալով:

— Հապա ի՞նչու ես ամեն օր գնում նրա մօտ, գրքեր ստանում, ժամերով խօսում: Ես քեզ համար այն տեսակ սիրահարական զրքեր կը բերեմ, որ իսկի Գալստեանն էլ կարդացած չը լինի: Ասա տեսնեմ, ի՞նչ է ասում նա քեզ:

— Է՞հ, ի՞նչ եմ կորցնում, ժամանակ ենք անցկացնում:

— Հապա ի՞նչու ես կարդացած զրքերդ պատմում նրան, լսում ես նրա ասածները:

— Ի՞նչի ես նախանձում, նա էլ սիրուն, լաւ տղայ է. ախ, Որ. ջան, եթէ իմանաս, թէ ինչպիսի խելօք երիտասարդ է: Գիտես, ի՞նչքան լաւ-լաւ օրիորդներ ունի ծանօթ: Գիեռ ես չորս հոգի գիտեմ, որ սիրահարուած են նրա վրայ:

— Ես չեմ ուզում, որ դու նրա հետ գործ ունենաս, էլ չը դնաս նրա մօտ: Մէկ էլ չըաչեան է լաւ տղայ, չէ, նա է խլում քեզ մեզանից ու Արայի գիրկը ձգում:

— Ոչ, ոչ, սիրելիս, խնդրում եմ այդպիսի բան չասես, Արան էլ լաւ տղայ է, որին սիրում եմ, չըրաչեան էլ նոյնպէս, որին ես միշտ լսում եմ: Ես գիտեմ իմ գործս: Գու քեզ համար մտածիր, ում որ ուզենամ, կը սիրեմ ու... քեզ խօ սիրում եմ:

Գօն-ժուանը տեսնելով, որ զուր կը լինի այդ մասին խօսելը, նիւթը փոխեց.

— Գիտես, Հուրի, քո գրած նամակդ կորցըել եմ, ասաց նա մեքենայաբար պտրելով զրպանները:

Հուրին սարսափահար եղաւ:

— Ճիշտ ես ասում Ո. հարցըեց նա:

— Ինչպէս թէ կորաւ, հիմա որ Արան գտնի:

— Անպատճառ Արան պէտք է գտնի, վրայ բերեց Ուն:

— Նա չը գտնի, նրա ընկերները կը գտնեն ու նրան կը տան: Բոլորն էլ ինձ ճանաչում են ու թշնամի են ինձ, ասաց նա վրդովուած:

— Անհոգ եղիր, սիրելիս, հանգստացըեց Ուն և ցանկացաւ նրա ձեռքը բռնել, բայց Հուրին թող չը տուեց:

— Ի՞նչ անեմ, Տէր Աստուած, կրկնում էր նա: Ուն տեսնելով, որ Հուրիի տրամադրութիւնը փոխուեց, որ այլևս նա չի կարող նպատակին հասնել, կամեցաւ կատակի ձեւ տալ: Ժամերով նա ըսպասել է, խօսել է, զրգուուել ու բաժանման բովէին մի համբոյր չըստանայ նրանից, այդ անկարելի բան է:

— Հանաք արեցի, Հուրի, ուզեցայ քեզ վախեցնեմ, ասաց նա ծիծաղելով, ի՞նչ շատ վախեցար:

— Ճիշտ, հանաք ես անում, հարցըեց Հուրին սրտատրովի:

— Աստղած վկայ, հանաք եմ անում, նամակը  
տանն է, փաղը կը բերեմ քեզ կը տամ, ասաց նա:  
Հուրին հանդարտուեց և սկսեց ժպտալ:  
Արդէն ժամը 12-ն էր: Չորս կողմում տիրում էր  
խորին լուսվթիւն: Ամենքը քնել էին:  
— Փամանակ է գնալուս, ասաց նա խորհրդա-  
ւոր տօնով:

— Այո, արդէն ուշ է, գնա, ասաց Հուրին:  
Բայց ոչ մէկը տեղից չը շարժուեց, կարծես  
սպասում էին մի բանի: Նոքա նայեցին իրար: Դօն-  
ժուանը կրկին փաթաթուեց Հուրիին, և, սա էլ  
նրան: Նոքա սկսեցին համբուրտել: Միքանի ըո-  
պէ լուռ մնացին այս պօղայում:

Նոյն բոպէին մեր երիտասարդները, որ արդէն  
զիմում էին դէպի Հուրիենց բնակարանը, մօտեցան:

Արան լուռ զլիսիկոր շտապում էր: Ի՞նչ յուզիչ  
մտքեր գալիս, դնում էին նրա զլիսով: Ո՞՛հ, Տէր  
Աստուած, զուցէ այժմ վաւերանայ Հուրիի կեղծ լի-  
նելը, զուցէ այժմ իր աչքով տեսնէ նրան ուրիշնե-  
րի զրկում նստած, համբուրելիս, այս ժամանակ:  
Այն ժամանակ նա ատրճանակը կուղէ առաջ Հու-  
րիի սրտին, ապա իրեն: Այդ բոպէին նա  
ինստինկտար ձեռը տարաւ զրպանը, տեսնելու  
թէ ատրճանակը մօտն է: Բայց, բարեբաղդաբար,  
թէ գժբաղդաբար մօտը չէր: Արդէն նոքա մօտեցան  
Բարալեանների բնակարանին և պէտք էր թեքուել  
աչ կողմ, որ մի նեղ փողոց էր, որտեղ և գտնւում  
էր վերոյիշեալ տունը:

Նա կամենում էր շտապով թեքուել աչ, բայց  
Միսակը բռնեց, նրան և կանգնեցրեց, ասելով:

— Սպասիր, Արա, զզոյշ եղիր, կը նկատեն.  
Սոկրատ, Գուրգէն, դուք կանգնեցէք այստեղ և միք  
երեալ, իսկ ես ու Արան մօտենանք դռանը, Արա,  
աշխատիր 22ովկ անզամ չը բարձրացնես:

Սոկրատն ու Գուրգէնը կանգնեցին պատի տակ,  
իսկ նոքա ծոռուելով նեղ փողոց, պատի տակից մըթ-  
նով, զիշերային ոգիների նման, սկսեցին առաջ  
զնալ:

Այդ վայրկեանին Հուրին ու Ռ-ն գեռ դրկա-  
խառնուած էին: Նոքա չէին նայում իրենց շուրջը,  
կարծելով, որ այս կէս զիշերին ոչ ոք չի վրայ դալ:  
Թշուառականներ:

Միսակը նկատեց քարի վրայ սև ստուերներ և  
լուռ, ձեռքով զարկելով Արային, ցոյց տուեց այն:  
Անքա կամաց-կամաց մօտեցան և կանգնեցին մօտե-  
րը: Արան ճանաչեց Հուրիին սև կարճ գուստով:  
Նա կատաղեց և կամենում էր յարձակուել երկուսի  
վրայ, բայց զսպում էր իրեն, բացի այդ Միսակն էլ  
պինդ բռնեց նրա թեւը, որ մի զուցէ չը զարկէ  
նոցա:

Նոքա արդէն կշտանալով իրարից, կամենում  
էին հրաժեշտ տակ, որ Արան «անառակներ» գոչելով  
յարձակուեց նոցա վրայ: Բայց Միսակը պինդ բռնեց  
և խանդարեց: Նոքա կայծակահար եղան, Ռ-ն խու-  
սափելով հարուածից վեր ցատկեց և սկսեց, որքան  
ոյժերը ներում էին, վազել, և անյալտացաւ զիշերուայ

իսաւարի մէջ: Իսկ չուրին, որ քիչ մնաց ուշաթափուէր երկիւղից, ներս վազեց բակը և անմիջապէս դռութ փակեց:

— «Գրաւածան» գոչեց Արան նրա յետևից:

Այդ բոպէին Սոկրատն ու Գուրգէնը լսելով նրա բարձր աղաղակը, մօտ վազեցին, բայց ոչինչ ըլ հասկացան:

— Տեսա՞ր, սիրելիս, ասաց Միսակը Արալին:

— Տեսայ, տեսայ և համոզուեցի, որ չուրին անքարոյական աղջիկ է, որ նա ամբողջապէս խրուած է անքարոյականութեան տղմի մէջ, որ գուք էլ իմ աղնիւ և բարեկամ ընկերներս էք. նա, նա, ախ, դռ հրէշ... խարերայ... սպանել պէտք էր... բացականչում էր իրեն կորցրած:

— Ո՛հ, խորտակուեց սէրս, ես խաբուած եմ, հառաջեց նա և ոկտեց երեխայի նման հեծլիլտալ...



## XVII

Ահա այս դէպքը եղաւ նոցա սիրոյ ամենամեծ պայքարը: Մինչ այդ, Գալստեանն իր ամբողջ էութեամբ սիրում, պաշտում էր չուրիին, գլտենալով հանդերձ նորա անցեալը, իսկ այժմ այդ սէրը փոխուեց ատելութեան և վրէժինդրութնան: Նա աշխատեց մոռանալ նրան, ջնջել նրա անունն իսկ իր լիշողութեան միջից: Այնուհետև նրա մէջ գլուխ բարձրացըց պատուի և սուրբ սիրոյ արարտաւորուած զգացմունքը, որ ամենայն ուժով վրէժ էր պահանջում այդ նեխուած ծաղկից:

Օրի վրայ զգալի կերպով նուազում և տըկարանում էր մեր խաբուած հերոսը: Նոս խուսափելով մարդկանցից, ժամերով նստած իր առանձնասենակում, մտածում էր այդ եղելութեան վրայ, և երբեմն մեղադրում, նախատում էր ինքն իրեն, ամենամեծ յանցաւոր ճանաչելով այդ բանում, որ չունեցաւ արնական կամքի ուժ, ըլ կարողացաւ խեղդել իր մէջ այդ սէրը և խաբուեց մի ապականուածի կեղծ ու կախարդ սիրային հայեացքներից:

Մտածմունքները ճնշեցին նրան:

Կարծես, կեանքն էլ տքնում էր նրա մատաղ հասակի վրայ դնել բազմահոգս ծերունու կնծիռներ և թախիծ: Ուղիղ մի շաբաթ յետոյ նա արդէն պառկեց անկողնում, և նոյնիսկ դժուար էր ճանաչել այն առողջ, զուարթ և գեղատեսիլ Արա Գալստեանին,

Ներկայ անկողնում տառապող դալկացած, գեղնած կմախքի և ջղերի մէջ:

Աշնանային զով օրերից մէկն է: Արեգակը էջաւ հորիզոնից և գիշերային զեփիւռը փչեց: Բժիշկը միքանի ըովիչ առաջ դուրս ելաւ Արայի մօտից, նշանակելով նոր զեղեր և տարով պատշաճաւոր խորհուրդներ: Հիւանդը շուռ ու մուռ էր զալիս անկողնում և չէր հանգստանում: Ահա նա թոյլ ուժերը լարելով և ձիգ թափելով, վեր ելաւ տեղից, հագաւ գիշերային վերարկուն, մօտեցաւ լուսամուտին և բանալով, նստեց մօտիկ, և սկսեց դուրս նայել: Երեկոյեան հովը զարկեց նրա թմրած ճակատին և մի փոքր զուարթացրեց: Նա աշխատում էր ոչինչ չը մտաբերել, և շարունակ նայում էր դուրս, սպասելով Հրաշեայի գալստին, որ ամեն երեկոյ այցելում էր: Բայց մտքերը պաշարեցին նրան: Բարձրածայն հառաջներ էին դուրս գալիս նրա այրուած և տանջուած սրտի խորքերից: «Ո՞հ, Տէր իմ Աստուած, միթէ իրականութիւն է սա», մտածում էր նա. «արդեօք երաղ չէ»: Նա անդիտակցաբար ձեռով զարկեց պատուհանի ապակուն և քիչ մնաց, որ կոտրէր: Այդ աղմուկից ինքն էլ վեր թռաւ: «Ո՞խ, միթէ թառամում եմ, զեռ չը բացուած, միթէ զերեզման պիտի իջնեմ զեռ կեանքի քաղցր պտուղները չը ճաշակած: Դու ես պատճառը չուրի»:

Նա նստած տեղից վեր ելաւ և սկսեց սենեակում յետ ու առաջ քայլել: «Ճակատագիր է, ար-

դեօք, որին չեմ հաւատում», շարունակեց մտածել նա, «ես ուզեցի, կամեցայ, երջանիկ լինել այս ժամանակաւոր կեանքում. և ինչն է երջանկաւթեան աղբիւրը, եթէ ոչ սէրը: Առանց սիրու մարդ կը նըմանի աշնանային ծառի չորացած, զունատուած ճիւղի: Ես քեզ նուիրեցի իմ սիրտը, իր բոլոր զգացմունքներով, սիրեցի, աստուածացը քեզ, ով դուխարդախ կոյս, իսկ դու փոխարէնը թունաւոր սըրտիցդ թոյն ներհոսեցիր իմ երէտասարդ կեանքիտ մէջ»:

Այդ բոպէին տիկին սրբուհին լսելով նրա քայլերի ձայնը, ներս մտաւ և խանգարեց նրա մտածմունքներին: Նա զարմացմամբ հարցըց.

— Ի՞նչու ես վեր կացել անկողնից, ինչ է պատահել, չէ որ բժիշկը պատուիրել է պառկած մնալ:

— Ոչինչ մալրիկ, անկողնում սաստիկ անհանգիստ էի, վեր ելայ մի փոքր շըջելու սենեակում, զիստ էի, վեր ելայ մի փոքր շըջելու սենեակում, գուցէ հանգստանամ, պատասխանեց նա թոյլ ձայնով:

— Պառկիր, որդիս, պառկիր, կատարիր բժշկի խորհուրդները, ինձ մի դժբաղդացնիր. նրա աչքերից զլորուեցին արտասունքի կաթիլներ:

Խեղճ մալլ: Դեռ դու ոչինչ չը զիտես, չը զիտես, թէ ինչ է պատահել. թէ ինչ է քո սիրելի որդու տկարութեան պատճառը: Արդեօք ինչ կասես եթէ իմանաս, որ մի աղջիկ է այդ բանի պատճառը: Արան խղճալով իր վշտացեալ մօրը, զիջեց նրա յորդուանքին և պառկեց անկողնում: Տիկին Արքուհին

գնաց և թէյ բերեց նրա համար, դրեց անկողնու ժօտ և գուրս ելաւ:

«Բայց եթէ մեռնեմ, ինչ կը լինի այդ թշուառ մօր զրութիւնը» մտածեց հիւանդը, նայելով իր մօրը, «ո՛հ, նա կատարելապէս կը ցնորուի»: Ա՛խ, անզգան չուրի, տուր իմ սէրս, իմ զգացմունքներս, վերաղարձրու իմ պատիւս և առողջութիւնս: Ա՛խ, երանի թէ մի օր կարողանում հանդիպել քեզ, այն ժամանակ, այն ժամանակ ես քեզ կսպանեմ»: Վերջին խօսքերը նա բաւականին բարձր արտասանեց, այնպէս որ եթէ մէկը նտած լինէր այստեղ, կը լսէր. նա մի շարժում գործեց անկողնում բռունցքները սեղմեց, կարծես պատրաստում էր զարկելու մէկին:

Այդ միջոցին գուռը բացուեց և ներս մտաւ չըրաչեան, ձեռին մի ինչ որ փոքրիկ կապոց բռնած: Դա խմորեղէն էր, որ նա բերել էր ընկերոջ համար, թէյ հետ ուտելու:

Հիւանդը գլուխը վեր բարձրացրեց և տեսնելով չըրաչեալին, ուրսխացաւ:

—Ի՞նչպէս ես, սիրելի Արա, հարցրեց չըրաչեան, ամոռը մօտ դնելով և նստելով:

—Քանի լիշում եմ այն անպիտանին, աւելի վատանում եմ, յուս չունեմ ինձ վրայ, սիրելիս:

—Երեխան ես, Արա, ինչե՞ր ես խօսում, ամօթքեզ. բժիկը եկաւ:

—Եկաւ և, նոր գեղեր նշանակեց:  
Սպա նա նստելով անկողնում, ասաց.

—Գիտե՞ս, չըրաչեայ, ինչ եմ մտածում:

—Ի՞նչ:

—Մտածում եմ, որ ինչ կը լինէր, որ բոլոր երիտասարդների և օրիորդների, այսինքն մատաղ սերունդի: զգացմունքները սուրբ և ազնիւ լինէին: Արարոյական սկզբունքները արմատացած լինէին նորաբոյական ամուսնութիւնները արմատացած լինէին նորաց հողու խորքերում և միւնոյն ժամանակ սէրը նոցա ամուսնական կեանքի հիմնաքարը դառնար, ասաց հիւանդը:

—Իղձեր ու ցանկութիւններ, բաշականչեց հրաշեան:

Մի փոքր լոռութիւնից յետոյ, խասեց հիւանդը:  
—Չըրաչեայ, նրա պատկերը չի հեռանում աչքերիս առաջից:

—Աւրեմն դու գեռ սիրում ես նորան, հարցրեց չըրաչեան վրդումած ձախով:

—Սիրել, ոչ թէ սիրում եմ, այլ...

—Հապա ինչու ես մտածում նրա մասին:

—Հակառակ իմ ցանկութեան, մտածմունքները շրջապատում են ինձ, ասաց Արան:

—Արդեօք նրա խիղճը տանջում է իրեն, զարձաւ նա չըրաչեալին, արդեօք նա զգում է իր արածները, զղջում է:

—Զարմանում եմ Արա, թէ ինչ հասկացողութեան տէր ես: Զէ որ նա քեզ սիրեց ըստ քո, պաշտեց և սուիրուեց, հապա ինչու նրան գտար ուրիշի զրկում, ուրեմն նա ոչ խիղճ ունի, ոչ և զղջում:

—Ա՛խ, վրէժ, վրէժ, դրեց հիւանդը, ձեռքը

թափ տալով, այդ պարագիտը ծծեց իմ կեանքիս ամենաքաղցր հիւթը, և ես թառամում եմ:

— Հանգստացիր, սիրելիս, նա արդէն կը պատժուի, ասաց Հրաշեան, բռնելով նրա ձեռքը:

— Եթէ ես մեռնիմ, Հրաշեայ, քեզ իբրև աղնիւ ընկերի, յանձնում եմ, որ նրա վրէժը լուծես, եթէ ոչ, դու իմ ընկերը չես, շարունակեց հիւանդը անքալով:

— Բայց գիտես, Արա, այն ժամանակ ուրիշները կը մտածեն, թէ նրան բռնութեամբ ուզում էիր ստիպել քեզ սիրել:

— Բռնութիւն, միթէ սէրս բռնութիւն էր: Պու էլ ընկեր, դու էլ սկսում ես դաւաճանել, ասաց նա կնճռուտուելով:

— Սիրելիս, դու ինձ չը հասկացար: Ես զիտեմ, որ դու սիրեցիր նրան, բայց նա քո սէրը իր սիրուց կամ ծեց, ահա և այդ հանդամանքն եղաւ այս ամենի պատճառը:

— Ասա, խնդրեմ, Հրաշեայ, նա արժանի չէ վը-ը ժինդրութեան, հարցրեց հիւանդը նայելով նրա աշքերին:


— Նա արդէն ստացաւ իր պատիժը. ես նրան ստատիկ անարգեցի և թքելով երեսին, հեռացաւ ընդ միշտ: Մօքն էլ յայտնեցի նրա բոլոր արարքները, բայց նա ինձ և քեզ թշնամիներ համարեց իր «աննման» հուրիին: Բայց բնութիւնը վրէժխընդիր կը լինի նրանից, խորհրդաւոր կերպով շեշտեց Հրաշեան:

— Ինչպէս, հետաքրքրութեամբ հարցրեց Արան:

— Թոքախտն արդէն բորբոքուել է: Նա չէ կարողանում ուսումնարան գնալ, տկար է: Մի խօսքով սիրելիս, մոռացիր նորան, առողջացիր և սկսիր գործել: Գոնէ խղճա մօրդ, ընտանիքիդ: Ոչինչ, առաջին սէրդ անյաջող էր, բայց դա փորձութիւն է, կեանքի բովից անցնել է նշանակում: Բացի այդ կարելի է համարել երիտասարդական հրապուրանքները: Ես էլ շատ եմ արել, և անում եմ: Հէնց հիմա օրիորդ Գիւլումեանը կարծում է, որ ես սիրածա հարուած եմ իր հետ, և կամուսնանամ հետը: Բայց ո՞վ գիտէ, թէ հանդամանքերն ինչպէս կը փոխուին:

— Ո՞չ, ո՞չ, իմս սիրավին խաղ չէր. ես սիրեցի իդէալական սիրով. բայց նա խաղաց իմ սիրոյս համար... ասաց Արան դլուխը դնելով բարձին և հառաչելով:

Հրաշեան երկար մնաց նրա մօտ և աշխատեց հանդարտեցնել նրան: Մօտ ժամի 12-ին գիշերուայ նա գնաց տուն, առողջութիւն մաղթելով ընկերոջը:



## XVIII

**Ա**րքան որ մարդս ընկնի իր բարձրութիւնից, կորցնէ մարդուն յատուկ լաւ զգացմունքները, և հաւասարուի կրքոտ անասուններին, այնուամենայնիւ նրա ներքին աշխարհի լարիւրինթոսի անկիւններից մէկում կը մնայ ազնիւ զգացմունքի մի կայծ: Եւ կարող է այդ կայծը բռնկուել ու ոչնչացնել այնտեղ բուն դրած նեխումն ու ապականութիւնը:

Հուրին զրկուելով Գալստեանից, սկսեց լրջօրէն մտածել իր արածի վրայ: Նա յաճախ ժամերով կենդրոնանալով ինքն իր մէջ, հաշիւ էր տալիս իր անցեալի մասին: Նա վախենում էր, որ մի գուցէ ուսումնարանում լսեն իր վարքի մասին և դուրս անեն: Այն չարախնդաց գիշերուանից սկսեալ նա տանից չէր դուրս դալիս, այլ ևս նա չէր արժանացնում իր քաղցրաժպիտ հայեացքներին իւր լեռելից շրջող երիտասարդներին:

Նրա խիղճը սկսեց խայթել ամենադաժան կերպով: Բացի այդ, մի անսպասելի փոփոխութիւն պատահեց նրա կեանքի մէջ: - Երկար տարիների բազմաթիւ երեկոյթների փոշին ու ծուխը, գուրս ելած ժամանակ սառն քամու արած վատ ազդեցութիւնը նրա մատաղ թոքերի վրայ, խղճի խայթը, անընդհատ մտածմունքն ու հառաջելը, օբերով քաղցած մնալը... ահա այս բոլոր հանգա-

մանքները, միախառնուելով, Փիզիքական վերջին հարուածը տուին դժբաղդ Հուրիին:

Նրա թոքերը սկսեցին բորբոքուել. նա յաճախ ուշաժափուում էր և հազիւ հազ սթափուում: Դեռ անցեալ ձմեռ բժշկի հմտութիւնը փրկեց նրան մահից:

Այժմ նա ուզում էր յաղթել հիւանդութեանը, բայց իզուր: Նա նման էր մի բարակ մոմի, որ վառուելով շատ կարճ ժամանակում պիտի հանգչէր: Նա երբմն պառկում էր անկողնում, երբեմն վեր կենում:

Ահա և այս ժամանակում նա բոլորպին փոխուեց: Նրա սրտի անկիւններից մէկում թաղնուած ազնիւ զգացմունքը, որ դեռ նրան չէր ձգել մարդուս արժանաւորութիւնից, բռնկուեց: Հուրիի առաջ միշտ կանգնում էր իր անցեալը: Մտաբերում էր նա իր համարձակ քայլերը, զուարճախօսութիւնները այլասեռ և փողոցային տղաների հետ, սիրաբանութիւնները, համբոյնները, և այս բոլորը մտաբերելով՝ ձնշում էին նրա սիրտը, խլում էին նրա հանգիստը: Մի բռպէ նա ինքը լուռ հանդիսատես էր երևակայում իրեն այդ բոլորին և զգուելով զգում ալդպիսի քայլեց: Հապա ինչու էր հրաչեան շարունակ պախարակում նրան, յանդիմանում, և երբ չէր լսում նրան, նա խորշում էր Հուրիից: Ոչ միայն հրաչեան, այլ և վերջերը, երբ լսեցին Արային խաբելու մասին, շատ օրիորդներ, նոյն իսկ իր ընկերուհիները սկսեցին հեռանալ նրանից և ատել: Հապա Արան, որ սիրեց նրան անկեղծօրէն, պաշտեց իրեւ մի սրբի, այժմ ինչպէս տանջւում

է, դառն է թւում նրան կեանքը. ով է այդ բանի յանցաւոք, — դարձեալ չուրին: Նա զգաց, որ ինքը Արայի եղունգին անգամ արժանի չէ եղել, որ Արան բարոյականութիւն էր քարոզում իրեն, եղէալներ էր տալիս, բայց ինքը դոցա փոխարէն իր թունալից շրթունքները հպեց նրա շրթունքներին և թունաւորեց: Ամբողջ քաղաքն իմացաւ այդ բանը, և դատապարտեց չուրին: «Միթէ ես եմ այդ չուրին», մտածում էր նա երբեմն-երբեմն: Ել ինչ երեսով պէտք է տանից գուրս զայ, էլ ինչպէս պէտք է պարկեշտ օրիորդ անունը կրէ: Նա արդէն մարդկութիւնից էլ ստոր է եղել: Ի՞նչ պէտք է անել, գնալ ջուրն ընկնել, այլ կերպ չի կարելի: Բայց ոչ, դեռ ապրել է ուզում նա: Զի նա արդէն ըստ իւրա կեանքի քաղցր հիւթը քառ ճաշակեց: «Ոչ, ոչ, ես վերին տստիճանի ընկեց, ճաշակեց: «Ոչ, ոչ, ես վերին տստիճանի ընկեց եմ բարոյապէս, այո՛, փչացած եմ» մտածում կած եմ բարոյապէս, այո՛, փչացած եմ» մտածում էր նա: «Խեղճ Արա, ես քեզ խաբեցի. թունաւորեցի»: Նա զգալով այս բանը, կամեցաւ հէնց ինքը ճաշակեց: Բայց այդ էլ իգուր: Արան խորին յանդիմանօք իմտ ուղարկեց Արուսեակին:

Օրերն անցնում էին: Հուրին դալիանում էր, որպէս ծառիցը կտրած մի ճիւղ: Իսկ Գալստեանը շնորհիւ բժշկի եռանդուն ջանքերի, և ընկերների մխիթարանքի և փայփայանքի, առողջանում էր: Նա երբեմն շրբերը հագնում էր և տանը շրջում: Բայց դեռ գտնուում էր նոյն կմախքացած գրութեան մէջ թուխ-կարմիր գոյնն իսպառ ոչնչացել էր նրա երեսի վրայ:

Խնդրել Արայից և նուիրուել նրան: Այս միտքը մի փոքր կազդուրեց նրան: Բայց ինչ երեսով դիմել Արային, չէ՞ որ նա իր աչքերով տեսաւ յանցանքը, դաւաճանութիւնը, և նոյն իսկ պատրաստ է սպանել նրան, ոչնչացնել: Այդ, շատ դժուար իրականանալի միտք է, ցնորք: Ուրեմն պէտք է ուրիշ կերպ մըտածել: «Հրաչեան, Հրաչեան միայն կարող է հաշտեցնել ինձ Արայի հետ», մտածեց նա: Նախ պէտք Հրաչեայից ներողութիւն խնդրել, արժանանալ թողութեանը, որպէսզի նա էլ իր կողմից համոզէ ընկերոջը:

Մի օր նա Նադեային ուղարկեց նրա մօտ և յայտնելով իր գրութիւնը, խնդրեց զալ այցելել: Բայց Հրաչեան թքով և զզուանքով միայն պատասխանեց: Միքանի անգամ չուրին դիմեց նրան, կանչեց. նոյն իսկ մօրն էլ ուղարկեց, բայց Հրաչեան քարասիրտ էր դարձել նրա վերաբերմամբ:

Նա փորձեց Արուսեակի միջնորդութեամբ Արայի բարկութիւնն անցկացնել: Բայց այդ էլ իգուր: Արան խորին յանդիմանօք իմտ ուղարկեց Արուսեակին:

Օրերն անցնում էին: Հուրին դալիանում էր, որպէս ծառիցը կտրած մի ճիւղ: Իսկ Գալստեանը շնորհիւ բժշկի եռանդուն ջանքերի, և ընկերների մխիթարանքի և փայփայանքի, առողջանում էր: Նա երբեմն շրբերը հագնում էր և տանը շրջում: Բայց դեռ գտնուում էր նոյն կմախքացած գրութեան մէջ թուխ-կարմիր գոյնն իսպառ ոչնչացել էր նրա երեսի վրայ:

Հուրին, ժամ առ ժամ դէպի ֆիզիքական անկումն էր դիմում, չը նայած, որ բարոյապիս, բարձրանում էր: Սկզբներում հաղիւ շաբաթուայ ընթացքում երկու-երեք անգամ կարողանում էր ուսումնարան երթալ, բայց վերջն ընկաւ անկողին: Տեսնելով, որ կողմնակի ջանքերն իզուր են, նա վճռեց անձամբ մի նամակ գրել Արային:

Մի օր նա նստեց անկողնում և դողդոջուն ձեռքով սկսեց գրել: «Գուցէ չընդունէ, տատանում էր նա, գուցէ կարծէ, որ ես դարձեալ նոյնն եմ, որ դարձեալ ուզում եմ խաբել նորան: Ո՞հ, Տէր իմ Աստուած, միթէ այս էիր վիճակել ինձ»:

«Սիրելի Արա!

Ես մեղաւոր եմ քո առաջ. ես մի անարժան աղջիկ եմ: Դու ինձ սիրեցիր, տանջուեցիր, բայց ես քեզ խարեցիր: Այժմ զղջում եմ անցեալս ի սրտէ, ներիր ինձ և ընդունիր իբրև քեզ պաշտողի և սիրողի: Քո պատասխանից է կախուած իմ նուազած կեանքը. — քո «այո»ն ինձ կը բժշկէ, իսկ «ոչ»ը... ոհի... գուցէ գերեզման իցեցնէ: Եթէ երկրորդ անգամ տեսնես ինձ ուրիշի հետ, դաւաճանելիս, ատըրճանակի հարուածով փոխարինիր սէրդ: Ա՛խ, սիրելիս, փափկացրու սիրտդ, խղճա ինձ՝ քո սիրած Հուրիդ:

Հուրի Բաբալեան»:

Նադեան պոստը ձգեց այս նամակը, որ և բատացաւ Արան:

— Անզգամ, կամենում ես կրկին խաբել և վերջին հարուածը տալ ինձ գոյն Արան կարդալով:  
«Բայց գուցէ սրտանց զղջում է, մտածեց նա մի փոքր հանդարտուելով: Հապա այն բագուկները, որ գրկել էին նրան... ոչ, ոչ խաբում է, պղծում է սէրը, դաւաճանում է, արժանի է տանջանքների»: Վերջին խօսքերը բաւականին լսելի կերպով արտասանեց նա և վեր կենալով տեղից սկսեց արագ-արագ շրջել սենեակի մէջ:

Ահա նա նստեց գրասեղանի մօտ, արկղից հանեց մի թերթ թուղթ, վերցրեց գրիչը և սկսեց գրել: «Բաւական է, որքան խեղղեցի իմ մէջ սիրտս ճնշող մտքերը» ասաց նա թանաքը թաթախելով: Այդ րոպէին ներս մտաւ Հրաչեան: Երան, տեսնելով նրան, գրիչը վայր դրեց և անմիջապէս արկղիցը հանելով Հուրիի նամակը տուեց նրան: Նա կարդաց և լուռ կերպով ծալծլց նամակը:

— Տեսնում ես, Հրաչեայ, այդ գարշելին դեռ անկողնու միջից անգամ չէ դադարում խոցել սիրտս:

Հրաչեան լուռ էր և ոչինչ չէր պատասխանում: Նամակի բովանդակութիւնը մեղմացրեց նրան: Նա հասկացաւ, որ նամակը Հուրիի զգացմունքներն են արտայալում, և այն էլ փոխուած, զտուած զգացմունքները: Նա, որ իր կործանիչ ընթացքը լաւ գիտենալով, իր մատաղ կրծքի թունաւոր լինելը լաւ իմանալով, որոնց վախճանը սառն գետնափորն է և որ առաջ գերեզմանի անունը լսելով հեղնաբար ծիծաղում էր, այժմ ինքը խոստովանում է, որ գերեզման է իջնե-

լու և սոսկում է, ասելով, որ գուղէ Արայի՝ այդ չարքաշ երիտասարդի «այս»ն կը փրկէ նրան։ Նրա խիզը զարթել էր։ Նա ցանկացաւ անմիջապէս գնալ չուրիի մօտ, տեսնել նրան, լոյս տալ, և Արային համոզել չուրիի հոգով վերածնուելը։

Արան, ընդհակառակն, բորբոքուեց։ Բոպէապէս պատկերացաւ իր առաջ չուրիի հետ անցրած օրերը, ապա նրա դաւաճանութիւնը, նամակները, ուրիշների հետ համբոյրները. ահա այս բոլորը գրգռեցին նրա բարեկութեան, վրէժխնդրութեան և պատուի զգացմունքները։ Նա այժմ նմանում էր մի հրաբուխի, որ յանկարծ ժայթքելով, սկսում է հաւաքուած բոլոր ճընկող իրերը դուրս շպրտել մեծ ուժգնութեամբ։

— Նա իմ սէրս կըքով և վաւաշոտութեամբ փոխարինեց, շարունակեց Արան։ Նրա բոլոր խօսքերը, սիրային հայեացքները և համբոյրները կեղծ են եղել։ Միթէ նա չը զիտէր, որ ես սիրում էի նրան իմ ամբողջ չութեամբ, նուիրուել էի նըրան, ինչու սկզբից չասաց, որ ինքը չը զիտէ սիրել և դիմակաւորելով, ինձ այս օրին հասցրեց։ Ո՛հ, նրա սէրը փուշ ու տատասկ է դարձել և անդադար ծակոտում է մատաղ սիրտս։ Այժմ ուղում է հաւածակոտում էլ տանջուում է. ախ, դու խարտախն…

Նա լռեց և սկսեց շրջել սենեակում։ Հրաչեան ծխախոտը հանելով զրպանից և կպցնելով, ասաց.

— Բաւական է, նրա, հանգստացիր. նորից կը հիւանդանաս։ Բայց ինչու ես կարծում, որ այս նա-

մակն էլ կեղծ է, զոնէ ես կարծում եմ, որ արդէն չուրին նախկինը չէ։ Այս քանի որ է, նազեան և Արուսեակը դալիս են ինձ մօտ և նկարագրում նրա վիճակը։ Մարդկային խղճի ընդդէմ կըլինի անուշադիր թողնել նորա զղացած սրտի արտասուրքները։ Հանդարտուիր, սիրելիս, եկ գնանք տեսութեան։

— Գնանք, և դու ասում ես գնանք… Ո՞ւր մնաց նրա երդումը այն խորհրդաւոր գիշերին։ Նա իմ իդէալն էր, իդէալը, հասկանում ես հրաչեայ, որին ձգտում էի գիշեր և ցերեկ, թէ քուն և թէ արթուն, ես նրան ընդունեցի իբրև անբիծ կոյս, որ իմ սուրբ սէրս գեռ անարժան էի համարում նրան… Հապա այն օրուայ բազմւկները… համբոյրը… Թող տայ իմ պատիւս, սէրս, թող վերադարձնէ ինձ, եթէ ոչ…

Նա բռունցքով ուժեց զարկեց սեղանին և կանգնած մնաց տեղում։

— Անցածն անցաւ, սիրելիս. չէ որ ես աւելի էի ատում նորան, նախատում և գատապարտում, բայց մեր պարտականութիւնն է ներել զղացողին։ մոռացիր ամեն ինչ, հաւատացած եղիր, որ այսուհետեւ նա քեզ կը գնահատէ և աւելի կը սիրէ, քան թէ դու էիր սիրում նրան։ Զէ որ, Արա, դու այդպէս քարասիրտ և վրէժխնդիր չէիր։ Եկ, եկ, սիրելիս, մեղք է, նա տանջուում է, գնանք տեսնենք։

— Չեմ կարող, ասաց Արան ոտը զարկելով գետին։

Հրաչեան այլես չստիպեց, զիտենալով, որ կա-

րող է աւելի զայրացնել: Նա վերցրեց գլխարկը և  
հրաժեշտ տալով, ասաց.

—Գործիցս յետոյ պիտի գնամ նրան տեսնելու:  
Ես իմ աչքերով, ականջներով և սրտով կը հա-  
մոզուեմ, ապա քեզ ճիշտը կասեմ: Յտեսութիւն:

Նա դուրս ելաւ. Արան ընկղմուեցաւ զանազան  
խառնիփնթոր մտածմանց մէջ:



XVX

Աշուն է: Բնութիւնն սկսում է մտնել ձմեռ-  
նային խոր քունը: Ճրջակայ լեռներն և դաշտերը  
կորցրել են իրենց կանաչ գոյնը և գեղնել: Ֆառնե-  
րը տերևաթափ եղած, լուռ ներհում են: Թուչուն-  
ներն արդէն չուել են տաք երկրներ, իսկ մնացած  
ներն էլ օրէցօր երամ-երամ փախչում են ցըտից:  
Ճանձերը, միջատներն և սողունները վաղուց պա-  
տրսպարուել են իրենց որջերում: Մարդիկ վառելիքի  
և պաշարեղէնի պատրաստութիւն են տեսնում ձրմ-  
րան դիմաւորելու համար:

Օդը ցուրտ է և սառն: Բոլորը սկսել են հագ-  
նել տաք շորեր և վերարկուներ: Այս ոչ մի տեղ  
դուռ կամ պատուհան բաց չի գտնուի:

Ծածկուել են և բարալեանների դռներն ու  
պատուհանները: Միայն երեմն-երեմն դուռը մի  
առանձին չարագուշակ ճոճուցով բացւում և խրփ-  
ւում էր: Դրացի կանայք, երեմն ուսումնարանի  
աշակերտուհիներ, մերթ կառքով այցելող մի սեւ-  
հեր պարոն ներս էին մտնում և դուրս դալիս յու-  
սահատ դէմքերով:

Հուրին անյուսալի դրութեան մէջ էր: Բժիշկն  
աշխատում էր իր մի քանի կաթիլ գեղով մաքառել  
հուրիլ աւերիչ տկարութեան դէմ: Թշուառ Հուրի.  
Քեզ վիճակեցիր զոհ գնալ իզուր:

Նա պառկած էր փոքր սենեակում, պատի տակ

զրած մահճակալի վրայ: Նա այնպէս էր նիշարել,  
որ կարելի էր ճշտութեամբ համարել նրա ոսկոռնե-  
րը: Գոյնը բոլորովին գեղին էր. աչքերը կապտել և  
սաստիկ խորն էին ընկել, չը կորցնելով սակայն, իրանց  
կրքոտ և խարուսիկ հայեացքը: Այտերը բոլորովին  
հալուել էին, մաշկն էր փոխարինում նոցա: Ոյժերը  
կատարելապէս սպառուել էին և նա հաղիւ էր կա-  
րողանում մի կողմից միւս կողմ դառնալ: Կուրծքն  
իջել էր դէպի ներս: Կոկորդը բունուել էր և հիւան-  
դը շնչելիս ակամայ խուսում էր և շարունակ հա-  
զում: Յաճախ արիւն էր թքում բերանից:

— Նադեա, յանկարծ կոչեց նա, շուտ, շուտ  
շուտ, կանչիր... թէ չէ... մե...

Նա արտասանում էր անկապ բառեր: Մայրը,  
որ նստած էր դստեր անկողնու մօտ և շարունակ  
հառաջում էր, սկսեց ուշադրութեամբ լսել չուրին  
բացականչութիւնները: Մզկտում էր նրա ծնողական  
սիրտն իր գեռահաս զաւակի ոչնչանալու համար:  
Բայց նրան անհասկանալի էր չուրին վաղաժամ տը-  
կարութիւնը և դէպի գերեզման դիմելը: Նա գըտ-  
նում էր, որ մի մեծ զաղտնիք կայ այդ բանում, որն  
անպատճառ առիթ է դարձել այս դրութեան: Ճատ  
անգամ նա հետաքրքրուել է, փաղաքշանքով հար-  
ցըրել չուրին, որ խոստովանէ ամեն ինչ, բայց չու-  
ցըրել չուրին, ոչ մի բառ անգամ չի ասել: Ապա նա կամեցել  
քին ոչ մի բառ անգամ չի ասել: Ապա նա կամեցել  
է նադեայից և Արուսեակից տեղեկանալ, բայց իզուր,  
որովհետեւ չուրին շարունակ խնդրում էր նոցա, ո-  
չինչ ըլ հաղորդել մօրը:

— Ախ, Տէր Աստուած, եարաբ ինչն է սրան էս  
օրը գցել, եարաբ ով է պատճառ դարձել: Ո՞ւմ կան-  
չենք, չուրի ջան, ասա, կանչել տամ, դարձաւ նա-  
հիւանդին:

Բայց հիւանդը ոչինչ ըլ պատասխանեց:

— Հալբաթ մեղաւոր եմ, Աստուած, որ էս ցա-  
ւերով էրում, խորւում եմ, երես քու ոտի տակին:  
— Քուր, դարձեալ կոչեց հիւանդը:

Իսկոյն այդ կարճ սեւամազ և թուխ դէմքով  
կին կոչուած արարածը գիմեց դէպի պատուհանը,  
որտեղ ջրամանն էր դրած, և լցնելով մի բաժակ՝  
բերեց, մօտեցրեց հիւանդի շրթունքներին: Այդ բո-  
պէին ներս մտաւ նադեան, բերելով բժշկի նշնակած  
դեղերը: Նա շնչասպառ ներս ընկաւ, անմիջապէս  
կաթեցրեց գեղը մի բաժակ կաթի մէջ և տուեց  
քրոջը: Չուրին խմելուց յետոյ հարցրեց նրան.

— Տեսմբ:

— Այս, այս, տեսայ, գալու է:

— Ա՛յս, ուր է, շուտ... գուցէ խարի...

— Նադեա, ում է ուզում աղջիկս, զնամ ես  
կանչեմ, ախր ով է էդ անստուածը, թող դայ էլի:

— Ճաշեալին է ուզում, ասաց նադեան:

— Նա էլ վախտն է զտել խուզելու, հոգի  
չունի:

— Մենակ պիտի գայ, հարցրեց չուրին:

— «Կա» էլ հետը պիտի գայ, չուրի ջան, դու  
հանգստացիր:

— Ե՞ս, տէր թագաւոր Աստուած, եարաբ էս  
ինչ հող էր, որ էկաւ զլխիս, ծնկներին էր զարկում  
մայրը և անձայն հեկեկում:

Մթնեց: Արագը վառեցին: Հիւանդն հետզհետէ  
վատանում էր և կորցնում գիտակցութիւնը: Նա ե-  
րեք օր ոչինչ չի կերել և չի էլ պահանջում:

Տիրեց րոպէական լուռթիւն: Նադեան և մայ-  
րը նայում էին չուրիին և աչքերով հետևում նրա  
շնչառութեանը: Լսելի էր միայն ժամացոյցի պար-  
բերական չլսկչիկոցը և ինքնաեռի խուլ խշխշոցը:  
Յանկարծ դուռը ճռճռոցով բացուեցաւ և ներս մը-  
տաւ Հրաչեան ձեռին բունած մի արկղիկ խմորեղէն:

— Պէտք արի, որդի, է, ուր մնացիր, տես մի  
ինչ օրումն է չուրիս, տես, խղճա, որդի:

Հրաչեան փշաքաղուեց: Նա անձայն մօտեցաւ  
չուրիի անկողնուն, և նայելով նրան, իսկոյն ար-  
տասունքի կաթիլներ երևացին նրա աչքերին: Մի-  
թէ չուրին էր պառկած նրա աչքերի առաջ: Ուր  
է այն գեղեցիկ, նազելի աղջիկը. ուր է նրա քաղցր  
ժպիտը: Նրա փոխարէն այժմ պառկած է մի կմախք,  
մի զարհուրելի դէմք:

— չուրի, չուրի. ինչ է պատահել, չուրի, խօ-  
սեց նա բարձրաձայն:

Չուրին լսելով Հրաչեալի ձայնը, կարծես ըս-  
տափուեց և ապշած նայելով նրան, ասաց թոյլ  
ձայնով:

— Հրաչեան, միթէ եկել ես, ուր է Արան, նա  
էլ կը գայ:

— Կը գայ, կը գայ, պատասխանեց Հրաչեան  
նայելով Նադեալին:

— Հիմա էլ չի գայ, ասաց Նադեան ձեռքով  
ցոյց տալով չուրիին:

— Նա էլ հիւանդ պառկած է, ասաց Հրաչեան:

Տիրեց լուռթիւն: Արագը աղօտ կերպով լուսա-  
ւորում էր սենեակը: Աառագայթներն, ընկնելով չու-  
րիի դժողոյն երեսի վրայ, փայլեցնում էին: Դուրսը  
սաստիկ ցուրտ և մութ գիշեր էր: Քանի սաստկա-  
ցել էր և փչելով դռան ու պատուհանների ճեղքե-  
րից, ոռնում էր, սուլում, իր ձայները խառնելով  
չուրիի տնքոցի և խուլ հառաջանքների հետ:

Բաւական ժամանակ անցաւ: Հրաչեան հաղաւ  
վերարկուն, և վերցնելով զլխարկը, կամեցաւ տուն  
գնալ, խոստանալով առաւօտեան Արային բերել: Այդ  
րոպէին չուրին սկսեց զառանցել: Նա արտասա-  
նում էր անկապ և անհասկանալի բառեր: Հրաչեան  
հետաքրքրուելով, թէ ինչ մտքեր աւելի տանջում  
են նրան, կրկին նատեց իր տեղը և սկսեց ուշա-  
գրութեամբ լսել:

— Արա, ես... այս... սի... հա... բում եմ...  
քեզ. խա... բեցի... դաւաճ... այս... նոքա... մե-  
ղա... Նադեան մայրս... էլ...

Մայրը լսելով իրենց անունները, շունչը ներս  
քաշեց և ականջը մօտեցրեց չուրիին, որպէսզի ոչ  
մի բառ լսողութիւնից բաց չը թողնէ:

— Ներողու... թիւն.,. հաւատա... Հրաչեայ  
սիրոս ցաւում է...

Նա վերջին խօսքերից յետոյ սկսեց շուռ ու  
մուռ գալ անկողնում տնքտնքալով: Զերմը սաստ-  
կանում էր և աւելի անհանգոտացնում տկարին:

— Անխիղճներ, շարունակեց նա զառանցել.  
մայրիկ, մայրիկ, յանկարծ կանչեց նա:

— Ի՞նչ է, հոգիս, չուրի, էստեղ եմ, մօտդ եմ,  
բռնեց նրա ձեռքը մայրը:

Հուրին աչքերը բացեց և սկսեց նայել չորս  
կողմը ապուշի նման:

— Զուր, ասաց նա:

— Վնաս կը տայ չուրի, շատ մի խմիր, գեղ  
ընդունիր ջրի տեղ, ասաց Հրաչեան ձեռքը դնելով  
նրա ճակատին:

— Բերանս ալրուեց, ջուր, պահանջեց չուրին:

— Ախչի, ինչ ես հայվանի պէս կանգնել, ջուր  
բեր, չն իմանում, դարձաւ մայրը Նաղեալին, որ  
չուրիի գլխավերեւում լուռ կանգնած, մտածում էր:  
Ի՞նչ էր մտածում նա: — Նա էլ աշխատում էր այս  
լոլորի գաղտնիքը և պատճառները գտնել: Եւ զը-  
տաւ: — Չուրիի անպատշած կեանքը, երեկոյթները.  
սիրային վայրահաչութիւնները ամեն մի պատահող  
տղայի հետ և այլ մանր մունր հանդամանքներ  
այս դրութեան հասցըին: Այդ բաւական չէ: Նա  
մտածեց և իր մասին: Ինքն ինչով էր տարբերւում  
չուրիից: Զէ որ ինքն էլ նոյն ընթացքն ունի: Մի  
բոպէ երեակայեց, որ իրեն էլ այսպիսի վախճան է  
ուպասում: Նա սարսուռ զգաց ամբողջ մարմնում և  
մի դառն հոգւոց հանեց:

— Ջուտ, ախչի, ի՞նչ ես շշկլուել, բարկացաւ  
մայրը:

Նագեան շտապով բերեց մի բաժակ ջուր և մօ-  
տեցրեց չուրիին: Սա սկսեց խմել: Հրաչեան յետ քա-  
շեց բաժակն, ասելով, որ վնաս կը տայ:

Մայրը դուրս ելաւ խոհանոց, և նոքա մնացին  
երեքով: Փոքրները վաղուց քնած էին:

— Հրաչեայ, վաղն առաւօտ դեռ արի ինձ մօտ,  
ապա գնա Արայի մօտ, խօսեց չուրին թոյլ ձախով:

— Լաւ, լաւ, սիրելիս, դու հանգիստ քնիր, ա-  
սաց Հրաչեան:

— Դու ներեցիր ինձ, Հրաչեայ, Կարցրեց չու-  
րին, նայելով նրա աչքերին:

— Ներեցի, չուրի, անցածն անցաւ, աշխատիր  
առողջանալ և նոր կեանք, նոր ընթացք ընդունել,  
յորդորեց Հրաչեան:

— Ա՛խ, Հրաչեայ, այժմ գնահատում եմ ձեզ  
երկուսիդ, իսկ եթէ «նա» ըը ներէ, ախ, ի՞նչ պիտի  
լինի իմ վերջը, հեկելաց չուրին:

Այդ միջոցին ներս մտաւ մայրը, նա նսաց  
մահճակալի մօտ և սկսեց նայել հիւանդին:

Նրա աչքերին երեացին արտասունքներ: Նա  
հանեց թաշկինակն ու սրբեց աչքերը:

Մի փոքր յետոյ Հրաչեան դուրս ելաւ:

Նագեան էլ հետեւեց նրան:

— Տեսնում ես, Նաղինկա, ի՞նչ օլն ընկաւ չու-  
րին, ով է մեղաւոր: Կրկնելն աւելորդ է, դու այժմ  
հասկացած կը լինիս: Այսուհետեւ երկուսդ էլ կը խը-

բատուիք: Հապա ինչնվ է մեղաւոր խեղճ Արան. Է՛լ,  
բարի գիշեր, ասաց նա և դուրս գնաց փողոց:

Նադեան ոչինչ չը խօսեց, լուռ դուռը փակեց  
և շտապեց ներս:

Հիւանդի դրութիւնը դարձեալ վատացաւ: Ջեր-  
մըն սկսեց սաստկանալ և ջղաձզութիւն սկսուեց: Նա  
մերթ լալիս էր, մերթ լուռմ: Երբեմն զառանցում  
էր, արտասանելով անկապ բառերի կոյտեր: Թշուառ  
մայրն ու Նադեան ոտի վրայ կանդնած սպասաւո-  
րում էին նրան: Մայրն անընդհատ լաց էր լինում,  
զսպելով ձայնը, որ մի գուցէ լացը հիւանդի ական-  
ջին հասնի, որ իհարկէ վատ կ'սպդէր:

Ղամպարում եղած նաւթն հետզհետէ պակա-  
սում էր և լոյն էլ աստիճանաբար աղօտանում:  
Նոյնպէս և չուրիի կենաց նուազ ոյժերն էլ հետզ-  
հետէ ոչնչանում էին և նրա մատաղ կեանքը հանդ-  
չում էր:

Աքաղաղները կանչեցին, աւետելով, որ լուսա-  
բացը մօտ է: Մայրն ոտների ծայրերի վրայ քայլե-  
լով մօտեցաւ լուսամուտին և վարագոյը ծայրը բար-  
ձրացրեց, կամենալով իմանալ, թէ լուսանում է ար-  
դեօք: Բայց դեռ մութն էր: Նա զլուխը շարժեց և  
մի խուլ հոգւոց դուրս թռաւ նրա կրծքի խորքից:

— Ա՛խ, ինչ է լինելու վերջը, Աստուած:

Մի փոքր անցնելուց յետոյ լոյսը բացուեց: Դեռ  
չուրիի գիտակցութիւնը չէր վերադարձել: Նա արագ  
արագ շնչում էր, մեքենայական շարժումներ դոր-  
ծում և հաղիւ լսելի կերպով խօսում զառանցանքի

մէջ: Ահա ներս մտաւ Հրաչեան: Նա ուղղակի դի-  
մեց չուրիի անկողնու մօտ և կանչեց.

— չուրի, բարի լոյս, չուրի. ինչպէս ես, չես  
լսում. քնած է, մալրիկ, ինչ ես ասելու չուրի:

Բայց չուրին չէր լսում: Լսելու ընդունակու-  
թիւնը կորցրել էր: Հրաչեան Նադեային ասաց, որ  
խկոյն կը գալ և կը բերէ Արային, որ գուցէ նրա  
զալը սթափեցնէ չուրիին: Նա անմիջապէս դուրս  
ելաւ և շտապեց Արայի մօտ:

Անցաւ քառորդ ժամ: Չուրին դարձեալ զառան-  
ցեց, արտասանեց Արայի անունը և լացեց: Յանկարծ  
նա վերջին շարժումը գործեց և լուց: Կեանքի վեր-  
ջին կայծն էլ մարեցաւ նրա մէջ... Նա մեռաւ ան-  
նըլպատակ ապրելով: Խսկոյն սգատուն դարձաւ Բա-  
բալեանների տունը: Նրա մալրը բարձրածայն ող-  
բում էր, զոռում, մաղերը քաշքշում և ոտները զե-  
տին զարկում: Բայց արդէն ուշ էր: Նադեան ըն-  
կած քրոջ սառն զիակի վրայ, հեծկլտում էր աղի  
արտասունքով, թրջելով չուրիի անկողինը:

Պիքանի բոպէլից յետոյ ներս մտաւ Հրաչեան  
միայնակ...



xx

**Ա**ռաւտօտ է: Երկինքը ծածկուած է գորշա-  
զոյն ամպերով: Արևը դեռ իր երեսը չի ցոյց տուել,  
ու ամպերի տակով անում է իր սովորական շրջա-  
գայում:

Ս. Մ... եկեղեցու զանգերը, մելոդիական ձայնով  
հնչում էին պարբերաբար: Եկեղեցու դուռը բաց է,  
ներսը ննջեցեալի համար սեղան է պատրաստած:  
Միքանի պառաւ կանայք արդէն եկել, շարուել  
էին կանանց դասում և սպասում էին մեռելին:

Մինչ այդ, Բաբալեանների բնակարանի շուրջը  
խմբուած էր «Համքալը»։ Գուան մօտ կանգնած  
էր սղակառքը, որի վրայ քարշ էին արած երկու  
կանաչ պսակներ, մէկը չուրիի ընկերուհիների կող-  
մից, միւսը նրա քեռու կողմից։ Ներսում քահա-  
նաները վերջին ամբիծքն էին կատարում։ Տիկին Բա-  
բալեանը, Նաղեան, նրա ընկերուհիները և կանայք  
սղաղղեստներով կանգնած էին դադաղի շուրջն և  
լալիս էին, ողբում։ Հրաշեան էլ չուրիի զլիսավերն  
էր կանգնել և անթարթ աչքերով նայում էր նրա  
դալկացած դէմքին։ Ամբիծքը վերջացըին։ Մայ-  
րը, Նաղեան, վրայ ընկան դադաղին և լաց ու կո-  
ծով վերջին հրաժեշտն էին տալիս չուրիին։

Վերջապէս զազաղը դուրսը բերին։ Յուղարկաւորութիւնը շարժուեց։ Թագաղը կրում էին բացառապէս չուրիխ ընկերուհիները։ Դանդաղ քայլերով

տուած էին գնում: Երգեցիկ խումբն սկսեց երգել «աշխարհ ամենայն»ը: Ժողովրդի բազմութիւնը մեծ էր: Հատերը հետաքրքրութիւնից դրդուած, շատերը էր: Հատերը հետաքրքրութիւնից դրդուած, շատերը տեւից գնում էր սպակառքը, ձիաներին հաղցրած սև ծածկոցներ: Այդ անբան կենդանիներն իսկ, կարծես, ըմբունում էին շուրջը կատարուող երեսովը: Նոքա լուս, գլուխները խոնարհած քաղում էին և քաշում կառքը: Երբեմն-երբեմն ականջներն այս ու այն կողմն էին դարձնում, լսելու չուրի մասին խօսողների կարծիքները և յետելից եկող լալկան կանանց կոծը: Լուց երգեցիկ խումբը: Երաժշտութիւնը սլսեց նուազել սպահանդիսի տխուր քայլերգ: Նրա մելօդիական լուզիչ ձայնները զարկում էին մարդու սրտի լարերին և զգացնում: Յուղարկաւորութիւնը հասաւ եկեղեցի: Զանգերն սկսեցին արագ արագ հնչել, լայտոներով, որ ննջեցեալը բերին: Լուց երաժշտութիւնը: Փագաղը ներս տարան և դրին սեղանի վրայ: Ակսուց պատարազը: Գլխավերել կանդանած էին չուրի բնկերուհիները, չրաչեան, կանգնած էին չուրի բնկերուհիները, չրաչեան, նադիաները: Մալին անբնհատ լալիս էր բարձրաձայն: Հրաչեալի աչքերից երբեմն գլորում էին արտասունքի կաթիլները: Օրիորդներից շատերը լուս հեկեկում էին: Նադիան բոպէ առ բոպէ կանչում էր. «Չուրի ջան, ուր ևս գնում, չուրի»: Բայց չուրին քնած էր յաւիտենական քնով. նա չէր լըսում. նա արդէն լիովին վայելել էր այս աշխարհն և անցնում էր միւսը: Պատարազից յետոյ քահանան

մի երկու խօսք խօսեց։ որով ցանկացաւ յաւիտենական երջանկութիւն միւս աշխարհում։ Հրաչեան ուղում էր ճառ կարդալ, բայց նրա լեզուն ակամայից կապուել էր։

Թագաղը դուրս րերին։ Հնչեց երաժշտութիւնը։ Յանկարծ արևն ամսերը ճեղքելով, իւր երեսը ցոյց տուեց աշխարհին։ Օրը պայծառացաւ և լուսաւորուեց։ Կարծես, բնութեան սիրտը քարացել էր, ու նա սկսեց ժպտալ, ուրախանալ չուրիի թաղման վրայ։ Գերեզմանոցում որոշեալ կարգեց կատարելուց լեռոյ չուրիին իջեցրին սառն գերեզման և հողով ծածկեցին։ ամեն ոք աշխատում էր զոնէ մի բուռ հող լցնել նրա վրայ։ Մի ըսպէում չուրիի վրայ բարձրացաւ մի հողակրոյտ։ Ժողովուրիզը, թողնելով դժբաղդ չուրիին խաւար գերեզմանում, վերադարձաւ։

Արան հիւանդ պառկած էր։ Նա գեռ, երբ Հըրաշեան եկաւ տանելու նրան չուրիի մօտ, այն ժամանակ էլ անկողնումն էր գտնւում։ Նա մի բոպէ մոռացաւ ամեն ինչ, և խղճի ձայնից դրդուած կամեցաւ լսել չուրիի կոչք։ Նա փորձեց հագնուիլ, բայց ծնկները թուլացան և վայր ընկաւ։ Խոստացաւ, որ մի փոքր կազդուրուելուն պէս, կը դայ, կը ների չուրիին։ Բայց յանկարծ Հրաչեան եկաւ և հաղորդեց մահուան բօթը։ «Ուրեմն ես էլ մեռնելու եմ, Հրաչեայ, և ինձ նրա մօտ կը թաղէք», ասաց Արան լալով։

Թաղման օրը նա աշխատեց ոտքի ելնել, գնալ վերջին հրաժեշտ տալու չուրիին, բայց չը կարողա-

ցաւ։ Գեշերը յանկարծ նա վեր թռաւ անկողնից, կարծես, մի սյժ ստանալով, հագաւ շորերը, և գնաց գերեզմանատուն։ Նա խնդրեց պահապանին, որ ցոյց տայ այդ օրը թաղած օրիորդի գերեզմանը. և ընկնելով նոր հողակրոյտի վրայ, սկսեց աղեկտուր լալ և հառաչել։

— Ա՛յ, սիրելի չուրի, երազ է, թէ իրականութիւն։ Միթէ դու ես պառկած այս սկ հողի տալ, հրաժարուած ընդմիշտ աշխարհից և Արագից։ Ո՞վ է յանցաւոր, անս, աննման. դու էլ, ես էլ։ Չուրի, չուրի, ես էլ այլևս չեմ ուզում ապրել, կը զամ քեզ մօտ։ Միթէ այս էր վիճակուած մեզ, հառաչում էր զլուխը դրած գերեզմանի վրայ, ոհ, Աստուած, միթէ չէիր կարող քո ամենահզօր կամքով փոխէիր հանգամանքները։ Չուրի, լսում ես ձայնս. դու... հոդիս... զոհուեցիր և ես էլ կը զոհուեմ շուտով. ոհ, խօրտակուեց մեր սէրը, ջարդ ու փշուր եղաւ, աննպատակ անցաւ մեր կեանքը...»

Առաւօտը գերեզմանոցի պահապանները գտան նրան ուշաթափուած չուրիի գերեզմանի վրայ...»





H ApM.  
2-1231a

କର୍ମ୍ମ ପିଲାନ୍ତ ଟ 30 ଟ. ଖୁଲାଇ

ՀՀ Ազգային գրադարան



NL0323893

28612

2-1231a.

891.99  
L-58